THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
H. ACHARIAN INSTITUTE OF LANGUAGE

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

NEW WORDS

Volume 8

НОВЫЕ СЛОВА

Выпуск 8

Yerevan – 2023– Ереван

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գալստյան Ա.Ս., Բաղրամյան Վ.Մ, Հակոբյան Ֆ.Ա.,
Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի. Ա., Մկրտումյան Ա.Ա.,
Սարգսյան Ն. Մ.

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ը պրակ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյան
Գրախոս՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Գ. Թելյան

Նոր բառեր / Կազմողներ՝ Գալստյան Ա. Ս. (ղեկավար),
Ն930 Բաղրամյան Վ.Մ., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ. Կ., Մարգարյան Ի. Ա., Մկրտումյան Ա. Ա., Սարգսյան Ն. Մ. - Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2023. Ը պրակ.- 140 էջ:

«Նոր բառեր» մատենաշարի հերթական պրակում ներկայացվում են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ հանդիպած բառեր, որոնք վկայված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում: Բառարանը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառապաշարով հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-01-1
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2023

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառերի» Ը պրակը պարունակում է շուրջ 1000 բառամիավոր, որոնք գրանցված չեն 137-138 էջերում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Արվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են Ա. Ս. Գալստյանը, Վ. Մ. Բաղրամյանը, Ֆ.Ա. Հակոբյանը, Գ. Կ. Հովսեփյանը, Ի. Ա. Մարգարյանը, Ա. Ա. Մկրտումյանը, Ն. Մ. Սարգսյանը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.- ածական
անհնձնր. - անհանձնարարելի
արվ. – արվեստ, արվեստագիտություն
բ. - բայ
բժշկ. - բժշկական
բնստ. – բանաստեղծական
բսբ. - բուսաբանական
բրբ. - բարբառային
գ. – գոյական
գղտնտ. – գյուղատնտեսական
գրկն. – գրականագիտական
դրձվ. - դարձվածք
դիպվ. –դիպվածային
երժշտ. – երաժշտական
ժրգ. - ժարգոնային
իմ.նորբ. – իմաստային նորաբանություն
իրավ. – իրավաբանական
լեզվբ. –լեզվաբանական
խսկց. - խոսակցական
կենս. –կենսաբանական
կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ
հեգն. – հեգնական
հեռ - հեռուստատեսություն
հզվդ. – հազվադեպ
հմց – համացանց

հոգբ. - հոգեբանական
հպվ. – հապավում
հրկտր դ. – հարակատար դերբայ
մարզ. – մարզական
մկբ. – մակբայ
մսնգ. - մասնագիտական
նբ. – ներգործական բայ
նվազափղքշ. - նվազափաղաքշական
շին. – շինարարական
պատմ. – պատմական, պատմագիտական
ռազմ. – ռազմական
սնոտ. - սնոտիապաշտական
տեխ. - տեխնիկական
տնտգ. – տնտեսագիտական
փխբ. – փոխաբերական
քիմ. - քիմիական
քղք. - քաղաքական

Ա

ԱԳՐՈԱՅԳԻ, գ. **Գյուղատնտեսական նշանակության այգի:** Նշվում է, որ Ադրբեջանում նախատեսվում է ներդնել մոտ 820 միլիոն ամերիկյան դոլար 45 «**ագրոայգու**» ստեղծման համար ....*(https://www.tert.am/am/news/2018/06/09/aliyev/2708816):*

ԱԳՐՈԱՆՏԱՌՏՆԿՈՒՄ, գ. (գղտնտ.): **Ագրոանտառներ տնկելը: Ագրոանտառտնկման** համար տնկիներ կարող է աճեցնել ցանկացած հողօգտագործող հանրապետության բոլոր համայնքներում *(ԹՍ,ՍԼ, էջ 51):*

ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Ագրարային (գյուղատնտեսական) արդյունաբերություն:** ՍԱԱՀ-ում պրակտիկայի կազմակերպումը սերտորեն կապված է **ագրոարդյունաբերության** հետ *(Զեռնարկ, էջ 43):*

ԱԳՐՈԲԱՐԻՔ, գ. **Գյուղատնտեսական բարիք:** «ՀԱՅԻԿԻ **ԱԳՐՈԲԱՐԻՔ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն *(Հմգ, https://old.aipa.am/u_files/file/Texekagir/2008_11_2.pdf):*

ԱԳՐՈԲԻԶՆԵՍ, գ. **Գյուղատնտեսական բիզնես:** Մասնավոր հատվածում ԱԶԲ-ն աջակցություն է ցուցաբերում է կոմունալ ծառայություններին և ենթակառուցվածքներին, ֆինանսական հաստատություններին և **ագրոբիզնեսին** *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԳՆԱՃ, գ. **Գյուղատնտեսական արտադրանքի գնաճ: Ագրոգնաճի** հիմնական պատճառը բուսաբուծության ոլորտում անցած տարվա անկումն է եղել *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԳՈՐԾԻՔ, գ. **Գյուղատնտեսության մեջ կիրառվող գործիք:** Ֆրանսիայի հայկական հիմնադրամը նախատեսում է ֆինանսավորել **ագրոգործիքների** արհեստանոցի ստեղծման նախագիծը *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԴԱՍԱՐԱՆ, գ. **Ագրոնոմիական ուղղվածության մասնագիտական դասարան:** Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեցին և համապատասխան որոշումներ ընդունվեցին քոլեջի առաջադիմությանը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, **ագրոդասարանների** կազմավորման նպատակով Տավուշում և Սյունիքում երկուական դպրոցների ընտրությանը, վերապատրաստումների և կարճաժամկետ դասընթացների պլանավորմանն առնչվող հարցեր *(Հմմ. https://anau.am/kayacav-rektorati-2023-i-arajin-nisty/):*

ԱԳՐՈԴՐՈՆ, գ.. **Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սարք՝ դրոն: Ագրոդրոնների** լաբորատորիան համալսարանի ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների և դասախոսների կողմից օգտագործվելու է ուսումնահետազոտական նպատակներով *(Հմմ, news.am):*

ԱԳՐՈԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ած. **Գյուղական՝ գյուղատնտեսական բնույթի զբոսաշրջությանը վերաբերող:** Վայոց Ձորում կստեղծվի **ագրոզբոսաշրջային** կենտրոն *(Հմմ, news.am):*

ԱԳՐՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղական՝ գյուղատընտեսական բնույթի զբոսաշրջություն:** Կարևոր նախաձեռնություններից է նաև **ագրոզբոսաշրջության** զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը *(Հմմ, news.am):*

ԱԳՐՈԶՐՈՒՅՑ, գ. **Գյուղատնտեսական հարցերին վերաբերող զրույց:** Բակունցի երկերի չորսհատորյակի չորրորդ հատորում տպագրված է գյուղատնտեսական գործունեությունը մեկնաբանող մեծաքանակ նյութ՝ պաշտոնական գրություններ, զեկուցումներ, **ագրոզրույցներ**, թղթակցություններ, հոդվածներ, նոթեր և այլն …. *(Հմմ, https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:*

Axel_Bakunts,_Collected_works,_Sovetakan_grogh_(%D4%B1%D5%AF%D5%BD%D5%A5%D5%AC_%D4%B2%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B6%D6%81,_%D4%B5%D6%80%D5%AF%D5%A5%D6%80,_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A3%D6%80%D5%B8%D5%B2).djvu/5):

ԱԳՐՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Գյուղատնտեսությանը՝ բնապահպանությանը առնչվող:** Պատրաստ է օժանդակել ուսումնասիրությանն անհրաժեշտ Հայաստանի մի քանի **ագրոէկոլոգիական** գոտիների և մոդելային յոթ հիմնական մշակաբույսերի ընտրության գործին *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղատնտեսական ընկերություն:** Ցուցարարները բողոքում են գյուղատնտեսական բիզնեսի և **ագրոընկերությունների** գլոբալիզացիայի դեմ, որոնք շուկային դուրս են մղում ֆերմերների տնտեսությունները *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղատնտեսության ոլորտը լուսաբանող լրագրություն:** Աշխարհում այսօր **ագրոլրագրությունն** օգտակար և գրավիչ ոլորտ է *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղատնտեսությանը վերաբերող խորհրդատվություն:** Բուհում նախատեսվող առաջիկա նախաձեռնությունների թվում առանձնացվել է **ագրոխորհրդատվության** էլեկտրոնային հարթակի ներդրումը *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԿԱՅԱՆ, գ. **Գյուղատնտեսական կայան:** Գյուղատնտեսական բոլոր ռեգիոններում պետք է ձևավորել գյուղատնտեսության սպասարկման **ագրոկայաններ** *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ, գ. **Գյուղատնտեսության ոլորտում գործող կենսատեխնոլոգիա:** Աշխատանքներ են տար-

վում կենսավերականգնման, դեղապատրաստուկների արտադրության, **ագրոկենսատեխնոլոգիայի** և ֆունկցիոնալ սննդի բնագավառներում *(Հմգ, news.am)*:

ԱԳՐՈԿԵՆՏՐՈՆ, գ. **Գյուղատնտեսական կենտրոն:** ՀՀ վարչապետի հուշամեդալով է պարգևատրել **ագրոկենտրոնի** տնօրենը *(Հմգ, news.am)*:

ԱԳՐՈԿԼԻՄԱՅԱԿԱՆ, ած. (գոտնտ.): **Ագրոկլիմային վերաբերող՝ հատուկ:** Կարող են փոփոխվել մշակաբույսերի աճի ու զարգացման փուլերը, **ագրոկլիմայական** շրջանացման սահմանները *(ԹՍ,ՍԼ, էջ 27)*:

ԱԳՐՈԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղատնտեսական կրթություն:** Հայաստանի համար գյուղատնտեսության ոլորտի և **ագրոկրթության** զարգացումը գերակա նշանակություն ունի *(Հմգ, news.am)*:

ԱԳՐՈՀՈԼԴԻՆԳ, գ. **Ագրարային հարցերով զբաղվող հոլդինգ՝ ընկերություն:** Այժմ պրակտիկան իրականացվում է գյուղատնտեսական ձեռնարկություններում, ֆերմաներում, **ագրոհոլդինգներում** *(Ձեռնարկ, էջ 37)*:

ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ագրարային գործունեություն ծավալող ձեռնարկություն:** Մագիստրանտները հետաքրքրությամբ բծանոթացան շրջանաձև տնտեսության սկզբունքով աշխատող **ագրոձեռնարկության** աշխատանքներին *(https://anau.am/porcusucum-artameti-shrjanadzev-tntesutyunum/)*:

ԱԳՐՈՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Գյուղատնտեսական ճարտարագիտությանը վերաբերող: Ագրոճարտարագիտական** լաբորատորիաների արդիականացման ծրագիրն էլ սպասում է իր հերթին *(Հմգ, news.am)*:

ԱԳՐՈՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գյուղատնտեսական ոլորտի մասնագիտություն:** Նախարարի տեղակալը մտահոգիչ է համարել, որ **ագրոմասնագիտությունների** տեղերը չեն համալրվում *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՄԱՐՔԵԹԻՆԳ, գ. **Մարքեթինգ գյուղատնտեսության ոլորտում:** Այս համատեքստում նա կարևորել է կապիտալի սուբսիդավորումը, գյուղտեխնիկայի պարկի թարմացումը, ոռոգման համակարգերի արդիականացումը, **ագրոմարքեթինգի** ուժեղացումը *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՄՇԱԿՈՒՄ, գ. **Գյուղատնտեսական արտադրանքի մշակում:** ԱԳ նախարարը շնորհակալություն հայտնեց **ագրոմշակման** ոլորտում UNIDO-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող շարունակական աջակցության համար *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՄՇԱԿՈՒՅԹ, գ. **Գյուղատնտեսական մշակույթ:** Այս հայտնագործության հեղինակը ԱՄՆ **ագրոմշակույթի** նախարարության հետազոտական կենտրոնի աշխատակիցն է *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՇՐՋԱՆԱՑՈՒՄ, գ. (գղտնտ.): **Տարբեր մշակաբույսերի աճեցման համար համապատասխան պայմաններ ունեցող շրջաններ որոշելը կամ տարբեր մշակաբույսերի տեղայնացում կատարելը:** .... **Ագրոշրջանացումից** կարող են դուրս մղվել մշակաբույսեր, կամ ներմուծվել նոր տեսակներ ու սորտեր *(ԹՍ,ՍԼ, էջ 27):*

ԱԳՐՈՈԼՈՐՏ, գ. **Գյուղատնտեսության ոլորտ:** Հայաստանի **ագրոոլորտը** զգալի ներուժ ունի, որից հնարավոր է նորացվող էներգիա ստանալ *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՏԵԽՆՈԼՈԳԻԱ, գ. **Գյուղատնտեսական տեխնոլո-**

գիա: Զգալի աշխատանքներ են տարվում կենսատեխնոլոգիաների և **ագրոտեխնոլոգիաների** բնագավառների զարգացման ուղղությամբ *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Ագրոտեխնոլոգիային վերաբերող:** Բուն միջոցառմանն ուղեկցել է զուգահեռ իրականացվող **ագրոտեխնոլոգիական** ցուցահանդեսը *(Հմգ, news.am):*

ԱԳՐՈՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. **Ագրարային քաղաքականությանը վերաբերող:** Գյուղատնտեսության տնտեսագիտության բնագավառում հատկապես պետք է արձանագրել անընդհատ փոփոխվող շուկայական պայմանները, արտադրական և տեխնիկական նորամուծությունները, **ագրոքաղաքական** պայմաններին հարմարվելու մեթոդները *(Զեռնարկ, էջ 92):*

ԱԴՐԲԵՋԱՆԱԲՆԱԿ, ած.**Ադրբեջանցիներով բնակեցված:** Սովորաբար սեպաձև խրվելով Հայաստանի տարածքում՝ **ադրբեջանաբնակ** գյուղերը հետագայում հայկական գյուղերի հաշվին ընդլայնվելու փորձեր էին սկսում *(Հմգ, news.am):*

ԱԴՐԲԵՋԱՆԱԳԵՏ, գ. **Ադրբեջանի գծով մասնագետ:** Շատ փոքր է հավանականությունը, որ Իրանն Ադրբեջանի դեմ ռազմական գործողությունների կգնա. **Ադրբեջանագետ** *(Հմգ, news.am):*

ԱԴՐԲԵՋԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ադրբեջանի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:** Ինչ վերաբերում է **ադրբեջանագիտությանը**, ապա պատերազմը ցույց տվեց, որ պետք է իմանանք հակառակորդի լեզուն *(Հմգ, news.am):*

ԱԶԳԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Ազգային հոգեբանությանը բնորոշ***:* Էթնոլեզվաբանությանը հետաքրքրում է ազգամշակութային և **ազգահոգեբանական** գործոնների փոխազդեցությունը .... *(ԱԿ, էջ 28):*

ԱԶԳԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Ազգային մշակույթին բնորոշ**: Տե՛ս ԱԶԳԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ-ի օրինակը:

ԱԼՏԱՀԱՐՈՒՀԻ, գ. **Կին ալտահար:** Հայ **ալտահարուհին** առաջադրվել է Grammy-ի *(Հմգ, news.am)*:

ԱՂԱՎՆԱՀԱՄԲՈՒՅՐ, գ. (դիպվ.): **Աղավնու համբույրի նման՝ ջերմ համբույր:** Երբ անբանականության աստվածուհին ասի և կամ ներա առաջարկած **աղավնահամբույրը….** *(Նորք, 2021, թիվ 1, էջ 95)*:

ԱՂԵՏԱՇՈՒՆՉ ած. **Աղետաբեր:** Ծերունական **աղետաշունչ** խորշակով ավերակված ու չիր դառած մարդ էր *(ՎՍ², էջ 118)*:

ԱՂՋԿԱՇԱՏ, ած. **Որտեղ շատ աղջիկներ կան:** ….Քաղաքապետը ծառերը կանաչ էր նկարել, ծաղիկները՝ բացվող, մայթերն՝ աղջկաշատ…. *(Նորք, 2020, թիվ 2)*:

ԱՄՊԱՓԵՏՈՒՐ գ. (փխբ.): **Փետրաձև ամպ:** Դեռ լույս էր. բայց երկնքում մոլորված մի քանի **ամպափետուրները** շառագունել էին…*(ԴՄ, էջ 39)*:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ, ած. (գղտնտ.): **Անասնաբուժական և սանիտարական:** Մեղվանոցի համար ստանալ **անասնաբուժասանիտարական** անձնագիր, որը հիմք և իրավունք է տալիս սեփականատեր մեղվաբույծին ունենալ անասնաբուժական վկայական …. *(ԱՄ, ՍՄ, էջ 92)*:

ԱՆԳԼԻԱՏԱՌ, ած. **Անգլերեն տառերով գրված:** Մի՞թե խղճի խայթ չունեցաք, երբ հրամայեցիք ձեր նման մի անխիղճ մարդու…. միակ **անգլիատառ** թերթում հայտարարություն տա …. *(ԳՅ, էջ 55)*:

ԱՆԴՆԴԱՃԵՂՔ, գ. **Անդունդի, վիհի բացվածք՝ ճեղք:**

….Պոեզիան…. կռիվ-կռիվը անիծում էր, իսկ ամբոխներին **անդնդաձեղքը** ուղարկում….*(ԳՍ, էջ 58):*

ԱՆԴՐԱՆԱՏՈԼԻԱԿԱՆ, ած. **Անատոլիայից այն կողմ գտնվող: Անդրանատոլիական** գազատարի կառուցման շնորհիվ գազը կարտահանվի եվրոպական շուկաներ *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐԱՐԱՔՍՅԱՆ, ած. **Արաքսից այն կողմ գտնվող:** Բարձունքների նվաճում, բնակավայրերի գրավում **անդրարաքսյան** գոտում: Ակնհայտ է, թե ինչին են միտված իրանական այս զորավարժությունները *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐԲԱՅԿԱԼ, գ. **Բայկալից այն կողմ:** Նրա ռուսական ակտիվների մի մասը գտնվում է **Անդրբայկալի** հանքավայրերում *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐԵՎՐՈՊԱԿԱՆ, ած. **Եվրոպայից այն կողմ գտնվող:** Համաձայնագիրը նոր հնարավորություններ կստեղծի **անդրեվրոպական** և անդրասիական երկաթուղային միջանցքները միացնող ԲԹԿ երկաթուղով բեռների փոխադրման առումով *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ, ած. **Վերժամանակային, ժամանակից դուրս գտնվող:** Կան նաև մարդիկ, որոնց համար մի անգամ ձեռք բերվածը (օրինակ՝ սիրով ամուսնությունը) **անդրժամանակային** արժեք է *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ, ած. **Խաղաղ օվկիանոսից այն կողմ գտնվող:Անդրխաղաղօվկիանոսյան** գործընկերության (ԱԽԳ) համաձայնագիրը չի կարող շարունակվել առանց ԱՄՆ-ի մասնակցության *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐՀՈՍՈՒՄ, գ. **Դեպի դուրս հոսելը:** Հիշիր ալիքի սկզբունքի մասին՝ ալիքը մոտենում է և հեռանում: Կան առհո-

սումներ և **անդրհոսումներ.** ոչինչ ստատիկ չէ: Մենք ապրում ենք ընթացքի և շարժումների աշխարհում *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐՀՈՐԻԶՈՆԱՅԻՆ, ած. **Հորիզոնից այն կողմ գտնվող:** Ռազմական գերատեսչությունը մշակում է **անդրհորիզոնային** ռադարներ և սենսորներ *(Հմգ, news.am):*

ԱՆԴՐՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Բացատրությունը օրինակում**: .... ԶԼՄ-ներում այս կամ այն խմբի ներկայության բացառումը կամ միայն խիստ կարծրատիպային ներկայացումը .... նա անվանում է «**անդրներկայացվածություն**» *(Ատ. խոսք, էջ 22):*

ԱՆՀԵՏՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Անհետք լինելը:** Գեղեցկության ապարդյունությունը,, իր մարմնով անցնող գեղեցկության **անհետքությունը** .... սա էր սիրում Քաշիվագին *(ՅՄ, էջ 134):*

ԱՆՁՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Անձնական դարձնելը, անձնականի վերածելը:** Նկատելի է դառնում **անձնականացման** տարրի ընդգծումը պատմության ճշմարիտ ժամանակագրության համեմատ *(ՍՍ[1], էջ 14):*

ԱՆՑՈՒՄԱՔԱՐ, գ. **Որոշակի վայրերում տեղադրված՝ անցումը դյուրացնելուն ծառայող քար:** Բարձրացնում էինք մարգագետնի մարմարյա **անցումաքարերը** և ուսումնասիրում դրանց տակ բնակվող միջատներին *(ՆԳ, էջ 172):*

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՑՑ, ած. **Աշխարհը կառուցող՝ շենացնող:** .... Անտրոհելի է նրանց միացնող կապը, ինչի վկայությունն են արդի **աշխարհակառույց** իրադարձություններում կրոնի և Աստծո վերածնունդը *(ՍՍ[1], էջ 69):*

ԱՇԽԱՐՀԱՎԱԽՃԱՆ ած. **Աշխարհակործան:** Սա Լոս Անջելեսի պատմական երկրաշարժն է. **աշխարհավախճան**… *(ԴՄ,*

էջ 111):

ԱՊԱԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ, գ. **Արգելադրումից հանելը:** Հարկադիր կատարումն ապահովող ծառայության **ապաարգելադրումն** այսուհետ ավտոմատացված է *(Հմգ, news.am):*

ԱՊԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Արդյունաբերականացումից զրկելը:** Տեղի է ունենում տնտեսության աստիճանական **ապաարդյունաբերականացում** *(Հմգ, news.am):*

ԱՊԱԳԱՅԱՄԵՏ, ած. **Ապագային միտված**: Մեծամասնությունը պաշտոնական քաղաքականությունում **ապագայամետներ** են…. *(ԲՆ, էջ 129):*

ԱՊԱԾԱԾԿԱԳՈՒՄ, գ. **Ծածկագրի գաղտնազերծում: Ապածածկագրման** դեպքում ֆայլը պահպանվել է տպիչի հիշողությունում, ինչը թույլ է տվել հսկողություն իրականացնել նրան միացված համակարգչի, իսկ հետո ամբողջ ցանցի նկատմամբ *(Հմգ, news.am):*

ԱՊԱԿԱՌՈՒՑԵԼ, բ. **Քանդել, ապասարել:** 1997-ին գործողությունների հստակ պլան կար. **ապակառուցել** բանդիտային կապիտալիզմն ու կառուցել…. հզոր տնտեսություն *(ԲՆ, էջ 32):*

ԱՊԱՍՏՐԿԱՑՆԵԼ, բ. **Ստրկացած վիճակից հանել: Ապաստրկացնել** ժողովրդին, նրան իրեն իրացնելու հնարավորություն տալ. դա է ամբողջ բանականությունը *(ԲՆ, էջ 188):*

ԱՊՐԻԼՔՍԱՆՉՈՐՍՅԱՆ, ած. **Ապրիլի քսանչորսին առընչվող՝ վերաբերող:** …. Բացման խոսքը փոխարինեց ավանդական դարձած «**ապրիլքսանչորսյան** ելույթին» *(Ատ. խոսք, էջ 97):*

ԱՌԱՆՁՆԱՆՇԵԼ, գ. **Առանձին՝ հատուկ նշել՝ ընդգծել:** Հեղինակային ընծայականում Խանջյանը **առանձնանշում** է Գրոֆորի խոսքերը *(ՍՍ՚, էջ 287):*

ԱՌԱՋՆԱԵԼՈՒՅԹ, գ. **Առաջնային ցուցադրություն:** Հայկական թվային առցանց ամսագրի **առաջնաելույթը** կկայանա Ստենֆորդի համալսարանում *(Հմգ, armenpress.am):*

ԱՌԱՋՆԱԿՈՒՐԾՔ, գ. **Միջատների կրծքի առաջին հատվածը:** Թևավոր էգերի մարմինն ունի 1,1-1,7 մմ երկարություն, գլուխը և **առաջնակուրծքը** սև են, փորիկը դեղնականաչ է *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 159):*

ԱՌԱՍՊԵԼԱՊՈԵՏԻԿ, ած. **Առասպելական և պոետիկ:** .... **Առասպելապոետիկ** մտածողությամբ այն կարող էր փոխարինել արյանը *(ՌՆ[1], էջ 85):*

ԱՌԱՎԵԼԱՊԱՇՏՈՐԵՆ, մկբ. **Առավելապաշտ կերպով:** Մեր սուրճի բաժակները տարողունակ են ու վեց նմուշով էլ **առավելապաշտորեն,** ամբողջովին պահպանվել են *(ԳՍ, էջ 31):*

ԱՌՅՈՒԾԱՎԱՅՐԱԳ, ած. (բնստ.): **Առյուծի պես վայրագ:** Եվ հալածում էր նրանց ամբոխը **առյուծավայրագ** *(Նորք, 2021, թիվ 1, էջ 121):*

ԱՍՏՂԱԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ, գ. **Աստղալուսանկարչությամբ զբաղվող լուսանկարիչ:** Աշխարհի տարբեր երկրներից ժամանած **աստղալուսանկարիչները** ֆիքսել են այս իրադարձության տպավորիչ կադրերը *(Հմգ, news.am):*

ԱՍՏՂԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Աստղակենսաբանությանը վերաբերող:** Ուսումնասիրվում են կարմիր մոլորակի **աստղակենսաբանական** հնագույն միջավայրը, դրա մակերևույթի երկրաբանական գործընթացներն ու դրանց պատմությունը *(Հմգ, news.am):*

ԱՍՏՂԱՄԻՋՅԱՆ, ած. **Աստղերի միջև եղած:** Այդտեղ միավորվում են Արեգակի մագնիսական դաշտերի և **աստղամիջյան**

տարածության ուժային գծերը *(Հմմ, news.am):*

ԱՍՏՂԱՌԱՋԱՑՈՒՄ, գ. **Աստղերի առաջացում:** Ստացված տվյալների հիման վրա ցույց են տվել, որ **աստղառաջացման** գործընթացները կարող են ձգանի դեր խաղալ՝ դառնալով ձևաբանական փոփոխությունների պատճառ *(Հմմ, news.am):*

ԱՍՏՂԱՍՏԵՂԾ, ած. James Webb-ի լուսանկարը արվել է մոտակա ինֆրակարմիր լույսի ներքո և հնարավորություն է տալիս **աստղաստեղծ** այս տարածքում դիտել փոշուց այն կողմ եղած միջավայրը *(Հմմ, news.am):*

ԱՎԱՆԱԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավանակ բուծելը**: Դա հաստատվում է .... սեպագիր արձանագրությունների .... **ավանակաբուծության** մասին վկայություններով *(ՌՆ², էջ 21):*

ԱՎԻԱԱԿՈՒՄԲ, գ. **Ավիացիոն ակումբ:** Հինգ անհայտ անձինք **ավիաակումբից** թեթև շարժիչով օդանավ են առևանգել և կործանվել թռիչքից անմիջապես հետո *(Հմմ, news.am):*

ԱՎԻԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավիացիոն անվտանգություն:** Եվրահանձնաժողովը ռուսական ավիաընկերությանը ներառել է **ավիաանվտանգության** սև ցուցակում *(Հմմ, news.am):*

ԱՎԻԱԱՐՏԱԴՐՈՂ, ած. **Ավիացիոն արտադրանք թողարկող:** Ամերիկյան **ավիաարտադրող** ընկերությունը հայտարարել է, որ դադարեցնում է ռուսական ավիաընկերություններին պահեստամասերի մատակարարումը *(Հմմ, news.am):*

ԱՎԻԱԳՈՐԾ, գ. **Օդային ծառայություններ իրականացնող:** Վերջերս նշվեց Հայաստանի ՌՕՈՒ օրը. շնորհավորում ենք մեր գործընկեր **ավիագործներին** *(Հմմ, news.am):*

ԱՎԻԱԳՈՐԾԱԿԱԼ, գ. **Ավիացիայի գործակալ:** Տոմսերը կարող եք ձեռք բերել այցելելով կենտրոնական գրասենյակ

կամ **ավիագործակալներից** *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԳՈՐԾԱՐՔ, գ. **Ավիացիայի բնագավառին վերաբերող գործարք:** Մեծ **ավիագործարքը** պատասխան դարձավ Չինաստանի՝ մոտ ժամանակներս իր մարդատար ինքնաթիռները համաշխարհային շուկա դուրս բերելու ծրագրերին *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԳՐՈՀ, գ. **Ավիացիոն գրոհ՝ հարձակում:** Լեգենդների թվում է շիկակարմիր կատվի մասին պատմությունը, որը կանխազգում էր թշնամու **ավիագրոհները** *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԶԻՆԱՄԹԵՐՔ, գ. **Ավիացիոն զինամթերք:** Մեքենաները հիմնակմախքի վնասվածք և կառուցվածքի ջարդվածքներ չունեն, որոնք առաջացած լինեին **ավիազինամթերքի** պայթյունի հետևանքով *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Օդային ոլորտի իշխանություն:** Պակիստանի **ավիաիշխանությունները** որոշել են ևս մեկ օրով երկարաձգել երկրի օդային տարածքում թռիչքների արգելքը *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԼՐԱԿԱԶՄ, գ. **Ավիացիոն մեքենաների լրակազմ:**

Ինքնաթիռներից պահեստամասեր վերցնելը կապահովի շահագործման մեջ մնացած **ավիալրակազմի** թռիչքային պիտանիությունը *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱԽՄԲԱՎՈՐՈՒՄ, գ. **Ավիացիոն խմբավորում:** ՌԴ ՊՆ-ի **ավիախմբավորումը** շուրջօրյա Ղազախստան է տեղափոխում ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի ռուսական զորամիավորման ստորաբաժանումները *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱՄԵԽԱՆԻԶՄ, գ. **Ավիացիոն մեխանիզմ:** Փոքրագույն թերությունները, **ավիամեխանիզմների** մասերում խոռոչները

օդի փոփոխական լարվածության պայմաններում կարող են «աճել» և ավիաաղետի պատճառ դառնալ *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՄԻՋՈՑ, գ. **Օդային փոխադրամիջոց**: Դանդաղեցնում է վերգետնյա միջոցների տեղաշարժումը և թույլ չի տալիս օգտագործել **ավիամիջոցներ** *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՄՐՑԱՐՇԱՎ, գ. **Ավիացիոն մրցարշավ**: **Ավիամրցարշավի** մասնակիցների խումբը վայրէջք է կատարել երկրի արևմուտքում՝ Հարավային Սուդանի սահմանի մոտ *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՇԻՆԱԿԱՆ, ած. **Ավիացիոն մեքենաշինություն իրականացնող**: Իրանի նախագահն այցելել է իրանական **ավիաշինական** արդյունաբերական ընկերություն *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՇԻՆԱՐԱՐ, գ. **Ավիաշինարարությամբ զբաղվող**: Նա նաև մատնանշել է **ավիաշինարարների** և ավիաընկերությունների շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ած. **Ավիացիայի շինարարությամբ զբաղվող**: Ավիացիայի շինարարությամբ զբաղվող Ամերիկյան **ավիաշինարարական** Boeing կոնցեռնը նախատեսում է կրճատել հազար աշխատակցի *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՔԻՄԻԱԿԱՆ, ած. **Ավիացիայի միջոցներով քիմիական նյութերի կիրառմանը վերաբերող**: Ներկայումս Ծաղկաձորի անտառտնտեսության տարածքում **ավիաքիմիական** պայքարի արդյունավետության մասին դժվար է խոսելը *(Հմմ, news.am)*:

ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆ, գ. **Ավիացիոն օդերևութաբան**: **Ավիաօդերևութաբաններ**. Պարտքերը չվերադարձնելու դեպ-

քում «Արմավիան» չի թռչի *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավիացիոն օդերևութաբանություն:** Այս հանդիպումը եզակի առիթ է ոլորտի մասնագետների համար՝ քննարկելու և համագործակցության նոր ուղիներ փնտրելու **ավիաօդերևութաբանության** բնագավառում *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱՕՊԵՐԱՏՈՐ, գ. **Ավիացիոն օպերատոր:** Բրազիլիայի խոշորագույն **ավիաօպերատորը** երկարաժամկետ պայմանագիր է կնքել գերմանական Lilium ստարտափի հետ *(Հմգ, news.am):*

ԱՎԻԱՖՈԲԻԱ, գ. **Վախ ավիացիայից:** Այս վախը կարող է վերածվել պաթոլոգիայի, և այս դեպքում կզարգանա **ավիաֆոբիա** *(Հմգ, news.am):*

ԱՎՏՈԱՄՍԱԳԻՐ, գ. **Ավտոմոբիլների մասին ամսագիր:** Գիրքը.... միանգամից գրապահարան չի խցկում, թողնում է սեղանին՝ հոր **ավտոամսագրերի** վրա *(ԳՍ, էջ 14):*

ԱՎՏՈԲՈՒՍԱՎԱՐ, գ. **Ավտոբուսի վարորդ:** Աժ աշխատակազմի ղեկավարի տեղակալ է դարձել հյուրանոցի **ավտոբուսավարը** *(Հմգ, news.am):*

ԱՎՏՈԿՄԱԽՔ, գ. **Մեքենայի հիմնակմախք:** Իհարկե, մի բան պիտի անենք .... մետաղական ջարդոնի ու մեկ-երկու **ավտոկմախքի** հետ *(ԳՍ, էջ 18):*

ԱՏԱՄՈՒՂՂԻՉ, ած. **Ատամնաշարը՝ կծվածքը շտկելու հատուկ հարմարանք:** Ջոնաթանը նիհար դեռահաս էր, բերանում՝ **ատամուղղիչ** օղակ *(ՆԳ, էջ 165):*

ԱՐԱԲԱՊԱՐՍԿԱԿԱՆ, ած. **Արաբական և պարսկական:** .... Սկսեց երգել ու նվագել արդեն վրացերեն ու հայերեն, դրանով իսկ հայ և վրաց աշուղական բանարվեստը ազատագրելով

արաբապարսկական գերությունից *(ՍՍ[1], էջ 59):*

ԱՐԱՏԱԿԵՆՑԱՂ, ած. **Արատավոր կենցաղ ունեցող:** Հավերժության ուղևորը աղերսում է Վերին արարչագործին հայացքը ցած նետել և տեսնել **արատակենցաղ** հերձվածողների նենգադավ արարքները *(ՍՍ[1], էջ 307):*

ԱՐԴՅՈՒՆՔԱՀԵՆ ած. (Ճիշտ է՝ արդյունքահենք): **Արդյունքների վրա հենվող:** Արդյունքները և **արդյունքահեն** մոտեցումը որպես տեսլականի իրագործում *(Հմգ, bok.am):*

ԱՐԿԱԾՈՏ ած. (դիպվ.): **Որտեղ արկածներ են սպասվում:** Ռուսաստանի **արկածոտ** հեռուներում սեփական բախտը տաքարյուն նժույգի պես սանձած-հնազանդեցրած մեծ աճպարարը… *(ՎՍ[2], էջ 5):*

ԱՐԿԱՆՈՑԱՑԱՆՑ, գ. **Մեղվաբնտանիքի տեղափոխման ժամանակ փեթակի արկանոցին ամրացվող մետաղյա ցանց:** Մեր մեղվանոցում տարիներ առաջ որպես **արկանոցացանց** օգտագործեցինք փայլարից ցանցաթիթեղներ *(ԱԳ, էջ142):*

ԱՐՆԱՅՈՒՂԱԳՈՒՅՆ, ած. **Արյան և յուղի գույն ունեցող:** …. Առանց հանելու **արնայուղագույն** գոգնոցը՝ գնաց ընտրական հանձնաժողով ու թղթերը ներկայացրեց *(ՀԱ, էջ 39):*

ԱՐՏԱԴՐԱՎԱՅՐ, գ. **Արտադրական ձեռնարկություն:** …. Ուսանողների համար կազմակերպվում են մասնագիտական դասեր հենց **արտադրավայրում** *(Ձեռնարկ, էջ 58):*

ԱՐՏԱՀՈՐԴՈՒՄ, գ. **Դուրս հորդելը:** ….Մեծանալու է ջրով տարածվող հիվանդությունների ծավալվելու հնարավոր վտանգը՝ սառցային լճերի **արտահորդումից** առաջացած ջրհեղեղների ….հետևանքով *(Մեղ և Մյուլ, էջ 9):*

ԱՐՏԵՐԿՐԱՀԱՅ, ած. **Արտերկրում բնակվող հայ:** Մեր ազ-

գային ճակատագրի համար բախտորոշ զարգացումների այս փուլում Հայաստանի ու **արտերկրահայ** բոլոր առողջ ուժերից պահանջվում է հավաքական քաղաքական կամքի դրսևորում *(Հմգ, news.am):*

ԱՐՏԵՐԿՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտերկրում բնակվող հայություն:** Փորձ է արվել վախեցնել, լռեցնել և ապազաղութացման ազատագրական պայքարից հեռու պահել **արտերկրահայությանը** *(Հմգ, news.am):*

ԱՐՑԱԽԱԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ, ած. **Արցախի և Ադրբեջանի հարաբերություններին վերաբերող:** Հայ համայնքին հաջողվել է գերմանական առաջատար լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրել **արցախաադրբեջանական** շփման գծում տիրող իրավիճակին *(Հմգ, news.am):*

Բ

ԲԱԶՄԱԲՆԱԳԱՎԱՌԱՅԻՆ, ած. **Շատ բնագավառներ ընդգրկող:** Նմանատիպ խնդիրները դրդել են Չիլիի և Արգենտինայի կառավարություններին, ... ստեղծվեն **բազմաբնագավառային** համագործակցության խմբեր.... *(Սեդ և Մյուլ, էջ 23):*

ԲԱԶՄԱԿԻՐԱՌԵԼԻ, ած. **Բազմակի կիրառություն ունեցող**: Պողպատե եռակցված **բազմակիրառելի** բալոններ հեղուկացված գազի համար *(Հմգ, armstandard.am):*

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Բազմաթիվ՝ շատ կուսակցություններ ունենալը: Բազմակուսակցությունը** հաստատված է այն երկրներում, որտեղ կան քաղաքական ազատություններ և դեմոկրատական իրավունքներ *(Հմգ, azatutyun.am):*

ԲԱԶՄԱՄՈԴԵԼ, ած. **Բազում նմուշ, օրինակ ունեցող:** Ար-

ժեքները **բազմամոդել** միջին են՝ հիմնված SRES A և B սցենարի վրա*(Սեղ և Մյուլ, էջ 18):*

ԲԱԽՏԱԿԵՐՏ, ած. **Ճակատագիր, բախտ կերտող**: ….Աստվածաշնչյան այս **բախտակերտ** հերոսները լրիվ վերափոխված և նորովի են ներկայացված…. *(ԳՍ, էջ 85):*

ԲԱՄԲՈՒԿԱՇԵՆ, ած. **Բամբուկից կառուցած:** ….Մասնաշենքերը միմյանց կապված էին անհամար խարխուլ, **բամբուկաշեն** արահետներով *(ՅՄ, էջ 87):*

ԲԱՐԲԱՌԱԼԵԶՈՒ, ած. **Բարբառով գրված: Բարբառալեզու** բանահյուսությունը ներկայանում է երկու հատվածով՝ ժողովրդական անգիր բանահյուսություն, անհատական բառագիր բանահյուսություն *(ՍՍ[1], էջ 18):*

ԲԱՐԴԱԾԱԼՔ ած. **Բարդ շերտեր՝ ծալքեր ունեցող:** Կնոջ **բարդաածալք** բնույթը նույնիսկ իրե՞ն է անհասկանալի *(ԿՍ[2], էջ 70):*

ԲԱՐՁՐՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. Համաշխարհային **բարձր տեխնոլոգիական** ընկերությունները միավորվում են ֆիշինգի դեմ պայքարելու համար *(Հմg, news.am):*

ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, գ. **Բարոյական և մշակութային**: Լեզվամշակութաբանությունն օգտագործում է հումանիտար այլ գիտությունների ազգային **բարոյամշակութային** փորձի .... բնութագրման համար անհրաժեշտ տվյալները .... *(ԱԿ, էջ 12):*

ԲԱՑԻԿԱՉԱՓ, ած. **Բացիկի չափ ունեցող**: Հենց նույն օրն էլ գնացի խանութ և Գիոնի հայտնի գեյշաների բազմաթիվ **բացիկաչափ** լուսանկարները նայեցի *(ՅՄ, էջ 159):*

ԲԵԿՈՐԱՇԱՐ, գ. **Բեկորների շարան, շար:** Ճկուն պարանոցից կապույտ ճենապակե բեկորաշար վզնոց էր կախած….

(ՅՄ, էջ 115):

ԲԵՆԶԱՄԱՆ, գ. **Բենզինի աման**: ....Քսան լիտրանոց **բենզամանները** դատարկ էին.... *(ԳՄ, էջ 108):*

ԲԵՆԶԻՆԱԲՈՒՅՐ ած. **Բենզինի բույր ունեցող:** Մանուկի **բենզինաբույր** գրկում ո՞նց պատկերացնի իր մեջ դեռ ադաթ ու նամուս պահած գյուղը *(ՎՄ², էջ 82):*

ԲԵՌՆԱՏԱՇՏ, գ. **Այստեղ՝ Տաշտի ձև ունեցող տարողություն:** Ծնկեց փողոցի կենտրոնում, քիչ մնաց **բեռնատաշտը** շըրջեր (ՆԳ, էջ 42):

ԲՈՌԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գ. (կենդ.): **Բոռեր բուծելը:** Մայրաբուծության տեխնիկան բաղկացած է իրար հաջորդող մի շարք մասնագիտական աշխատանքներից՝ **բոռաբուծությունից** .... *(ԱՄ, ՍՄ, էջ 42):*

ԲՈՌԱՁՈՒ, գ. (գղտնտ.): **Աշխատող մեղվի դրած ձուն, որից նոր սերունդ չի կարող լինել:** Այս աշխատանքը պետք է կատարել մինչև ընտանիքի **բոռաձու** դառնալը *(ԱՄ, ՍՄ, էջ 24):*

ԲՋՋԱԿԵՐՊ, ած. **Բջջանման:** Աշխատանքը մեղվին հանգեցրել է մոմաբջիջներ ստեղծելուն, և հետագայում նա իր տունն սկսել է դարձնել մոմակերտ, իսկ բույնը՝ **բջջակերպ** *(ԱԳ, էջ 5):*

ԲՐՈՆԶԱԹՈՒԽ, ած. **Թուխ բրոնզագույն**: Ծոծրակի **բրոնզաթուխ** մազափունջն ափահարելով՝ նա ինձ տարավ հյուրասենյակ.... *(ՎՆ, էջ 58):*

ԲՈՒԺԱՅՑԵԼՈՒ, գ. **Բուժծառայություններից օգտվող:** Բժշկական **բուժայցելուների** թիվը կարճ ժամանակում գրանցել է աննախադեպ արդյունք *(Հմգ, armlur.am):*

ԲՈՒԺԱՌՈՒ, գ. **Բուժօգնություն ստացող:** «Հանրապետա-

կան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 5 **բուժառու** գտնվում է վերակենդանացման բաժանմունքում *(Հմգ, azatutyun.am):*

ԲՈՒԺՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Բժշկական սարքավորում:** Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բուժհաստատությունների համար **բուժսարքավորումներ** են գնվել *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱԲԱՐԵԼԱՎՈՒՄ, գ. (գղտնտ.): **Կանաչապատում, կանաչ տարածքների ավելացում:** Իսկ խորշակների բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով կարևոր է ինչպես **բուսաբարելավումը**, այնպես էլ անտառբարելավումը *(ԹՍ,ՍԼ, էջ 50):*

ԲՈՒՍԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. **Բույսերի մշակությանը վերաբերող: Բուսագործական** արտադրանքի մյուս տեսակների շրջանում խաղողը աչքի է ընկնում իր բարձր իրացվելիությամբ *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Բույսերի մշակություն:** Եղանակային անբարենպաստ պայմանները զգալի վնաս են հասցրել **բուսագործությանը** *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱՀՈՒՄՔ, գ. **Բուսական հումք:** Հատուկ շեշտադրմամբ ներկայացվեց «Օրգանական **բուսահումքի** մթերման գործընթացը» թեման *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱՃ, գ. **Բույսի կենսագործունեության՝ աճման և զարգացման շրջան:** Հայաստանում **բուսաճի** շրջանի ջերմաստիճանների գումարը կարող է մեծանալ 1000-1200°C *(ԹՍ, ՍԼ, էջ 25)*:

ԲՈՒՍԱՃԱՐՊԱՅԻՆ, ած. **Բուսական և ճարպային բաղադրիչներ պարունակող:** Մանկապարտեզներին սերուցքային

կարագի փոխարեն մատակարարվել է **բուսաճարպային** սպրեդ *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱՄԹԵՐՔ, գ. **Բուսական մթերք:** Այս **բուսամթերքը** բազմաթիվ արժեքավոր սննդանյութերի աղբյուր է *(Հմգ, news.am):*

ԲՈՒՍԱՄԻՋՈՑ, գ. **Բուսական բուժամիջոց:** Գիտնականները հայտնաբերել են **բուսամիջոց** քաղցկեղի բուժման համար *(Հմգ, news.am):*

ԲՈՒՐՈՒՄՆԱԶԵՂ, ած. **Բույր տարածող**: ....Խորշելի էին զուգված ու **բուրումնազեղ** քարտուղարուհիներն ու աշխատակցուհիները, որոնց անընդհատ փորձում էր գլխիս կապել մեր գրասենյակներից մեկի զվարճասերը*(ՎՆ, էջ 51):*

Գ

ԳԱԶԱՆԱԿԵՐՊՎԵԼ, բ. (բնստ.): **Գազանակերպ դառնալ: Գազանակերպված** մարդուն ես գիտեմ *(Նորք, 2021, թիվ 1):*

ԳԱՂԱՓԱՐԱԿԱԶՄԻՉ, ած. **Հիմնական միտք՝ իմաստ կազմող:** Եփրեմյանը որոշ չափով չարաշահում է բնագրից անջատված բառի կամ բառակապակցություն խորհրդանիշի **գաղափարակազմիչ** նշանակությունը *(ՍՍ[1], էջ 228):*

ԳԱՂՏՆԱԹԱՔՈՒՅՑ, ած. **Գաղտնի թաքցրած՝ չբացահայտված:** Այդ հեքիաթներից առավել գրավիչ են կյանքի ու մահվան **գաղտնաթաքույց** հնչյունների՝ միայն իրեն լսելի արձագանքը *(ՍՍ[1], էջ 297):*

ԳԱՂՏՆԱԺՊԻՏ, ած., մկբ. **Գաղտնի՝ թաքցրած ժպտալով:** -Ես չեմ,-**գաղտնաժպիտ** հրաժարվեց խենթը,- իմ անունը Լեոնիդ է, Լեոնիդ Վանիկիչ *(ԳԽ, էջ 49):*

ԳԵՂԱՆԻՈՐԵՆ, մկբ. **Շատ գեղեցիկ կերպով:** .... Հուրը

կարծես **գեղանիորեն** զարդարվել էր՝ լավատեղյակ, որ երևում է ինձ սևափայլ սյան միջով *(ՅՄ, էջ 211)*:

ԳԵՆԴԵՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գենդերային՝ սեռադասային հարցերը որպես գիտակարգ ուսումնասիրող ճյուղ:** Նման մոտեցումը .... համապատասխանում է լեզվաբանական **գենդերաբանության** խնդիրներին .... *(ԱԿ, էջ 6)*:

ԳԵՏՆԱՎԱՐԵԼ, բ. **Վայրեջքից հետո ինքնաթիռի շարժը մինչև հրապարակ**: .... **Գետնավարեց** դեպի մասնավոր հանգարներից մեկը *(ԴԲ, էջ 116)*:

ԳԵՐԱԶԴԵՑԻԿ, ած. **Չափազանց ազդեցիկ**: .... Սեփական «ուղիղ եթերն» են տեսագրում՝ թիկունքում նախօրոք նկարահանած **գերազդեցիկ** իրական տեսարանները *(ԴԲ, էջ 185)*:

ԳԵՐԱՊԱՀՈՎ, ած. **Չափազանց ապահով**: -Դրա համար էր հայրս պահում վտնյու-ում՝ անխափան սնուցմամբ և **գերապահով** անվտանգության համակարգով *(ԴԲ, էջ 92)*:

ԳԵՐԵԶՄԱՆԱՇԱՏ, ած. **Որտեղ գերեզման շատ կա**: Մեր ճանապարհը անցնում է....**գերեզմանաշատ** սարի հակառակ երեսի ուղղությամբ, կոչվում է՝ չոլ *(ԳՍ, էջ 15)*:

ԳԵՐԻՇԽՈՂԱԿԱՆ, ած. **Գերիշխմանը բնորոշ:** .... **Գերիշխողական** կամ ենթարկվողական հարաբերությունների բնույթով են պայմանավորված կարծրատիպերի բովանդակությունը ..... *(ԱԿ, էջ 97)*:

ԳԵՐԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Սյուրռեալիզմ:** Ինչ-որ չափով՝ նահանջ, սակայն և հարձակում՝ նվաճելու նորագույն ժամանակների շունչ ու ոգին, ոչ թե կլոր, այլ արդեն քառակուսի աշխարհի պատկերը, նրա **գերիրապաշտությունն** ու վերացարկությունը՝ աբստրակցիան *(ՆԱ, էջ 13)*:

ԳԵՐՃՇԳՐՏԵԼ, բ. **Խիստ ճշգրիտ՝ ստույգ դարձնել:** ….Անուն չունեցար, սե՛ր իմ, նույնիսկ ընտրողների **գերճշգրտված** ցանկում *(Նորք, 2020, թիվ 2):*

ԳԵՐՄԱՆՐԱԿԱԹԻԼ, ած. **Շատ մանր կաթիլներով:** Քանի որ վնասատուն սնվում է պատսպարված վայրերում, անհրաժեշտ է օգտագործել **գերմանրակաթիլ** և համաչափ սրսկում ապահովող սրսկիչներ *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 29):*

ԳԵՐՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ, ած. **Չափազանց նախանձախընդիր:** .... Պատրանքներ էին թվում նրան՝ **գերնախանձախնդիր** ուղեղների երևակայության արդյունք *(ԴԲ, էջ 447):*

ԳԵՐՆԵՐՈՒԺԱԿԱՆԱՑՎԵԼ, բ. **Չափազանց մեծ ներուժ ձեռք բերել:** Բոլոր ջանքերը, որոնց միջոցով կփորձեինք առավելություն ձեռք բերել կամ շարժվել այս կամ այն ուղղությամբ, արդեն հայտարարագրված են այս **գերներուժականացված** տեքստում *(Նորք, 2021,թիվ 1):*

ԳԵՐՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ, ած. **Չափազանց սկզբունքային:** ….Ինքն իրեն ներկայացնում էր որպես **գերսկզբունքային** ընդդիմադիր *(ՉԻ, 01.03.2023):*

ԳԵՐՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՎԵԼ, բ. **Չափից ավելի սոցիալականացվել: Գերսոցիալականացված** և գերքաղաքականացված հասարակության անհատն արդեն ոչ թե էսթետիկական, այլ էթիկական միավոր է *(ՍՍ[1], էջ 447):*

ԳԵՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Չափից ավել օգտագործելը:** Այդ ռիսկի մեղմման միջոցառումներից են .... Արարատյան արտեզյան ավազանի ջրերի **գերօգտագործման** դադարեցումը, ամենուր ջրի արդյունավետ օգտագործումը *(ԹՍ,ՍԼ, էջ 22):*

ԳԻՆԵՋՈՒՐ, գ. Այստեղ՝ **Գինու և ջրի խառնուրդ**…. Ձեր

շուրթերով կախարդական **գինեջուրը** կուշտ խմեցիք…. *(ԳՍ, էջ 122):*

ԳԻՏԱԿԱՆԱՑՆԵԼ, բ. **Գիտական դարձնել:** Տեսաբանության հասարակացումը ստրուկտուրալիզմի հրապուրանքն է գրականագիտությունը «**գիտականացնելու»** նրանց հայտնությունը *(ՍՍ[1], էջ 224):*

ԳԻՏԱՀԵՆՔ, ած. **Գիտության վրա հենված:** Իրանի **գիտահենք** արդյունաբերությունը հուսալի ձեռքերում է *(Հմգ, aliqmedia.am):*

ԳԻՏԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ած. **Գիտական և փիլիսոփայական:** Ակներև է, որ նշված գրական աղբյուրները իմացաբանական հղումներ են տալիս բացահայտելու Խեչոյանի «Միերի դռան գիրքը» վեպի **գիտափիլիսոփայական** հիմնադրույթը *(ՍՍ[1], էջ 476):*

ԳԻՐԱԿԱԶՄ ած. **Գեր կազմվածքով:** Արսենն առաջ թողեց երկու **գիրակազմ** կանանց *(ԴՄ, էջ 115):*

ԳԼԱՆԱՏԻՊԱՅԻՆ, ած. **Գլանի կերպ ունեցող:** ….Դարձերեսին….Ռամզադեյլի դպրոցի դասարանային անվանացանկի **գլանատիպային** պատճենն էր *(ՎՆ, էջ 81):*

ԳՈՅԱԼԵԶՈՒ, գ. **Գոյության, կեցության լեզու:** Հայոց կենսագրության ու հայոց **գոյալեզվի** խոչուխութերի հաղթահարմամբ…. *(ՍՍ[1], էջ 198):*

ԳՈՅԱՎՈՐՈՒՄ գ. **Գոյություն տալը՝ հաղորդելը: Գոյավորման** նույն թանձրույթից պոկված երկու գնդիկ տոհմական ի՞նչ ծածկագրով էին կերպավորման ճանապարհ ելել *(ՎՍ[2] էջ 100):*

ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. **Գոյութենապաշտությանը (էքզիստենցիալիզմին) հատուկ:** Կարոտը **գոյութենապաշտա-**

կան այնպիսի երևույթ է, որ բոլոր ժամանակներում շարունակում է մնալ մարդուն հուզող հարցերից մեկը…. *(Կայարան, 2022, թ. 3):*

ԳՈՐԾԱՌՈՂ, ենթ. դ., գ. **Որոշակի գործառնություն կատարող անձ: Գործառողն** ուսանողներին պետք է ապահովի աշխատանքով, արտադրության հետ կապված հանձնարարություններով …. *(Զեռնարկ, էջ 67):*

ԳՐԱԿԱՆԱՍՏԵՂԾ, գ. **Գրականություն ստեղծող:** Անսեռ սերնդի **գրականաստեղծները** չեն մրցակցի …. *(ԳՍ, էջ 64):*

ԳՐԱՆՑԱԹԵՐԹԻԿ, գ. **Գրանցումների թերթիկ**: Խմբագիրը վերցրեց գրիչն ու **գրանցաթերթիկը** *(ԴԲ, էջ 168):*

ԳՐԱՎԱԴՐԱՅԻՆ, ած. **Գրավադրմանը վերաբերող:** Գործնականում, գրեթե բոլոր ռուս օլիգարխները անցել են **գրավադրային** աուկցիոններով…. *(ԲՆ, էջ 101):*

ԳՐԱՏԵԽՆԻԿԱ, գ. **Գրի՝ գրական՝ գրելու տեխնիկա:** Ես վերադառնում եմ գրասեղանիս թղթերին կամ բազմոցիս ու **գրատեխնիկայի** նվաճումներին…. *(ԳՍ, էջ 95):*

ԳՐԱՑՈՒՑԱՆԱԿ, գ. **Գրված ցուցանակ:** Չկա մի տուն կամ փողոց, որի վրա դու կանգնես և այդտեղից չերևան **գրացուցանակները**…. *(ՌԱ, էջ 34):*

ԳՑԱՆՑՔ, գ. **Բիլիարդի սեղանի՝ գնդակները գցելու ցանցավոր անցք:** ….Մտածեց՝ կամաց խփի բուրգի պատին, որպեսզի իր հրած գունդը անդրադարձով գնա դեպի անկյունի **գցանցքը** *(ԳԽ, էջ 154):*

Դ

ԴԱԳԱՆԱԿԱՆՄԱՆ ած. **Դագանակի նմանություն ունե-**

ցող: Դագանականման ոստոտ ու հաստ մի փայտ ընկավ աչքին, վերցրեց և եկավ *(ՎՄ², էջ 6):*

ԴԱԼԱՐԱՍԱՂԱՐԹ, ած. **Դալար սաղարթ ունեցող: Դալարասաղարթ** լանջն իր գիրկն էր առնում մայր մտնող արևը…. *(ՅՄ, էջ 3):*

ԴԱՄԲԱՐԱՆԱԿԵՐՊ, ած. **Դամբարանի կերպ ունեցող:** Այս **դամբարանակերպ** զնդանի պղտոր օդում միալար գլխացավս հանգիստ չի տալիս *(ՎՆ, էջ 170):*

ԴԱՍԱՐՎԵՍՏ, գ. **Դասավանդման արվեստ**: «**Դասարվեստ**» կրթամշակութային ծրագրի հիմնական նպատակն է կամրջել թանգարաններն ու կրթական հաստատությունները, նպաստել արվեստ և կրթություն կապերի ամրապնդմանը *(Հմg, ascs.am):*

ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. **Դավադրություն պաշտող:** Միայն **դավադրապաշտական** տեսությունների կողմնակիցներն են հավատում, որ նման կազմակերպություն գոյություն ունի *(ՉԻ, 24.01.2023):*

ԴԱՎԱՆԱԹԱՓ, ած. (փխբ.): **Դավանանքից, հավատից զրկված**: Սոցիալական բեռի տակ կքած հալածված, **դավանաթափ** ջլատվածը, գրողի համագյուղացին՝ իբրև ժողովուրդ .... *(Նորք, 2021,թիվ 1):*

ԴԺՎԱՐԱՀԱԶ, գ. Այստեղ՝ **դժվարությամբ հազալը:** Հիվանդ թոքերի, **դժվարահազի** և խորխի դեպքում եզան լեզվի հյութն ու մեղրը հավասարաչափ խառնել, վաղ առավոտյան անոթի վիճակում խմել ճաշի գդալով …. *(ԱԳ, էջ 188):*

ԴԻԱՊԱՌԻԶԱ, գ. (գղտնտ.) Բացատրությունը՝ օրինակում: Լոլիկի ցեցը չի անցնում ժամանակավոր դադարի կամ **դիապաուզայի** …. *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 172):*

ԴԻՄԱԿԾԿՈՒՄ, գ. **Դեմքի կծկվելը:** -Ապրես,-ձայնեց Ազիզն ու ինքն էլ խմեց, վրայից ծիծակ կերավ ու **դիմակծկումով** Հարութին էլ հրավիրեց *(ԳԽ, էջ 185):*

ԴԻՄԱՇՂԱՐՇ, գ. **Դեմքը ծածկող շղարշ:** Մեր **դիմաշղարշը** ծղոտե լայնեզր գլխարկ է, որի եզրերին կարված նուրբ, սև ու բարակ շղարշը գլանաձև ազատ իջնում է մինչև մեղվաբույծի ուսերը .... *(ԱԳ, էջ 183):*

ԴԻՊԱԿԱԱՄՊ, գ. (փխբ.): **Թանկարժեք զարդվածքների՝ դիպակների ամպանման կույտ:** Եկեղեցու նախասրահը մտանք ու քայլեցինք դեպի փայլուն, մարջանագույն զգեստների **դիպակաամպը** *(ՆԳ, էջ 144):*

ԴՊՐՈՑԱԿՐԹԱԿԱՆ, ած. **Դպրոցի կրթությանը վերաբերող՝ հատուկ:** Հայ նորոգիչներն ամենից առաջ ձեռնամուխ են լինում դասական լեզվի համակարգմանը. կազմում են բառարաններ, գրում են քերականության ու տրամաբանության դասագրքեր ու **դպրոցակրթական** ձեռնարկներ *(ՍՍ[1], էջ 21):*

ԴՐԱՄԱԴՈԼԱՐԱՅԻՆ, ած. (դիպվ.): **Դրամական և դոլարային: Դրամադոլարային** խառնաշփոթը հասել էր գագաթնակետին *(Հմգ, news.am):*

ԴՐԱՄԱԶՐԿՈՒՄ, գ. **Դրամից զրկվելը:** Նշվել են նաև արտարժութային ներարկումների արդյունքում տնտեսության **դրամազրկման** հետևանքները *(Հմգ, news.am):*

ԴՐԱՄԱԶՐԿՎԱԾ, բ. **Դրամից զրկված:** Մեր տնտեսությունը **դրամազրկված** է, ինչն առաջիկայում պատճառ է հանդիսանալու տնտեսության չզարգանալու համար *(Հմգ, news.am):*

ԴՐԱՄԱԸՆԴՈՒՆԻՉ, ած. **Դրամ ընդունող հարմարանք՝ սարք:** Մեքենայի բեռնախցիկում հայտնաբերվել են սրճեփ

սարքերի **դրամարնդունիչներ** *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱԹԱՓ ԼԻՆԵԼ, բ. **Դրամից զրկվել:** Այլ կայքերում **դրամաթափ** լինելու փոխարեն Tube8-ը կվճարի իր այցելուներին՝ անվճար կոնտենտն օգտագործելու համար *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱԽԱՂԱՅԻՆ, ած. **Դրամական շահումով խաղերին վերաբերող:** Օրինագիծ է ներկայացվել **դրամախաղային** բիզնեսի օրինականացման վերաբերյալ *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱՄԻՋՈՑ, գ. **Դրամական միջոց:** Եկեղեցիների կառուցման **դրամամիջոցների** աղբյուրի հարցը պետք է հետաքրքրքրի իրավապահ մարմիններին, այլ ոչ եկեղեցուն *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱՄՈՒՏՔ, գ. **Դրամական մուտք՝ եկամուտ:** Ֆիլմաշարի իններորդ մասի համաշխարհային **դրամամուտքերն** արդեն գերազանցել են 405 մլն դոլարը *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Դրամային դարձնելը:** Իշխանության նկատմամբ պառլամենտական վերահսկողությունը թույլ չէր տա նպաստների **դրամայնացումը**.... *(ԲՆ, էջ 96):*

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ, ած. **Դրամական և վարկային:** Բյուջետային ծախսերի ավելացումը հիմնական գործոններից մեկն է, որը կարող է հանգեցնել կարգավորողի **դրամավարկային** քաղաքականության խստացմանը *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱՔԱՆԱԿ, գ. **Դրամական միջոցների քանակ:** Չինաստանի իշխանությունները շարունակում են ուշադիր հետևել **դրամաքանակի**, վարկավորման ու սոցիալական ֆինանսավորման խելամիտ աճի ապահովմանը *(Հմ, news.am):*

ԴՐԱՄԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ած. **Դրամային և ֆինանսական:**

ԱՄՀ կառավարման խորհրդի Միջազգային **դրամաֆինանսական** կոմիտեի (ՄԴԿ) հայտարարությունից

հետո լրագրողների հետ զրույցում այս մասին հայտնել է ԱՄՀ գործադիր տնօրենը *(Հմգ, news.am)*:

ԴՐՈՇԱԳՈՒՅՆ, ած. **Դրոշի գույն ունեցող:** Հետևի դիմապակու վրա՝ փողոցի դեռևս լուսավորված հատվածում «ARMENIA»-ի ինքնասոսնձված, **դրոշագույն,** նշմարելի ստիկերներ *(ԳՍ, էջ 13)*:

Ե

ԵԼՈՒՍՏԱՁԵՎ, ած. **Ելուստի ձև ունեցող**: Անհաղորդ դուրս նայեց **ելուստաձև** պատուհանից *(ԴԲ, էջ 18)*:

ԵՂԲԱՅՐԱՊԱՇՏ, ած. **Եղբորը շատ սիրող, պաշտող:** Հիսնամյա Զարդարը դասը սովորած աշակերտուհու պես դարձյալ միալար խոսելով արդարանում էր, ինչից ավելի էին գրգռվում **եղբայրապաշտ** տալերը…. *(Նորք, 2021, թիվ 1)*:

ԵՆԹԱԱԶԳԱՅԻՆ, ած. **Ազգայինին ստորադասվող:** Նույնը վերաբերում է նաև ֆեդերալ կառավարման **ենթաազգային** կառուցվածքներին *(Սեդ և Մյուլ, էջ 66)*:

ԵՆԹԱԲՆԱԳՐԱՅԻՆ, ած. **Ենթատեքստային, համատեքստային:** Եվ սակայն գեղարվեստական գրականությունը **ենթաբնագրային**, կառուցվածքային անհայտներ ուներ, որի հետազոտությունը ենթադրում էր վերլուծության նոր եղանակներ *(ՍՍ[1], էջ 62)*:

ԵՆԹԱՍԱՀԱՐԱՅԻՆ, ած. **Սահարայի գոտուն հարող**: ….Ավելի չորային տարածքներում, հատկապես **ենթասահարային** Աֆրիկայում….կանխատեսվում է գետերի ավելի քան հիսուն տոկոսի նվազում *(Սեդ և Մյուլ, էջ 19)*:

ԵՆԹԱՐԱԳԱԾՅԱՆ, ած. **Արագածի ստորոտին հատուկ:**

Անտառներից վեր ….**ենթարագածյան** մարգագետնային բուսականությունն է …. *(ԱԳ,էջ 201):*

ԵՆԹԱՐԿՎՈՂԱԿԱՆ, ած. **Ենթարկվելուն բնորոշ:** Տե՛ս ԳԵՐԻՇԽՈՂԱԿԱՆ-ի օրինակը:

ԵՌԱԲԱՂԱԴՐԻՉ, ած. **Երեք բաղադրիչ ունեցող:** Արդյունքների այսպիսի **եռաբաղադրիչ** ամփոփումը ընդհանրապես կայուն զարգացման և մասնավորապես ջրի կառավարման էական չափանիշն է *(Սեդ և Մյուլ, էջ 15):*

ԵՌԱԿԶԱԿ, գ. **Եռածալ կզակ:** Կրկնակզակը **եռակզակ** է դարձել,-պատասխանեց Սեդա Պարսամյանը *(ՆԳ, էջ 53):*

ԵՌԱՄՈԴԵԼ, ած. **Կառուցվածքի երեք տիպ՝ ձև ունեցող:** Իբր թե մի շատ խորիմաստ է Էկոյի **եռամոդել** պատմավեպը… *(ՍՍ[1], էջ 261):*

ԵՏԱՌԱՋԵԼ, բ. **Ետ ու առաջ շարժվել:** Տե՛ս ԳՑԱՆՑՔ-ի օրինակը:

ԵՐԵՍԱԾԵՓ ԱՆԵԼ, բ. **Շաղախի բարակ շերտով ծեփել:** Ծեփելուց ու քիչ չորացնելուց հետո ավելի նուրբ շաղախով **երեսածեփ անել** …. *(ԱԳ, էջ 123):*

ԵՐԹՈՒՂԱԳԻԾ, գ. **Երթուղու գիծ:Երթուղագիծ** դուրս գալու կոճակը գտնվում է Էկրանի կենտրոնական մասում *(Հմգ, yandex.am):*

ԵՐԿԽՈՍԱԿԱՆ, ած. **Երկխոսության նման:** Առավել տպավորիչ են ներկայանում պատումի **երկխոսական** զրույցի, նովելատիպ սյուժեների պատկերավոր արտահայտությամբ *(ՍՍ[1], էջ 277):*

ԵՐԿԾԱԼՎԵԼ, բ. **Երկտակ ծալվել:** Լանգդրնը **երկծալվեց** …. *(ԴԲ, էջ 392):*

ԵՐԿՆԱԹԵՎ ած. (բնստ.): **Երկնքից վար իջնող՝ թռող:** Ես կմեռնեմ, և կլացի վրաս // Անձրևների ձայնը **երկնաթև** *(Նորք, 2021, թիվ 1):*

ԵՐԿՆԱՇԵՐՏ, գ. **Երկնի շերտ:** Ամպերի արանքից երևացող պարզ **երկնաշերտը** մի ակնթարթում դարձյալ ամպերով ծածկվեց *(ՅՄ, էջ 127):*

ԵՐԿՐԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Երկրի էկոլոգիային վերաբերող:** Տեղի կունենա «Վարչական շրջանի **երկրաէկոլոգիական** մոնիթորինգ և ռիսկ» խորագրով միջազգային գիտաժողով *(Հմգ, news.am):*

ԵՐԿՐԱՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ, գ. **Երկրահետախուզություն:** Յուրաքանչյուր երկիր ունի իր **երկրահետախուզումը**, իր քարտեզները, իր պատմությունները և իր մայրցամաքները *(Հմգ, news.am):*

ԵՐԿՔԱՐՏԱՆԻ, ած. **Երկու քարտ ունեցող:** Philips-ը ներկայացրել է անջրանցիկ **երկքարտանի** սմարթֆոն *(Հմգ, 1in.am):*

Զ

ԶԱՆԱԶԱՆԱՏԻՊ, ած. **Զանազան՝ տարբեր տիպերի:** .... Սկզբնաղբյուրները **զանազանատիպ** են .... *(ՌՆ², էջ 5):*

ԶԻՆԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Ռազմականացում:** Կողմերը վերահաստատում են իրենց մտադրությունը՝ գործադրել բոլոր անհրաժեշտ ջանքերը՝ արտաքին տիեզերքի **զինագործումը** և սպառազինությունների մրցավազքը կանխելու համար *(Հմգ, news.am):*

ԶԻՆԱՊԱՀ, *գ.* (հպվ.): **Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ: Զինապահը** համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առող-

ջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինվորների և նրանց ընտանիքների բարեկեցությունը *(Հեռ., Հ1, 22.04.2023):*

ԶԻՆԹՈՇԱԿԱՌՈՒ, գ. **Զինվորական թոշակառու:** Ի՞նչ հերթականությամբ և առաջնահերթությամբ են **զինթոշակառուները** ստանալու բնակարանի գնման վկայագրեր *(Հմg, news.am):*

ԶՐՊԱՐՏԱԳՐԵԼ, բ. **Զրպարտություն գրել, զրպարտել:** Գրական մթնոլորտը ապականում է «Ստորապատում» **զրպարտագրելով** *(ՍՍ[1], էջ 221):*

ԶՈՒԳՍԱՓՈԽՎԵԼ բ. **Զարդարանքը՝ արդուզարդը փոխել:** Գործից գալիս **զուգսափոխվում** էր *(ՎՍ[1], էջ 32):*

Է

ԷԹՆՈԱՆՎԱՆՈՒՄ, գ. **Էթնոսի՝ ազգի անվանում:** Ատելության մեղմ լեզուն ենթադրում է էթնիկ խմբի նեգատիվ ներկայացում, նրա **էթնոանվանման** վիրավորական կիրառում .... *(Ատ. խոսք, էջ 16):*

ԷԹՆՈԳՈՒՅՆ գ. (փխբ.): **Ազգային երանգի առանձնահատկություն:** Առաջին ալիքի «**Էթնոգույներ**» հաղորդումը Հայաստանի հույների մասին է *(Հեռ., Հ1, 05.06.2023):*

ԷԹՆՈԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Էթնոլեզվաբանությանը բնորոշ**: Նախկինում **էթնոլեզվաբանական** հետազոտություններում իմաստաբանական հետազոտությունները բացառվում էին .... *(ԱԿ, էջ 28):*

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԱՇՈՒԿԱ, գ. **Էլեկտրաէներգիայի շուկա:**

Փաստաթուղթը միջազգային պայմանագրի կարգավիճակ ունի, որը սահմանում է ընդհանուր **էլեկտրաէներգաշուկայի**

զարգացման ու ձևավորման իրավական հիմքերը *(Հմգ, news.am):*

ԷԼԵԿՏՐԱԽԱՓԱՆՈՒՄ, գ. **Էլեկտրամատակարարման խափանում: Էլեկտրախափանումներ** կան բազմաթիվ նահանգներում *(Հմգ, news.am):*

ԷԿՈԱԿՏԻՎԻՍՏ, գ. **Բնապահպանական բնույթի գործունեություն իրականացնող անձ:** Գլազգոյում, որտեղ ընթանում է կլիմայի փոփոխության շուրջ համաժողովը, հազարավոր **էկոակտիվիստներ** դուրս են եկել երթի
(https://artsakhpress.am/arm/news/153305/glazgoyum-aveli-qan-20-ekoaktivist-e-dzerbakalvel.html):

ԷԿՈԱՀԱԲԵԿԻՉ, գ. Այստեղ՝ **բնապահպանական պատըրվակներով ահաբեկչական բնույթի գործունեություն իրականացնող:** Նաև ինքնախաբեություն է չտեսնել, որ **էկոահաբեկիչների** կազմակերպիչները Թուրքիան և Ադրբեջանն են *(Հմգ, news.am):*

ԷԿՈԲԱՐԻՔ, գ. **Էկոլոգիապես առողջ բարիք՝ մթերք:** Թարմ թխված գաթա#գաթա#**էկոբարիք**
(https://www.facebook.com/hashtag/%D5%A7%D5%AF%D5%B8%D5%A2%

ԷԿՈԸՆԹՐԻՔ, գ. **Էկոլոգիապես առողջ մթերքներից բաղկացած ընթրիք:** Հյուրեր Հորդանանից // Խուստուփը վայելելու առաջին կանգառը // **էկոընթրիք** - 2500 դրամ // գիշերակաց - 7000 դրամ // Համեցեք
(https://www.facebook.com/khustupbb/posts/338022384495221/):

ԷԿՈԹՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական թունավորում: Էկոթունավորությունը** վերաբերում է այն նյութերին, որոնք շրջակա միջավայրում հայտնվելու դեպքում վտանգ են ստեղծում կենսաբանական կուտակման առումով *(ԹՍ և այլք, էջ 28)*:

ԷԿՈԿԱՇԻ, գ. **էկոլոգիապես մաքուր կաշի**։ ….Պատկերացում կտա **էկոկաշի** ստանալու ….մասին *(http://www.old.ysu.am/news/hy/interwiew-with-Tatev-Nazaryan)*:

ԷԿՈՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ, գ. **Գոյապահպանական մտածելակերպ**։ Երիտասարդության շրջանում տարածվում է **էկոմտածելակերպ**
(https://armineshaboyan.wordpress.com/2021/10/10/%D5%BE%D5%A5%D6%80

ԷՆԵՐԳԱԱՂԲՅՈՒՐ, գ. **Էներգիայի աղբյուր**։ Թուրքիան ավելի մեծ կախվածության մեջ է ընկնում արտաքին **էներգաաղբյուրներից** *(Հմգ, news.am)*:

ԷՆԵՐԳԱԳՈՐԾԱՐԱՐ, գ. **Էներգիայի ոլորտի գործարար**։ Այժմ այս արատավոր որոշումը, որը վաղուց պետք է չեղյալ համարվեր, փորձում են օգտագործել այլ **էներգագործարարներ** *(Հմգ, news.am)*:

ԷՆԵՐԳԱԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, գ. **Էներգիայի ոլորտին վերաբերող ենթակառուցվածք**։ Ընդհանուր առմամբ, **էներգաենթակառուցվածքի** վերականգնումը USAID-ին մոտ 78 մլն դոլար է արժեցել *(Հմգ, news.am)*:

ԷՆԵՐԳԱԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգետիկայի հարցերով երկխոսություն**։ Այդ մասին լրագրողներին հայտնել է էներգետիկայի հարցերով եվրահանձնակատարը «Ռուսաստան-ԵՄ **էներգաերկխոսություն**. Գազային գործոն» խորհրդաժողովի ընթացքում *(Հմգ, news.am)*:

ԷՆԵՐԳԱԶՐԿՎԵԼ, բ. **Էներգիայից զրկվել**։ Ամբողջ տարածքն **էներգազրկվել** էր *(Հմգ, news.am)*:

ԷՆԵՐԳԱԸՆԴՈՒՆԻՉ, գ. **Էներգիան ընդունող սարք, հարմարանք**։ Բեռնատարը էական վնասվել է, վնասվել են լոկոմո-

տիվի մեկուսիչը և **էներգաընդունիչը** *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգետիկայի բնագավառում գործող ընկերություն: Էներգաընկերությունների** ղեկավարները գների բարձրացման դեմ միջոցներ ձեռնարկելու կոչ են արել կառավարությանը *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԼԾԱԿ, գ. **Էներգիայով ազդելու միջոց՝ լծակ:** Ռուսաստանը շահագրգռված է վերահսկելու հարևաններին՝ այդ նպատակին հասնելու համար **էներգալծակները** կիրառելով *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԾԱԽՍԱՏԱՐ, ած. **Էներգիայի ծախս պահանջող:** Բիթքոինի գործունեությունը ավելի **էներգածախսատար** է, քան Google-ի բոլոր ծառայություններինը *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԾԱԽՍԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգածախսատար լինելը:** Դրանց հիմնական թերություններն են՝ արտադրության ժամանակ շրջակա միջավայրի աղտոտումը և բարձր **էներգածախսատարությունը** *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԾՐԱԳԻՐ, գ. **Էներգիայի հետ կապված ծրագիր:** Զեկույցի հեղինակներից մեկը նշել է, որ շատ գործող և ծրագրվող **էներգածրագրեր** չեն նպաստում կլիմայական նպատակներին *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱԽՈՒՄ, ած. **Էներգիայից կախված լինելը:** Վերլուծաբաններն ասում են, որ գների անկումը կարող է ունենալ ամենատարբեր հետևանքներ՝ **էներգակախում** ունեցող տնտեսություններում եկամուտների մեծացումից մինչև գլոբալ դեֆլյացիայի ուռճացում *(Հմմ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգիայից կախում ունենալը:** Հայաստանի **էներգակախվածությունն** ունի կենսական

նշանակություն *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱՅԱՆ, գ. **Էներգակայանք:** Նախատեսվում է կառուցել երկհարկանի վարչական շենք՝ արևային **էներգակայանով** *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, գ. **Էներգիայի կառավարում:** Չինաստանում **էներգակառավարման** նախկին ղեկավարին կոռուպցիայի համար հեռացրել են կուսակցությունից *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱՌՈՒՅՑ,գ. **Էներգետիկ ոլորտում գործառող կառույց:Էներգակառույցների** արդիականացումը թույլ է տվել ամեն անգամ նվազեցնել գազի սպառումն արտադրամասերում *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱՐԳԱԲԵՐՈՒՄ,գ. Տարածքի մի մասը գտնվում է «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ հաշվեկշռում («**Էներգակարգաբերում**» մասնաճյուղի վարչա-արտադրական շենքում) *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ, ած. **Էներգիայի կարգավորումն իրականացնող:** Գների վերին սահմանաչափը սահմանվում է **էներգակարգավորիչ** մարմնի կողմից *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱԿՈՒՏԱԿԻՉ, ած. **Էներգիա կուտակող:** Ընկերությունը սկսել է զբաղվել նաև արևային մարտկոցների և այլ **էներգակուտակիչ** համակարգերի ստեղծմամբ *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՀՈՒՄՔ, գ. **Էներգետիկ հումք:** Ներկա պահին ընկերությունը **էներգահումք** է մատակարարում լրիվ ծավալով *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՀՈՒՄՔԱՅԻՆ, ած. **Էներգետիկ հումքին վերաբերող:** Նա հայտարարել է, որ **էներգահումքային** մոդելն արդեն ի-

րեն սպառել է *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ, ած. **Էներգամեքենաշինության վերաբերող:** Ռուսաստանյան առաջատար **էներգամեքենաշինական** հոլդինգը ստեղծում, արտադրում և մատակարարում է նոր սերնդի էներգետիկական սարքավորումներ *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՄԻՋԱՆՑՔ, գ. **Էներգետիկ միջանցք:** Երկու երկրների առաջնորդները քննարկել են Ադրբեջան, Ռուսաստան, Իրան **էներգամիջանցքի** ստեղծումը *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՆԱԽԱԳԻԾ, գ. **Էներգետիկական նախագիծ:** Այդ նախագծի իրականացման շրջանակներում Ռուսաստանը պատրաստ է պահպանել Եվրամիության երրորդ **էներգանախագիծը** *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՆՈՐՄ, գ. **Էներգետիկական նորմ:** Լրամշակված դիրեկտիվը ԵՄ **էներգանորմերը** տարածում է երրորդ երկրներից ԵՄ հասնող ծովային գազամուղների վրա *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՇՈՒԿԱ, գ. **Էներգետիկայի շուկա:** Շնորհակալություն է հայտնել համաշխարհային **էներգաշուկաներում** իրավիճակի կարգավորման համար *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Էներգիայի միջոցով գործող սարքավորում:** Ընդ որում՝ այնտեղ կարող են մնալ ոչ ավելի, քան չորս ռուսական նավեր, ներառյալ միջուկային **էներգասարքավորում** ունեցող նավեր *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ, ած. **Էներգետիկական և վառելիքային:** Այդ հանդիպման ընթացքում առաջնորդները քննարկել են երկու երկրների տնտեսական համագործակցությունը **էներգավառելիքային** ոլորտում *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՎԹԱՐ, գ. **Էներգիայի մատակարարման հետ կապված վթար:** Տեղի են ունեցել բազմաթիվ **էներգավթարներ** *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՏԵՂԱՓՈԽՈՒՄ, գ. **Էներգիայի տեղափոխում:**

Պատմել է այդ տարիներին իրականացված **էներգատեղափոխման** և տարանցիկ նախագծերի մասին *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՏԵՍԱԿ, գ. **Էներգիայի տեսակ:** Երկրի խորհրդարանը հավանության է արժանացրել կառավարության առաջադրած օրինագծերը՝ կապված պետական պարտատոմսերի էմիսիայի և **էներգատեսակների** վերականգման հետ *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՓԱԹԵԹ, գ. **Էներգետիկական փաթեթ:** ԵՄ-ի Երրորդ **էներգափաթեթի** նորմերի համաձայն «Հյուսիսային հոսք 2»-ի օպերատորը պետք է «Գազպրոմ»-ից անկախ ընկերություն լինի *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգափոխանակում:** Գորշ ճարպային շերտը նպաստում է **էներգափոխանակության** ակտիվ գործընթացներին *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգետիկական քաղաքականություն**: Ոչ մի երկիր իրավունք չունի ԵՄ-ին թելադրել իր **էներգաքաղաքականությունը** *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՕԲՅԵԿՏ, գ. **Էներգիա արտադրող կամ էներգիայով գործող օբյեկտ:** Չեն կարողանում օպտիմալացնել ծախսերը և **էներգաօբյեկտներն** ու բաշխիչ ցանցերն արդիականացնելու շահավետ վարկեր ներգրավել *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՕԳՏԱԳՈՐԾՈՂ, գ. **Էներգիա օգտագործող:** Պետական կարիքների համար ձեռք բերված **էներգաօգտագործող** ապրանքները պետք է էներգախնայող լինեն *(Հմգ, news.am):*

ԷՆԵՐԳԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ենթ. դերբ **Էներգիայի օգտագործում:** Էներգետիկայի և **էներգաօգտագործման** ոլորտում կատարվում են զգալի փոփոխություններ *(Հմգ, news.am):*

ԷՆՈԳԱՍՏՐՈՆՈՄԻԱ, գ. **Գինու հետ գործածվող ուտեստներ:** .... Համտեսը կարելի է զուգակցել հյուրասիրության հետ: Այս դեպքում ձեզ անհրաժեշտ կլինի գործակալություն, որը կօգնի կազմակերպել **էնոգաստրոնոմիա**
(https://motherhouse.ru/hy/apartments-for-sale/ veselyi-scenarii-na-novogodnii-korporativ-novogodnii-korporativ/:)

ԷՆՈԳԱՍՏՐՈՆՈՄԻԱԿԱՆ, ած. **Էնոգաստրոնոմիային բնորոշ:** Հայաստանը ԱՊՀ-ում աշնանային **էնոգաստրոնոմիական** ճամփորդությունների թոփ 3-ում է
(https://news.am/arm/news/533071.html):

ԷՆՈԼՈԳ, գ. **Գինեգետ:** Խոսքը ֆրանսիացի **էնոլոգ** և հետազոտող Էմիլ Պիենոյի մասին է, որը հեղափոխություն է արել գինեգործության մեջ 20-րդ դարի կեսին և կոչվել «Ժամանակակից էնոլոգիայի նախահայր»
(https://hy.wikipedia.org/wiki/Էմիլ_Պիենո#cite_ref-decaobit_2-0):

ԷՆՈԼՈԳԻԱ, գ. **Գինեգիտություն:** Մինչ Բորդոյի համալսարանում դասավանդելը, որտեղ դարձել է **Էնոլոգիայի** պրոֆեսոր, Պիենոն պայմանով աշխատել է գինեգործության բնագավառում մի շարք խնդիրների առաջացման դեպքում գիտական բացատրություններ տալու համար
(https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%B4%D5%AB%D5%AC_%D5%8A%D5%AB%D5%A5%D5%B6%D5%B8):

ԷՆՈՏԵԿԱ, գ. **Գինեդարան:** Հունվարի 1-ից **Էնոտեկան** շարունակելու է մնալ ROOMZ-ում .... *(https://www.facebook. com/ enotecaevn):*

ԷՆՈՏՈՒՐԻԶՄ, գ. **Գինեզբոսաշրջություն:** Զբոսաշրջության տեսակ, որի նպատակն է համտեսել, օգտագործել կամ գնել գինի անմիջականորեն գինեգործական շրջաններից: **Էնոտուրիզմը** համարվում է տուրիզմի ժամանակակից ուղղություններից մեկը *(https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%B6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4):*

ԷՆՈՖԻԼ, գ. **Գինեսեր: Էնոֆիլ** անվանում են այն մարդկանց, որոնց պրոֆեսիոնալ գործունեությունը ոչ մի կապ չունի գինու հետ, բայց նրանց կյանքում այն ունի կարևոր դեր: Նրանք այն մարդիկ են, ովքեր սիրում են, հասկանում և տարբերում գինին*(https://www.facebook.com/chooseyourwine/posts/673589486414415/):* **Էնոֆիլը** գինու մեծ սիրահար է *(https://hy.drink-drink.ru/bol-she-chem-enofil-vse-o-vinodele/):*

Ը

ԸՆԹԵՐՑԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. **Ընթերցանությունը պաշտող**: …. Այն կոչում եմ՝ **ընթերցապաշտական** էսսեիստիկա կամ **ընթերցապաշտական** փորձագրություն…. *(ԳՍ, էջ 119):*

ԸՆԹԵՐՑԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ընթերցապաշտ լինելը:** Այսպես է **ընթերցապաշտության** մեջ՝ նախ պատասխանում ես ինքնաքննադատության ղողանջներին, ներծծվում մտախաղերով *(ԳՍ, էջ 119):*

Թ

ԹԱԳԱՎԱՐԱԿ, գ. **Վարակիչ հիվանդություն, կորոնավիրուս: Թագավարակի** պատճառով բոլորիս համակած զգացո-

դությունների մասին է «COVID-19» պատմվածքը…. *(Կայարան, 2022, թ. 3):*

ԹԱԳԱՎՈՐԱՆՈՒՆ, ածգ. **Արքայական համբավ ունեցող, թագավորի պես:** …Անժամանակ մահով գնացին իր մի **թագավորանուն** եղբայրն ու Գոշայի զույգ քեռայրերը *(Նորք, 2021, թիվ1):*

ԹԱՆԱՔԱՊԱՏ, ած. **Թանաքով պատված:** …. Դոլիին համոզեցի, որ իր **թանաքապատ,** կավճոտ, կարմրած մատոսկրերով ձեռքը բերի սեղանի տակ *(ՎՆ, էջ 248):*

ԹԱՆԳԱՐԱՆԱՎԱՅԵԼ, ած. **Թանգարանին վայել, արժանի**: …. Ձեռագործ իրերի **թանգարանավայել** հավաքածուն սոսկ անկեղծ փորձ էր լցնելու դատարկ տունը …. *(ԴԲ, էջ 27):*

ԹԱՏՐՈՆԱՏԻՊ ած. **Թատրոնի նմանվող:** Ինչքան էլ իրար մեջ պայմանավորված լինեին, այնուամենայնիվ, առանց **թատրոնատիպ** տեսարանի բռնած գործը գլուխ չէր գա *(ՎՍ[1], էջ 40):*

ԹԱՐԹԻՉԱԿԵՐՊ, ած. **Թարթիչի ձև ունեցող**: ….**Թարթիչակերպ** հոնքերն իրար են մոտենում *(ԳՍ, էջ 25):*

ԹԱՔՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Ծածկագիտական**: Սա մեր էպոսի **թաքնագիտական** հղումներից մեկն է *(ՍՍ[1], էջ 475):*

ԹԱՔՆԱՐԱՆ, գ. **Թաքստոց:** …. Ներկայացնում են այսօրվա մարդու առօրեական կյանքը, նրա ցանկությունները, բացում են հոգու **թաքնարանները**…. *(Կայարան, 2022, թ. 3):*

ԹԵՐՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ, բ. **Թերի ներկայացնել:** Որոշ իրողություններ ներկայացվում են չափազանցված, մյուսները՝ **թերներկայացված** …. *(ՋՍ, էջ 9):*

ԹԽԱՇԻԿԱՀԵՐ, ած. **Թուխ և շեկ մազեր ունեցող:** ….Համաշխարհային նշանակության ինչպիսի դեմքեր էին գալիս. սիգարներ, պանամաներ,…. թխահեր, **թխաշիկահեր,** գավա-

թակիրներ…. *(Կայարան, 2022, թ. 4):*

ԹՂԹԱՊԱՆԱԿԱՎՈՐ, ած. **Թղթապանակ կրող:** …Այդ **«թղթապանակավոր** նստակյացը» կգողանա ոչ միայն իր, այլ՝ օլիգարխի գրպանները լցնելու համար *(ԲՆ, էջ 29):*

ԹՂԹԱՊԱՏԱՌԻԿ, գ. **Թղթից պոկած փոքրիկ կտոր:** Հատորի էջ 34-35-ի միջև պահպանված է և հնացած **թղթապատառիկ՝** նշան, որ կարդացել է մինչև այդ էջերը *(ԱԶ, էջ 169):*

ԹՄՐԱԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութի առաջացրած ազդեցություն:** Սինթեզվում են այնպիսի նյութեր, որոնք մարդու օրգանիզմի վրա ցուցաբերում են հոգեակտիվ ներգործություն, ունեն **թմրաազդեցություն** *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱԱԿՏԻՎ, ած. **Թմրանյութ պարունակող:** Նշանակված փորձաքննությամբ կաթուցիչի բաղկացուցիչ մասերի վրա հայտնաբերվել է **թմրաակտիվ** բաղադրատարր հանդիսացող տետրահիդրոկանաբինոլ *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի գործածության և տարածման հետ կապված ահաբեկչություն:** Երկրի իշխանությունների մի շարք այլ ներկայացուցիչների առաջադրել են **թմրաահաբեկչությանը** մասնակցության մեղադրանքներ *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱԱՌԵՎՏՐԱԿԱՆ, գ. **Թմրանյութի վաճառքով զբաղվող առևտրական:** Բեդուինները նրանց պահել են անմատչելի լեռնային շրջանում և ազատ արձակման դիմաց պահանջել ազատ արձակել տեղի խոշոր մի **թմրաառևտրականի** *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Թմրանյութին վերաբերող: Թմրաբանական** փորձաքննությամբ ստացել ենք երեք անձի արդ-

յունքները *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԲԵՌ, գ. **Թմրանյութ պարունակող՝ թմրանյութից կազմված բեռ:** Ավստրալացի ոստիկանները **թմրաբեռ** են առգրավել *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ած. **Թմրանյութերի գործածությունից առաջացած հիվանդությունների բուժմանը վերաբերող:** Հանցագործները առևանգել են **թմրաբուժական** դիսպանսերի տնօրենին *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի գործածությունից առաջացած հիվանդությունների բուժում:** Բացվեց առաջին մասնավոր **թմրաբուժության** հիվանդանոցը *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԳՅՈՒՂ, գ. **Թմրանյութ գործածող բնակիչներով հայտնի գյուղ:** Թմրաբիզնեսը բարգավաճում է Սոն Բանյա բնակավայրում, որը հայտնի է որպես **թմրագյուղ** *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԳՈՐԾ, գ. **Թմրանյութի արտադրությամբ և վաճառքով զբաղվող:** Այն ժամանակ իրավապահների և **թմրագործների** միջև փոխհրաձգություն է տեղի ունեցել *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԳՈՐԾԱԿԱԼ, գ. **Թմրաշրջանառության մեջ ներգրավված անձ:** Հիմնավորել են **թմրագործակալի** փնտրման աշխատանքները *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԳՈՒՄԱՐ, գ. **Թմրանյութի առևտրից առաջացած գումար:** Պետությունները պետք է միավորվեն **թմրագումարների** հոսքը տնտեսության իրական սեկտոր ուղղելու և ֆինանսական ոլորտի քրեականացման դեմ պայքարելու համար *(Հմգ, news.am)*:

ԹՄՐԱԴԵՂԱԾԻՆ, ած. **Թմրադեղից առաջացած**: Նրանք հայտնի էին .... **թմրադեղածին** խոր թմբիրի մեջ ընկղմվելով *(ԴԲ,*

էջ 25):

ԹՄՐԱԵՌԱՆԿՅՈՒՆԻ, գ. (դիպվ.)։ **Թմրանյութի շրջանառությամբ հայտնի երկրների եռյակ։** Կոկայինի համաշխարհային պլանտացիաները կենտրոնացած են **թմրաեռանկյունիում**, որի մեջ են մտնում Կոլումբիան, Պերուն և Բոլիվիան *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱԶԱՄԲՅՈՒՂ, գ. (դիպվ.)։ **Թմրանյութերի որոշակի տեսակների և քանակի ամբողջություն։** Թմրանյութերի **թմրազամբյուղի** մեջ կային կոկաին, հաշիշ, ալկոհոլ, ծխախոտ և ազդրամիս *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱԶԱՆԳՎԱԾ, գ. **Թմրանյութերի զանգված։** Կասկածյալի խոստովանությամբ **թմրազանգվածը** ուղարկել էր իր ծանոթը *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի գործարկման նպատակով իրականացվող զբոսաշրջություն։** Նոր սահմանափակումները կօգնեն պայքարել հանցագործության և այսպես կոչված **թմրազբոսաշրջության** դեմ *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱԻՐԱՑՈՒՄ, գ. **Թմրանյութի իրացում։ Թմրաիրացման** դեմ պայքարում ռեկորդային ցուցանիշներ են գրանցվել *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Թմրանյութի առևտրով զբաղվող կենտրոն։** Ադրբեջանի **թմրակենտրոնները** միայն շահում են աջակցության ավելացումից *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱՀԱՃՈՒՅՔ, գ. **Թմրանյութի առաջացրած հաճույք։** Նման եզրահանգում կարելի է անել լրագրողի «Տոտալ **թմրահաճույք**» գրքից *(Հմմ, news.am):*

ԹՄՐԱՀԱՆՑԱՆՔ, գ. **Թմրանյութի շրջանառությանն ու**

գործածությանն առնչվող հանցանք: Միջազգային **թմրահանցանքի** փաստ է բացահայտվել *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի հետ կապված հանցավոր գործունեություն:** Անհրաժեշտ է շարունակել սերտ աշխատանքը իրավասու ծառայությունների միջոցով, որպեսզի ժամանակին բացահայտվեն ահաբեկչության, ծայրահեղականության և **թմրահանցավորության** սպառնալիքները *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՌՍՏԻԿԱՆ, գ. **Ոստիկանության՝ թմրամոլության դեմ պայքարող բաժնի աշխատակից:** ՀԱՊԿ վեց երկրների **թմրառստիկանները** մեծ քանակությամբ թմրանյութ են առգրավել *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Պետություն, որտեղ տարածված է թմրանյութերի գործածությունն ու առևտուրը:** Կոլումբիայում ձևավորվել է **թմրապետություն** *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՍԵՐ, ած. **Թմրանյութ սիրող:** ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը կալանավորված կամ դատապարտված **թմրասեր** անձանց ևս մեկ անգամ հորդորել է *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՍՊԱՌՆԱԼԻՔ, գ. **Թմրանյութի իրացման և գործածության սպառնալիք:** Աշխատանքներ են տարվում ահաբեկչության, **թմրասպառնալիքի** դեմ պայքարի ոլորտներում *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՍՈՒԶԱՆԱՎ, գ. **Թմրանյութ տեղափոխող սուզանավ: Թմրասուզանավերն** օգտագործվել են Լատինական Ամերիկայից մաքսանենգ ճանապարհով ԱՄՆ թմրանյութեր տեղափոխելու համար *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերահսկողություն**

թմրանյութերի շրջանառության նկատմամբ: Թմրավերահսկողության վարչության աշխատակիցները ձերբակալել են ադրբեջանցի ապօրինի ներգաղթյալների *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ, գ. Տե՛ս **թմրավերահսկողություն:** Որոշ ժամանակ անց **թմրավերահսկման** հասցեով տեղեկատվություն է ստացվել, որ սիզախոտի փոխարեն կանեփ է աճել *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՏԵՍԱԿ, գ. **Թմրանյութի տեսակ:** Հայաստանում ամենատարածված **թմրատեսակը** ափիոնից պատրաստված թմրանյութերն են *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութի արտադրություն:** Այսօր կարծիք կա, որ ահաբեկչությունը ծնում է **թմրարտադրություն** *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՈՒՂԵՐՁ, գ. **Թմրանյութերի գործածության հետ կապված ծանուցում, ուղերձ:** Նրանց կողքին դրված է եղել, այսպես կոչված, **թմրաուղերձ՝** «Խալիսկո-Նոր սերունդ» մեքսիկական կարտելներից մեկի անունից, ինչը կարող է այս սպանությունների մեջ նրանց մասնակցության մասին վկայել *(Հմգ, news.am):*

ԹՄՐԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի արտադրության, գործածության, իրացման ոլորտներում իրականացվող քաղաքականություն:** Նրանց գլխավոր պահանջն ուղղված էր **թմրաքաղաքականության** բարեփոխմանը *(Հմգ, news.am):*

ԹՆԴԱՆՈԹԱՁԵՎ, ած. **Թնդանոթի ձև ունեցող:** Այդ հնարանքը Լանգդընին մուլտֆիլմի ճառագայթային հրացան հիշեցրեց՝ լայն, **թնդանոթաձև** փողով .... *(ԴԲ, էջ 81):*

ԹՌԱՆՑՔ, գ. **Արկանոց: ....** Երբ այն ծալվում է վերև, դրա վրա բացված մի քանի շարք մանր անցքերն ընկնում են ուղիղ արկանոցի (**թռանցք**) դիմաց .... *(ԱԳ, էջ 179):*

ԹՌԻՉՔԱԾԻՆ, ած. **Թռիչքից ծնված, առաջացած**: .... **Թռիչ-քածին** թեթև սրտխառնուքով բռնված, Ռոբբրթ Լանգդոնը օդա-նավասանդուղքով իջավ .... *(ԴԲ, էջ 26):*

ԹՌԻՉՔԱՏԱԽՏԱԿ, գ. (գղտնտ.): **Փեթակի արկանոցի տակ տեղադրված՝ մեղուների թռիչքի համար ծառայող նեղ տախ-տակ:** Փեթակի յուրաքանչյուր կողմն ունի մեկ արկանոց՝ իր **թռիչքատախտակով** *(ԱՄ, ՍՄ, էջ 51):*

ԹՌՉՆԱՍՈՍԻՆՁ, գ. **Թանձր, մածուցիկ նյութ**: Կակազը .... իր ներաշխարհի թանձր **թռչնաասոսնձից** ազատվելու ձգտումով թպրտացող թռչնակի է նման *(ՅՄ, էջ 5):*

ԹՈՒԹՈՒՆԱՀՈՏ, ած. **Թութունի, ծխախոտի հոտ ունեցող:** Գոհարն իրենց **թութունահոտ** ու լվացքաբույր տունն էր ու-զում.... *(ՀԱ, էջ 64):*

ԹՈՒՆԱԿԱՐՄԻՐ, ած. Քաշիվագին **թունակարմիր** վրձնով խաչ էր քաշել այդ գրության ու լեռնագագաթի վրա.... *(ՅՄ, էջ 107):*

ԹՈՒՆԱՐՁԱԿ, ած.**Թույն արձակող:** Գուցե ես գնում եմ նույն այն ճանապարհով, որով Արտաշատը լքել են նրա բնա-կիչները՝ փախչելով ճահճուտների **թունարձակ** գազերից *(ԳԽ, էջ 143):*

ԹՈՒՆՈՒՆԱԿ, ած. (գղտնտ.): **Թունավորելու ունակ՝ ըն-դունակ:** .... Քլոր պարունակող ինսեկտիցիդները բարձր ջերմաստիճանի պայմաններում պակաս **թունունակ** են *(ԱՄ, ՍՄ, էջ 117):*

ԹՈՒՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Թունավորելու ունակ՝ ընդունակ լինելը**: Իմանալ պրեպարատների **թունունակության** հատկությունները, նրանց կիրառման ձևերը .... *(ԱՄ, ՍՄ, էջ 113):*

Ժ

ԺԱՅՌԱԳՆԱՑ, գ. **Ժայռեր մագլցող**: Հետո անդունդը երիզող գագաթը նվաճած **ժայռագնացի** պես բռնեց ամենավերևի դարակից *(ԴԲ, էջ 329):*

ԺՈՂԵՐԳԻՉ, գ. (հպվ.): **Ժողովրդական երգիչ:** Հրապարակումն այսպես է մակագրել՝ օգտագործելով **ժողերգիչ** բառը *(Հմգ, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԳԵՏ, գ. **Ժողովրդագրությամբ զբաղվող մասնագետ: Ժողովրդագրագետները** պարզել են մարդկության ծերացման առավելությունները *(Հմգ, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԹԱՓ, ած. (դիպվ.): Որպեսզի ինչ-որ մարդիկ կուլակաթափ չլինեն, նրանք պարզապես **ժողովրդաթափ** են անում ամբողջ Հայաստանը *(Հմգ, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆԱԿԱՆ, ած. Ներկայացված մտահոգությունները հիմք են տալիս պնդելու, որ նախաձեռնության իրացումը կարող է որոշակի վտանգներ ծնել ու բացասական ազդեցություն ունենալ իրավունքի գերակայության, իրավական, ժողովրդավարական և **ժողովրդաիշխանական** հռչակված Արցախի պետականության վրա *(Հմգ, news.am):*

ԺՈՂՎԱՐՉԱՊԵՏ, գ. (հպվ.): **Ժողովրդական վարչապետ:** Նրանք են **ժողվարչապետի** հույսն ու հենարանը *(Հմգ, news.am):*

Ի

ԻՆԺԵՆԵՐԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ած. **Ինժեներական և հետախուզական։ Ինժեներահետախուզական** աշխատանքներ իրականացնելիս վիրավորում ստացած երեք քաղաքացիներից երկուսի առողջական վիճակը շարունակում է նույնը մնալ *(Հմգ, news.am)։*

ԻՆԺԵՆԵՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ած. **Ինժեներական և պաշտպանական։ Ինժեներապաշտպանական** միջոցառումներ իրականացնելու համար ընտրվել էին ՀՀ Շիրակի մարզի Առափի և Տավուշ մարզի Գետահովիտ համայնքները *(Հմգ, news.am)։*

ԻՆԺԵՆԵՐԱՍԱԿՐԱՎՈՐԱՅԻՆ, ած. **Ինժեներական և սակրավորական։** ՀՀ ՊՆ N զորամասի **ինժեներասակրավորային** վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետևանքով զոհվել են ժամկետային զինծառայողներ *(Հմգ, news.am)։*

ԻՆԺԵՆԵՐԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ած. **Ինժեներական և տրանսպորտային։** Հողամասը կառուցման և սպասարկման համար չի գտնվում **ինժեներատրանսպորտային** օբյեկտների օտարման գոտիներում *(Հմգ, news.am)։*

ԻՆԺԵՆԵՐԱՓՐԿԱՐԱԿԱՆ, ած. **Ինժեներական և փրկարարական։** Հնարավոր կլինի առավել արդյունավետ իրականացնել **ինժեներափրկարական** աշխատանքներ *(Հմգ, news.am)։*

ԻՆԺԵՆԵՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ, ած. **Ճարտարագիտական և ֆիզիկայի։** Խմբի անդամներից յոթը Մոսկվայի **ինժեներաֆիզիկական** ինստիտուտի շրջանավարտներ էին *(Հմգ, news.am)։*

ԻՆՔՆԱՊԱՀՈՎՎՈՂ, ենթ. դերբ. **Ինքն իրեն ապահովող։** Նրանց հաջողվել է հասնել ջերմամիջուկային բռնկման, որն իրենից ներկայացնում է ջերմամիջուկային սինթեզի **ինքնաա-**

պահովվող ռեակցիա *(Հմգ, news.am):*

ԻՆՔՆԱԱՌԱՋԱԴՐՎԵԼ, բ. **Ինքն իրեն առաջադրել:** Հանձնաժողովում ընդգրկվելու համար թեկնածուներ կարող են առաջադրվել կամ **ինքնաառաջադրվել** *(Հմգ, news.am):*

ԻՆՔՆԱԲՌՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իրեն բռնանալը:** Կարոտը իր հերթին կարող է պատճառ դառնալ մի շարք հոգեբանական խնդիրների՝ ընկճախտի, ... **ինքնաբռնության** տարատեսակ դրսևորումների.... *(Կայարան, 2022, թ. 3):*

ԻՆՔՆԱԳՈՎԱՍԱՆԱԿԱՆ, ած. **Ինքնագովասանքին բնորոշ**: Աբդուլ Համիդը հետաքրքրվել է .... և կրկին **ինքնագովասանական** շեշտադրումներ արել *(Հայ. հարց, էջ 15):*

ԻՆՔՆԱՆԵՐՍՈՒԶՎԵԼ, բ. **Ինքն իր մեջ ներսուզվել**: ....**Ինքնաներսուզվեց,** սկսեց ծոմ պահել ու ինքնամոռաց գետնին պառկել՝ ընկղմված երազների մեջ *(Կայարան, 2022, թ. 4):*

ԻՆՔՆԱՊԱՏԿԱՆՈՒՄ, գ. **Ինքն իրեն պատկանելը**: Դա ահավոր **ինքնապատկանում** էր թվում *(ՅՄ, էջ 91):*

ԻՇԽԱՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, գ. **Իշխող, կառավարող համակարգի կարգավորումը:** Սակայն նա գաղափար անգամ չունի այն մասին, թե Աստված «տեխնիկապես» ինչպես է իրականացնում **իշխանակարգավորման** իր գործառույթը *(ՉԻ, 23.04.2023):*

ԻՋՎԱՐԵԼ, բ. **Իջնել ներքև:** Մարմարիկ գետը հոսում էր ճանապարհի կողքով, մի քանի քայլ **իջվարեցինք**, ու տաք ջրերից գլաքարերը ժանգագույն, կարմրավուն, տարաշխարհիկ տեսք էին ստացել.... *(Նորք, 2021, թիվ 1):*

ԻՍԼԱՄԱՖՈԲԻԱ, գ. **Ատելություն իսլամի նկատմամբ:** Եվրոպայում ռասիստական, աջակողմյան հայացքները, փախըստականների դեմ հանդես գալն ու **իսլամաֆոբիան** մտա-

հոգիչ են *(Հմգ, news.am)*:

ԻՐԱՆԱՀԱՅՈՒՀԻ, գ. **Իրանահայ կին**: Այն գործվել է բրդից **իրանահայուհու** ձեռքով .... *(ԱԳ, էջ 69)*:

ԻՐԱՎԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, գ. **Իրավական կանոններով կազմավորվելը**: .... Նորմաստեղծ աշխատանքը բաժանում են երկու փուլերի՝ **իրավակազմավորում** և իրավաստեղծում *(ՀՄ, էջ 5)*:

ԻՐԱՎԱԿԻՐԱՌՈՒՄ, գ. **Իրավունքը կիրառելը**: .... Հանգեցնում է իրավակիրառման գործընթացում բազմաթիվ խնդիրների .... *(ՀՄ, էջ 12)*:

ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրավական մտածողություն**: .... Իրավամտածողության ձևավորման և մակարդակի բարձրացման գործում .... էական աշխատանքներ են կատարվում .... *(ՀՄ, էջ 13)*:

ԻՐԱՎԱՍՏԵՂԾ, ած. **Իրավական կանոններին համապատասխան ստեղծված**: .... Պահանջում էին .... **իրավաստեղծ** աշխատանքի փորձառության ձևավորում և կատարելագործում *(ՀՄ, էջ 3)*:

Լ

ԼԱՅՆԱՏԱՓԱԿ, ած. **Լայն և տափակ**: Հետո գնաց, որ տանտիրուհուց իկեբանայի համար նախատեսված **լայնատափակ** ծաղկաման.... ուզի *(ՅՄ, էջ 136)*:

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Լեզվամշակութաբանությանը բնորոշ**: .... Մշակվել է .... մեթոդիկա՝ հիմնված .... **լեզվամշակութաբանական** մոտեցման վրա *(ԱԿ, էջ 7)*:

ԼԵԶՎԱՊՆԱԿ, գ. (փխբ.): **Լեզվական նյութի և որակը կազմող տարրերի ամբողջություն**: Գիտություն-քննադատություն-

ընթերցում՝ այս երեք հասկացություններն են հյուսում ստեղծագործության մեկնության **լեզվապնակը** *(ՍՍ[1], էջ 96):*

ԼԵՌՆԱՀԵԾԱՆՎԱՍՊՈՐՏ գ. **Լեռնային հեծանվասպորտ**: Աղվերանում կայացավ **լեռնահեծանվասպորտի** Հայաստանի անդրանիկ առաջնությունը *(Հեռ., Freenews, 21.06.2023):*

ԼԵՐԿԱԳԼՈՒԽ, ած. **Անմազ գլուխ ունեցող**: Ահա ….շան քոթոթներ. **լերկագլուխ**, եբենաշող երկար աչքերով բարձերին ընկողմանած…. *(ՎՆ, էջ 29):*

ԼԻՑՔԱՀՈՂ, գ. **Լցված հող:** ….Ես ընկերոջս գյոթեական հիշողություններին եմ վստահություն հայտնում, տրակտորներով կրած **լիցքահողի** անդունդը գրավիչ դարձնելու նրա բազմամիլիոնանոց ծրագրին *(ԳՍ, էջ 19):*

ԼՈՐՁԱԽԱՌՆ ած. **Լորձի հետ միասին, լորձով խառնված: Լորձախառն** թանձր արյուն էր հոսում բերանից *(ՎՍ[1], էջ 71):*

ԼՈՒՍԱԿՈՓԵԼ, բ. (գոտնտ.): **Լուսավոր վայրում պահելով՝ տնկելու համար ավելի պիտանի դարձնել:** Կանխարգելիչ-նախազգուշական (ոչ քիմիական) միջոցառումները՝ …. օգտագործել միայն առողջ, հավաստագրված տնկանյութ, տնկումից առաջ պալարները **լուսակոփել:** Այդ նպատակով պալարները մի քանի օր պահել լուսավոր վայրում՝ ծածկի տակ, որպեսզի կանաչեն *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 137):*

ԼՎԱՑՔԱԲՈՒՅՐ, ած. **Լվացվող իրերի բույր ունեցող**: Տե՛ս ԹՈՒԹՈՒՆԱՀՈՏ-ի օրինակը:

ԼՐԱՀԵՆ, գ. **Լուրեր գողացող:** Այսօր մեր հասարակությունը **լրահեն** կայքերի պակաս չունի *(Հեռ., Հ2, 19.01.2023):*

ԼՐԱՏՎԱԱԼԻՔ, գ. **Լրատվական ալիք:** Հանրային **լրատվաալիքը** քարոզարշավի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի

համար ապահովում է արդարացի լուսաբանում *(Հմg, news.am)*:

ԼՐԱՏՎԱԲԱԺԻՆ, գ. **Լրատվական բաժին:** Մամուլի ասուլիսին ներկա են եղել լիբանանահայ լրատվամիջոցների, այդ թվում՝ լիբանանյան եռալեզու հեռուստաընկերության հայկական **լրատվաբաժնի** խմբագիրները *(Հմg, news.am)*:

ԼՐԱՏՎԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ, ած. **Լրատվական-վերլուծական:** Քաղաքական խաժամուժին սպասարկող ողջ **լրատվա-վերլուծական** դաշտը շրջանցել է հայտարարությունը *(Հմg, news.am)*:

ԼՈՒՍԱՕԴԱԱՆԹԱՓԱՆՑ, ած. **Լույսի և օդի անանցանելիությունը ապահովող:** Արկղերը ծածկված են մուգ **լուսաօդաանթափանց** թաղանթով *(ԹՍ և այլք, էջ 38)*:

Խ

ԽԱՂՈՂԱԾԱԾԿ, գ. **Խաղողի որթերով կազմված ծածկ, թառմա:** Թաքստոցի նման քաղցր է նրա բակը, բոլոր դիտարկելի կողմերից մագլցող **խաղողածածկերի** մեջ է *(ԳՍ, էջ 155)*:

ԽԱՂՈՂԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Խաղող մշակելը:** Հայկական լեռնաշխարհը .... **խաղողամշակության** .... հնագույն հայրենիք *(ՌՆ, էջ 12)*:

ԽԱՆՈՒԹԱՄԵՐՁ, ած. **Խանութին մոտ, կից գտնվող:** Դուրս եկան, **խանութամերձ** հրապարակից տաքսի վարձեցին *(ԳԽ, էջ 169)*:

ԽԱՌՆԱՆՈՒՆ, գ. **Խառը անուն:** ....Նոր հերոսի իրական, հնարավոր, նեղացկոտ ապագան լուծվեց **խառնանունով** *(ԳՍ, էջ 97)*:

ԽԱՐԱՄԱԿՈՒՏԱԿ, գ. **Թափոնների, մոխրակույտերի,**

լեռնային ապարների, նստվածքների, խարամի կուտակատեղ: Թափոնների տեղակայումը կատարվում է հատուկ կահավորված շինությունում: Այդպիսիք են արտադրական թափոնների, լեռնային ապարների կույտերի, մոխրակույտերի կուտակատեղերը, լճակները և նստվածքակուտակները, **խարամակուտակները** և պոչամբարները *(ԹՍ և այլք, էջ 28)*:

ԽՄՈՐԱՓԱՓՈՒԿ, ած. **Խմորի նման փափուկ**: .... **Խմորափափուկ** դիմագծերով տղամարդ էր *(ԴԲ, էջ 228)*:

ԽՆՁՈՐԱԿԱՆԱՉ, ած. **Կանաչ խնձորի գույն ունեցող**: Դոլորեսը լվացքն էր հավաքում պարանից՝ տան հետնակողմի **խնձորականաչ** լույսով պարուրված *(ՎՆ, էջ 64)*:

ԽՈՀԱՇՈՒՆՉ, գ. **Մտավոր, հոգևոր շունչ, ոգի:** .... Ոգեղեն հայի գենոտիպի **խոհաշունչն** է ասվածը *(Նորք, 2021, թիվ 1)*:

ԽՈՀԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Խոհական բանաստեղծություն:** Պարույր Սևակն այս բանաստեղծությունը անվանել է Սայաթ-Նովայի **խոհերգության** «գլուխ-գործոցը».... *(ՍՍ[1], էջ 45)*:

ԽՈՆԱՎԱԼԻՑՔԱՅԻՆ, ած. (գղտնտ.): **Խոնավացնող՝ խոնավ դարձնող:** Բույսերի ձմեռադիմացկունության բարձրացման նպատակով բազմամյա տնկարկներում կատարում են աշնան **խոնավալիցքային** ջրումներ *(ԹՍ,ՍԼ, էջ 35)*:

ԽՈՍՔԱՐՎԵՍՏԱՅԻՆ, ած. **Խոսքարվեստին բնորոշ:** Նորագույն գրականությանը հատուկ է ուշադրությունը գրականության այդ հիմնարար, եթե կարելի է այդպես ասել՝ **«խոսքարվեստային»** առանձնահատկությունների նկատմամբ *(ՍՍ[1], էջ 168)*:

Ծ

ԾԱՂԿԱԳՈՂ, ած. **Ծաղիկներ գողացող:** Եվ ամոթով չմնալու համար ստիպված էի **ծաղկագող** դառնալ *(ՅՄ, էջ 135):*

ԾԱՂԿԱԿՈՒԺ, գ. **Ծաղկաբույլ:** .... Թիթեռը վետվետում էր ....**ծաղկակուժում** թոշնած կամելիայի շուրջը *(ՅՄ, էջ 194):*

ԾԱՂԿԱՆԵԿՏԱՐԱՅԻՆ, ած. **Ծաղկի նեկտարին հատուկ:** Ահա այս մեղրն ունի **ծաղկանեկտարային** ծագում *(ԱԳ, էջ 207):*

ԾԱՂԿԱՓՈՇԵՏՈՒ, ած. **Ծաղկափոշի տվող:** Ստորև ներկայացվում են Հայաստանում վաղնջագույն ժամանակներից հայտնի առավել նեկտարատու և **ծաղկափոշետու** բույսեր *(ԱԳ, էջ 207):*

ԾԱՌԱԳՈՎՔ, գ. **Ծառի գովք**: Ահա այդ **ծառագովքը**, որ հաճախ է երգվել հարսանիքներում *(ԱԳ, էջ 77):*

ԾԱՌԱԹՓԱՊԱՏՈՒՄ, գ. (գոտնտ.): **Ծառեր և թփեր տընկելը:** .... Պարզագույն և հասանելի միջոցառում կարող է համարվել նաև ջրաէկոհամակարգերի առափնյա գոտու **ծառաթփապատումը** *(ԹՍ,ՍԼ, էջ 43):*

ԾԱՌԱԹՓԱՏԵՍԱԿ, գ. (գոտնտ.): **Ծառաթփերի տեսակ:** Ջրակարգավորիչ և հակաէրոզային անտառաշերտերում ընդգրկում են արմատային հզոր համակարգով **ծառաթփատեսակները ....** *(ԹՍ,ՍԼ, էջ 50):*

ԾԵՐՊԱՅԻՆ, ած. (գոտնտ.): **Մեղվամոր տեսակ**: Մայրերն իրենց ծագմամբ լինում են պարսային, **ծերպային** և արհեստական *(ԱՄ, ՍՄ, էջ 41):*

ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ, ած. **Ծիսական և պաշտամունքային**: Բերված է .... **ծիսապաշտամունքային** մի քանի սովորույթների վերաբերյալ հիշատակությունների բնութագրութ-

յունը *(ՌՆ², էջ 205):*

ԾԽԱԽՈՏԱԴԵՂԻՆ, ած. **Ծխախոտի դեղնություն ունեցող:** ….Հիմա գրեթե զգում էի, թե թշվառն ինչպես է կծկվում՝ անտրամադիր հանդուրժելու լոգարանի գորշադարչնագույնն ու օխրան և **ծխախոտադեղին** ծեփը *(ՎՆ, էջ 122):*

ԾԽԱԽՈՏԱՓՈՂ, գ. **Ծխախոտի փող՝ գլանակ:** Փողոցների աղտոտումը **ծխախոտափողերի** մնացորդներով խիստ վտանգավոր է միջավայրի համար *(Հեռ., Շանթ, 22.02.2023):*

ԾԽԱՄՈՐՃԱՎՈՐ, ած. **Ծխամորճ ունեցող:** …. Անցա անգլիական գրականությանը, որի գիրկն են նետվում բազմաթիվ ամուլ պոետներ՝ վերածվելով թվիդե լավորակ պիջակ հագած **ծխամորճավոր** դասախոսների *(ՎՆ, էջ 24):*

ԾՂՈՏԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Ծղոտի գույնին տվող դեղին:** Հասուն էգերի գունավորումը, վեգետացիայի շրջանից կախված, փոփոխվում է **ծղոտադեղնավունից** մինչև շագանակագույն *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 25):*

ԾՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Ծնողին որպես կենտրոն ունեցող:** Երեխաների և նրանց ծնողների հետ աշխատանքը հիմնված է **ծնողակենտրոն** խորհրդատվության վրա *(Հմգ, schoolandcollegelistings.com):*

ԾՈՎԱՈՐՈՐ, գ. **Ծովային ջրլող թռչուն:** …. Բազմաթիվ **ծովաորորներ** փախչում էին այդտեղից ու նստում բրնձի դաշտերի վրա *(ՅՄ, էջ 4):*

ԾՈՎԱՍԵՐ, ած. **Ծով սիրող:** …. Ավազին ոտնահետքեր չկային, ոչ իրենը, ոչ էլ նույնիսկ գիշերներն այդ ափերին զբոսնող **ծովասեր** շներինը *(ՀԱ, էջ 91):*

ԾՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծորելի լինելը, ծորելու հատկու-**

թյուն ունենալը: Նեխած զանգվածը ուժեղ արտահայտված **ծորվածություն** ունի *(ԱՄ, ՍՄ, էջ 94):*

ԾՐԱՐԱՅԻՆ, ած. **Մեղվաբուծության տերմին: ....** Ապացուցվեց **ծրարային** մեղվաընտանիքների բարձր արդյունավետությունը Ռուսաստանի հյուսիսային շրջաններում .... *(ԱՄ, ՍՄ, էջ 67):*

Կ

ԿԱԹԻԼԱԿԵՐՊ, մկբ. **Կաթիլի նման՝ կերպով**: .... Շրջանաձև ծակենք խողովակը և շատրվանը **կաթիլակերպ** կմաղվի դեպի երիցուկի թերթիկներ.... *(ԳՍ, էջ 125):*

ԿԱԹՆԱԽՈՒՄ, ած. **Կաթ խմող**: Նրանք նաև **կաթնախում** են *(ՌՆ², էջ 27):*

ԿԱԹՆԱՄՇԱԿ, ած. **Կաթ մշակող:** .... Տեղափոխվում էին հեռավոր արոտավայրերը .... **կաթնամշակ** կանանց հետ *(ՌՆ¹, էջ 150):*

ԿԱՆԱՉԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Կանաչին տվող շագանակագույն**: .... Մուգ ըմպանակի ներսում փրփուր կապած **կանաչաշագանակագույն** թեյի մեջ սպիտակ, տաք կաթ ցայտեց.... *(ՅՄ, էջ 50):*

ԿԱՆԳԱՌԱՀԱՐԹԱԿ, գ. **Փոխադրամիջոցի կանգառի համար նախատեսված տարածք:** Երևանի համայնքապետարանի նոր ծրագրով պետք է տեղադրվեն արդիական կանգառասրահներ և նորոգվեն **կանգառահարթակները** *(Հեռ., Հ1, 24.02.2023):*

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ, ած. **Կանխատեսելի**: .... **Կանխատեսումային** միջավայրում փորձաքննություն չանցնելու գործոններն իրենց զգացնել տվեցին .... *(ՀՄ, էջ 18):*

ԿԱՊՏԱԽԱՎ, ած. **Կապույտ խավ ունեցող**: …. Նորից դուրս բերեց **կապտախավ** կազմով ալբոմը *(Նորք, 2021,թիվ 1):*

ԿԱՊՏԱՊԱՏԻՃ, ած. **Կապույտ պատիճ ունեցող:** ….Ուղղակի **կապտապատիճներ** են, իքս վիտամին *(ՎՆ, էջ 190):*

ԿԱՌՈՒՑԱՐԿԻՉ, գ. **Կառուցող, առաջ բերող:** Այս մոտիվը սովորաբար հիմնված է …. տարբերությունները հակադրող «մենք-նրանք» ինքնության **կառուցարկչի** վրա *(Ատ. խոսք, էջ 18):*

ԿԱՌՈՒՑԱՐԿՈՒՄ, գ. **Կառուցում, առաջ բերում**: …. [Մեդիան] …. ներգրավված լինելով …. իդեոլոգեմների **կառուցարկման** գործում, թիրախավորում է …. *(Ատ. խոսք, էջ 6):*

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Կառուցվածքային բնույթ ունենալը՝ ստանալը: Կառուցվածքայնացումն** ու սեգմենտացումը էականորեն բացահայտում են գրական երկի վիճակագրական համակարգը…. *(ՍՍ[1], էջ 78):*

ԿԱՎԱՑԵԽՈՏ ած. **Վրան կավացեխ քսված:** Հայրը կանաչ խոտի մի փունջ պոկեց, մաքրեց **կավացեխոտ** արյունն ու տրնքաց *(ՎՍ[1], էջ 71):*

ԿԱՐԾՐԱՏԻՊԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Կարծրատիպի վերածելը**: Հետազոտողները **կարծրատիպականացման** մեջ ավանդույթի մեխանիզմի միջուկն …. են տեսնում …. *(ԱԿ, էջ 11):*

ԿԱՐՏՈՖԻԼԱՄՇԱԿՈՒՄ, գ. **Կարտոֆիլի մշակում**: **Կարտոֆիլամշակման** կարևոր շրջաններից մեկը Շուշվա գավառն էր …. *(ՌՆ[1], էջ 97):*

ԿԵՂԾԱԾՈՐ, ած. **Կեղծավոր, շողոմ:** …. Շոու է, հանդես, ցուցադրություն, կարելի էր չնայել, բայց երբեմն գրավիչ էր՝ **կեղծածոր** դեմքեր, որ խոսում են, համոզում, արդարանում…. *(ԳԽ, էջ 98):*

ԿԵՆԱՑԱԿԱՐԳ, գ. **Կենացների հաջորդականություն:** Հարութը Արսենին հավասար խմում էր, կարող էր մեկումեջ կամ կիսատ-կիսատ խմել, բայց ոչ, **կենացակարգին** համապատասխան, լիարժեք խմում էր…. *(ԳԽ, էջ 117):*

ԿԵՆՍԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ, ած. **Կենսաբանական ահաբեկչությանը վերաբերող:** Հաշվել էին, որ **կենսաահաբեկչական** գրոհի դեպքում կպահանջվի 132 միլիոն դեղաչափ պատվաստանյութ *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. **Կենսադեղագործությանը վերաբերող:** Հարավկորեական խոշորագույն ընկերությունը հայտարարել է, որ ներդրումները կօգնեն **կենսադեղագործական** հատվածի զարգացմանը *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսաբանական դեղագործություն: Կենսադեղագործությունը** և առողջապահությունը, արհեստական ինտելեկտը, օվկիանոսային տեխնոլոգիաները առավել վտանգված են կառավարության կողմից հովանավորվող հաքերների կողմից *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԴԻԶԵԼ, գ. **Դիզելային վառելիքի կենսաբանական տարբերակ՝ փոխարինիչ:** Քննարկում է վառելիքային խառնուրդներում **կենսադիզելի** պարտադիր մակարդակի բարձրացումը՝ ֆերմերների համար գներին աջակցելու նպատակով *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԴԻԶԵԼԱՅԻՆ, ած. **Կենսադիզելին վերաբերող:** Ճապոնական տրանսպորտային ընկերությունը սկսել է **կենսադիզելային** վառելիք արտադրել *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, գ. **Կենսաբանական դիվերսիֆիկացում:** Այս մասին ասվում է **կենսադիվերսիֆիկաց-**

ման մասին Եվրահանձնաժողովի կողմից հրապարակված ագրարային ռազմավարության մեջ *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԷԹԻԿԱ, գ. **Կենսաբանական էթիկա:** Սկսում են քննարկել **կենսաէթիկայի** մասին օրինագիծը, որը մեղմում է Արևմտյան Եվրոպայի ամենախիստ կանոնների մի մասը *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԷԿՈԼՈԳ,գ. **Կենսաբնապահպան:** Այսպիսի տեսակետ է հայտնել **կենսաէկոլոգը** *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Կենսաբնապահպանական:** Պետական արգելոցի գիտական բաժնի կողմից ընթանում են ողնաշարավոր կենդանատեսակների և գիշատիչ թռչունների **կենսաէկոլոգիական** առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման աշխատանքներ *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԷՆԵՐԳԵՏԻԿ, գ. **Կենսաբանական էներգետիկայի մասնագետ: Կենսաէներգետիկները** համարում են, որ կատուն իսկական էներգատեղեկատվական սարք է *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսաբանական ժողովրդագրություն:** Այս կարծիքին համաձայն չէ **կենսաժողովրդագրության** կենտրոնի աշխատակիցը *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԻՆԺԵՆԵՐ, գ. **Կենսաճարտարագիտության մասնագետ: Կենսաինժեներն** ըմպելիքի բանաձևը գտել է ոլորտի մասին ամսագրում *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԻՆԺԵՆԵՐԻԱ, գ. Նույնն է՝ **կենսաճարտարագիտություն:** Կատալոնիայի **կենսաինժեներիայի** ինստիտուտի գիտնականները ստեղծել են վերքերի մանրէների դեմ պայքարող նանոբատեր *(Հմմ, news.am):*

ԿԵՆՍԱԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, գ. **Կենսաբանական ինֆորմա-**

տիկա: Եթե գիտակցում ենք՝ **կենսաինֆորմատիկան** մեծ ինդուստրիա է դառնալու, ապա մոտակա երկու-երեք տարվա խնդիրը պետք է լինի այդ ոլորտում առավելագույն մարդկային կապիտալ ձևավորելու պրոցեսների խթանումը *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱԿԱՅԱՆՔ, գ. **Կենսական նշանակություն ունեցող կայան, հարմարանք կամ սարքավորում:** Առաջադիմական վերամշակում են համարվում կենսագազային տեխնոլոգիան ...., փոքրիկ **կենսակայանքները**, որտեղ թափոնները ենթարկվում են ֆերմենտների և մանրէների ազդեցությանը *(ԹՍ և այլք, էջ 36):*

ԿԵՆՍԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Կենսական հոգեբանությանը վերաբերող:** Այժմ, երբ փոխվել է բովանդակ աշխարհը, երբ մարդու **կենսահոգեբանական** առնչություններում գործում են կլոնավորումն ու գենոմիկան.... *(ՍՍ[1], էջ 57):*

ԿԵՆՍԱՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Կենսաճարտարագիտությանը հատուկ: .... Կենսաճարտարագիտական** հիդրոկառույցներն արդյունավետ են նաև բնական կերհանդակներում *(ԹՍ,ՍԼ, էջ 48)*:

ԿԵՆՍԱՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսաբանական ճարտարագիտություն:** Նախատեսվում են հիմնարար հետազոտություններ մանրէաբանության, մոլեկուլային կենսաբանության, **կենսաճարտարագիտության** բնագավառներում *(Հմգ, news.am):*

ԿԵՆՍԱՎՃԻՌ, ած. **Կենսականորեն վճռական:** Քանի գնում, այս չգրվող կողմերից բարբառը **կենսավճիռ** զորություն է վերապրում *(ԳՍ, էջ 179):*

ԿԵՌՈՒԾՈՒՌ ած., մկբ. **Կեռումեռ, ծուռումուռ**: Ճանա-

պարիզը անտառի միջով **կեռուծուռ** փախավ, ծառաբներին շուլալվելով ինքն իր մեջ խճճվեց ու դուրս ելավ բացատ *(ՎՍ, էջ 9):*

ԿԵՐԱԲԱԶԱ, գ. Այստեղ՝ **մեղրատու կամ նեկտարատու բույսերով հարուստ վայր:** Որպեսզի ավելի շատ մեղր հավաքվի, պետք է ոչ միայն գիտակ լինել մեղվաբուծության տեխնիկային, այլև շրջահայացորեն օգտագործել **կերաբազան***(ԱԳ, էջ 204):*

ԿԵՐԱԿՐԱՓԱՅՏԻԿ, գ. **Որպես գդալ գործածվող փայտիկ:** ….Նա ոչ մի հոգս չուներ. **Կերակրափայտիկների** պես, որոնք խնամքով տեղավորված են տուփի մեջ *(ՅՄ, էջ 66):*

ԿԻԲԵՌԳՈՐԾ, գ. **ՏՏ ոլորտում ծավալվող աշխատանք:** Կիբեռնետիկայի ոլորտի ավստրալացի մասնագետը դարձել է երկրի պատմության մեջ առաջին **կիբեռգործերի** դեսպանը (Ambassador for Cyber Affairs) *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող գործողություն:** Ընկերությունը տեխնիկական աջակցություն է ցուցաբերել **կիբեռգործողություններին**, որոնք անցկացրել են ԱԴԾ-ն, Գլխավոր հետախուզական վարչությունն ու Արտաքին հետախուզության ծառայությունը, հայտարարել է Սպիտակ տունը *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող գործունեություն:** Իրանը չի արդարացրել այդ ակնկալիքները «Ասադի վարչակազմին աջակցող իր գործողությունների ու տարածաշրջանում միտումնավոր վնասակար ակցիաներին՝ այդ թվում **կիբեռգործունեությանը**, բալիստիկ հրթիռների ագրեսիվ զարգացմանն ուղղված իր աջակցության կապակ-

ցությամբ» *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտին վերաբերող գրագիտություն:** Այնպիսի գիտելիքներ և հմտություններ, ինչպիսիք են՝ մեդիագրագիտություն, **կիբեռգրագիտություն**, ֆինանսական գրագիտություն և այլն, որոնք այժմ սովորողները ստանում են հիմնականում ոչ ֆորմալ կրթության միջոցով, պետք է տեղ գտնեն ֆորմալ կրթության մեջ *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԴԱՍԸՆԹԱՑ, գ. **ՏՏ ոլորտի դասընթաց:** Պենտագոնի **կիբեռդասընթացներին** 14 հազար հաքեր է մասնակցել *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԴԵՍՊԱՆ, գ. **ՏՏ ոլորտի դեսպան: Կիբեռդեսպանի** պաշտոն ստեղծելու մասին ապրիլին հայտարարել էր Ավստրալիայի վարչապետը՝ ներկայացնելով ազգային «Կիբեռանվտանգության ռազմավարությունը» *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԶԵՂԾԱՐԱՐ, գ. **ՏՏ ոլորտի զեղծարար: Կիբեռզեղծարարները** ջանք չեն խնայում *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԶԵՆՔ, գ. (փխբ.): **ՏՏ ոլորտում կիրառվող զենք:** Ի տարբերություն մարտական ավիացիայի, սուզանավային նավատորմի և հրթիռամիջուկային զենքի՝ **կիբեռզենքը** մասշտաբային արդյունաբերական բազա չի պահանջում, հետևաբար ահաբեկչական կազմակերպությունների կողմից դրա օգտագործման ռիսկը բազմապատկվում է *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԶՈՐՔ, գ. (փխբ.): **ՏՏ ոլորտում զբաղված մարդկանց միավորում՝ զորք:** Լեհաստանում **կիբեռզորքեր** կստեղծվեն: Այս մասին ասել է Լեհաստանի պաշտպանության նախարարը *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԻՐԱԿԱՆ, ած. **Կիբեռիրականը** միակ փախստա-

վայր է դառնում, զրադաշտական վրանի հարցում համարյա թե ճիշտ էի *(ԳՍ, էջ 133):*

ԿԻԲԵՌԽԱԲԵԲԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող խաբեբայություն:** Google-ը, Yahoo-ն, Facebook-ը, AOL-ը և Microsoft-ը միավորվում են փոստային սփամի և **կիբեռխաբեբայության** տեսակներից մեկի՝ ֆիշինգի դեմ պայքարելու համար *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող խաբեություն:** Ընկերությունների համատեղ հայտարարության մեջ ասվում է, որ փոստային սփամի և **կիբեռխաբեության** դեմ պայքարելու համար նրանք ստեղծելու են աշխատախումբ, որը զբաղվելու է իսկական էլեկտրոնային նամակների ընդհանուր կայուն ձևերի վերամշակմամբ *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտում իրականացվող խարդախություն:** ԱՄՆ-ում ռուս պատգամավորի որդուն **կիբեռխարդախության** համար ազատազրկման են դատապարտել *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԽՄԲԱՎՈՐՈՒՄ, գ. **ՏՏ ոլորտում գործող խմբավորում:** Փոփ աստղի սոցիալական էջն իրենց նպատակների համար գործածել են **կիբեռխմբավորման** հաքերները *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԽՈՒԼԻԳԱՆ, գ. **ՏՏ ոլորտում գործող օրինազանց: Կիբեռխուլիգանները** տիրացել են երգչուհու Թվիթերին և նրա անունից էրոտիկ բնույթի հաղորդագրություններ ուղարկել *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌԽՈՒՄԲ, գ. **ՏՏ ոլորտում գործող խումբ:** Սոցցանցում երգչուհու էջի գրառումներին վերաբերող մեկնաբանութ-

յունները պարունակում էին վնասակար ծրագիր բրաուզերի ընդլայնման համար, որը կապակցված է **կիբեռխմբի** սերվերի հետ *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌԾՈՎԱՅԻՆ, ած. **ՏՏ ոլորտում գործող՝ ծովային հիվանդության հատկանիշներ ունեցող:** Վերջերս մասնագետները սկսել են գործածել **կիբեռծովային** հիվանդություն նոր հասկացությունը, որի ժամանակ մարդը գլխացավեր ու սրտխառնոց է զգում, որոնց պատճառը բջջային հեռախոսների ու համակարգիչների չափազանց ակտիվ գործածումն է *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌԾՐԱԳԻՐ, գ. **ՏՏ ոլորտում գործող ծրագիր:** Մեծ Բրիտանիայի հարձակողական **կիբեռծրագրի** համար կտրամադրվի մինչև 2 միլիարդ ֆունտ սթեռլինգ *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌԿԵՆՏՐՈՆ, գ. **ՏՏ ոլորտում աշխատանքներ իրականացնող կենտրոն:** Sky. Բրիտանիայի ՊՆ-ն **կիբեռկենտրոն** է ստեղծում արտաքին սպառնալիքներին դիմագրավելու համար *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ գործածության հետևանքով առաջացած հիվանդություն:** Սմարթֆոնների, պլանշետների ու համակարգիչների ակտիվ գործածումը կարող է առաջացնել **կիբեռհիվանդության** բազմազան տհաճ ախտանշաններ, այդ թվում՝ գլխացավեր ու սրտխառնոց *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԱՍՆԱԳԵՏ, գ. **ՏՏ ոլորտի մասնագետ:** Բացի դրանից՝ կհայտնվեն նաև նոր գործող անձինք՝ ԿՀՎ գործակալը՝ Թոմի Լի Ջոնսի դերակատարմամբ, **կիբեռմասնագետ** Ալիսիա Վիքանդերը, նաև չարագործ Վենսան Քասսելը *(Հմմ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԱՐԶԻԿ, գ. **ՏՏ միջոցներ գործածող մարզիկ:** Մենք

ցանկանում ենք օգնել հնարավորինս մեծ թվով հայ **կիբեռմարզիկների** հանդես գալ ու կառուցել իրենց ապագան կիբեռսպորտի համաշխարհային հարթակներում *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտի մարտավարություն**: Եվրոպայում մտահոգություններ ունեն, որ Կրեմլը կօգտագործի **կիբեռմարտավարությունն** ու ապատեղեկատվությունը, որպեսզի քաղաքական ապակայունություն ստեղծի և նախկին խորհրդային պետություններին իր գրկում պահի *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԻՋԱԴԵՊ, գ. **Միջադեպ SS ոլորտում**: Ըստ թերթի՝ փաստաթղթում նշվում է, որ **կիբեռմիջադեպից** ստացված վնասը չնչին է *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Միջամտություն՝ SS միջոցներով**: Նախկինում անցկացրած հարցումներից վերջնական արդյունքների շեղումը եղել է **կիբեռմիջամտության** հետևանք *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՄԻՋՈՑ, գ. **SS ոլորտում կիրառվող միջոց**: Զեկույցի համաձայն՝ երկիրը նաև շարունակել է միջուկային և բալիստիկ հրթիռների ենթակառուցվածքի զարգացումը, ընդ որում՝ նշվում է, որ Փհենյանը շարունակել է որոնել նյութեր և տեխնոլոգիաներ այդ ծրագրերի համար արտերկրում, այդ թվում՝ **կիբեռմիջոցների** ու ժամանակակից գիտական հետազոտությունների միջոցով *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՈԼՈՐՏ, գ. **SS միջոցների գործածության ոլորտ**: Իրանի ԱԳՆ ներկայացուցիչը հայտնել է, որ Իրանը երբեք իր օրակարգում **կիբեռոլորտում** վտանգավոր գործողություններ չի ունեցել և չի պաշտպանում այդ արարքը *(Հմգ, news.am)*:

ԿԻԲԵՌՈՍՏԻԿԱՆ, գ. **SS ոլորտի օրինականությունը պահպանող ոստիկան:** Հանցագործության բացահայտման գործում ներգրավվել էին հինգ երկրների **կիբեռոստիկաններ** *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտում իրականացվող խախտում:** Տրանսպորտի և այլ ոլորտների ենթակառուցվածքներում մեծանում է տեղեկատվական ցանցերի ներդրումը, որոնք կարող են **կիբեռոտնձգության** թիրախներ դառնալ *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՏԵԽՆՈԼՈԳԻԱ, գ. **SS ոլորտի տեխնոլոգիա:** 6G-ի ի հայտ գալով սմարթֆոնները, ամենայն հավանականությամբ, իրենց տեղը կզիջեն AR և VR սարքավորումներին, ապա նաև **կիբեռտեխնոլոգիաներին**, որոնցից են մաշկի տակ տեղադրվող չիպերը *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեղեկացվածություն՝ SS ոլորտում:** Պետք է պահպանեն **կիբեռտեղեկացվածության** բարձր մակարդակ իրենց ամենօրյա աշխատանքում *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՓՈՐՁԱԳԵՏ, գ. **SS ոլորտի փորձագետ: Կիբեռփորձագետները** անմիջապես հեռախոսային գծով տպելու համար նախատեսված ֆայլ-նկարի տեսքով վնասակար ծածկագիր են տարածել *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտում իրականացվող քաղաքականություն:** Փորձագետները այդ զեկույցը գնահատել են իբրև Վաշինգտոնի առավել քան հստակ հայտարարություն **կիբեռքաղաքականության** վերաբերյալ *(Հմգ, news.am):*

ԿԻԲԵՌՔՐԵԱԿԱՆ, ած. **Կիբեռոլորտին վերաբերող քրեական**: Ուկրաինայի բնակիչը ձերբակալվել է **կիբեռքրեական** խմբավորման կազմում փողեր լվանալու և գումարային ապօրինի փոխանցումներ կատարելու մեղադրանքով *(Հմմ, news.am):*

ԿԻԲԵՌՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **ՏՏ ոլորտի օրենսդրություն:** ԵԱՀԿ մասնակից պետությունների խորհրդարաններին խորհուրդ է տալիս **կիբեռօրենսդրություն** / կիբեռնետիկ անվտանգության մանրամասն օրենսդրություն/ մշակել (*Հմմ, news.am):*

ԿԻԲԵՌՕՐԵՆՔ, գ. **ՏՏ ոլորտում գործող օրենք:** Նշվում է կառավարման ոլորտում իրավական նորմերի /**կիբեռօրենքների**/ ապահովման և կատարելագործման կարևորությունը *(Հմմ, news.am):*

ԿԻԲԵՌՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, գ. **ՏՏ ոլորտի ֆինանսավորում:** Համարվում է, որ նրանցից երկուսն առանցքային դեր են խաղացել **կիբեռֆինանսավորման** համակարգում՝ նյութատեխնիկական աջակցություն տրամադրելով *(Հմմ, news.am):*

ԿԻՆՈԼՐԱՏՈՒ, գ. **Ֆիլմերի մասին տեղեկատու**: Էկրանին հայտնվեց նորությունների **կինոլրատուն***(ՆԳ, էջ 81):*

ԿԻՆՈՄԱՐԴ գ. **Կինոյի բնագավառում զբաղված մարդ:** Հեռուստաընկերությունը միացել է հայկական կինոյի 100-ամյակի միջոցառումների և հոբելյանի առթիվ մեկնարկել է «**Կինոմարդիկ**» հաղորդաշարը*(Հմմ, armenpress.am):*

ԿԻՍԱԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ, գ. **Կիսով չափ աշխատասենյակ:** Բարձրացա իմ նախկին **կիսաաշխատասենյակը***(ՎՆ, էջ 150):*

ԿԻՍԱՄԵՂՐԱՀԱՑ, գ. (գղտնտ.): **Մեղուների կիսատ պատրաստած մեղրահացը:** Նրանք **կիսամեղրահացերի** բջիջները

կառուցում, երկարացնում են *(ԱՄ, ՍՄ, էջ 32):*

ԿԻՍԱՄՈԳԱԿԱՆ, ած. **Կիսով չափ մոգական**: .... Ընթերցողը ականատես է լինում, թե ինչպես է տղան հայտնվում **կիսամոգական** քաղաքում....*(Կայարան, 2022, թ. 3):*

ԿԻՍԱՉՈՐԱՅԻՆ, ած. **Կիսով չափ չորային:** Շատ **կիսաչորային** և չորային տարածքներ ենթակա են կլիմայի փոփոխության ազդեցություններին....*(Սեղ և Մյուլ, էջ 19):*

ԿԼԻՄԱՅԱԿԱՅՈՒՆ, ած. **Կլիմայի փոփոխություններին դիմակայող:** .... Մասնագիտացված է մի շարք ոլորտներում՝ ...., առողջ և **կլիմայակայուն** համայնքների կառուցում և զարգացում .... *(ԹՍ և այլք, էջ 8)*:

ԿԼՈՐԱՇԵՆՔ, ած**. Կլոր շենքի ձևով կառուցված**: .... Լեփլեցուն ավտոբուսով ուղևորվեց քաղաքի ծայրամասերից մեկում գտնվող **կլորաշենք** բանտ *(Նորք, 2021, թիվ 1):*

ԿԾԻԿԱՎՈՐՈՒՄ, գ. (գղտնտ.): **Կծիկ դառնալը:** .... Խիստ նպաստավոր է մեղվագաղութի գարնանային արագ աճին, մեղուների աշնանային մաքրման թռիչքներին ու **կծիկավորմանը** *(ԱԳ, էջ 173):*

ԿՆՃՌԱԾԱԾԿ, ած. **Կնճիռներով ծածկված, պատված:** ....Գիշերները շոյում էր **կնճռածածկ** դեմքն ու շագանակագույն պարիկը*(ՀԱ, էջ 45):*

ԿՇՌԱՓԵԹԱԿ, գ. **Փեթակի կշիռը:** Հլածուկի բուռն ծաղկման փուլում դաշտին մոտ գտնվող **կշռափեթակների** քաշաճը կազմել է 2,5-3,5 կգ *(ԱՄ, ՍՄ, էջ 166):*

ԿՈԹՈՂԱԿԵՐՏ, ած. **Որպես կոթող կերտված**: .... Բերնինի քաղաքաչափ, **կոթողակերտ** խաչը լուսավորյալների կատարյալ ոճով էր խորհրդանշում ամրոցը .... *(ԴԲ, էջ 400):*

ԿՈՂԱԲԵՄ, գ. **Կողքի բեմ:** Թատրոնի պստիկ **կողաբեմում**…. փափկանկատ չնաշխարհիկ բարեկրթություն էր ցուցաբերում…. *(ԿՆ, էջ 46):*

ԿՈՂԵԶԵՐՔ գ. **Կողեզր:** Հենց այն շոգենավը, որի **կողեզերքից** չար դիպվածով ընկավ ու ջրասույզ եղավ Ներսեսի նվիրական ալբոմը *(ԴՄ, էջ 108):*

ԿՈՄՊՈՍՏԱՀՈՐ, գ. (գղտնտ.): **Կոմպոստի՝ խառնաղբի համար նախատեսված հոր՝ փոս:** Կենդանիների գոմաղբի, թռչնաղբի, անասնակերի և սննդի թափոնների խառնուրդը տեղավորում են արկղերի կամ հատուկ պատրաստված **կոմպոստահորերի** մեջ *(ԹՍ և այլք, էջ 37):*

ԿՈՄՊՈՍՏԱՆՅՈՒԹ, գ. (գղտնտ.): **Պարարտանյութ: Կոմպոստանյութը** ինքնատաքացման է ենթարկվում *(ԹՍ և այլք, էջ 42):*

ԿՈՊՏԱՇԱՏ ած. **Չափազանց կոպիտ:** Մատուցողները օրոր-շորոր ճեմեն **կոպտատաշ** սեղանների միջև *(ԴՄ, էջ 22):*

ԿՏՐԱՆՑՈՒՄ, գ. **Կտրուկ անցում:Կտրանցումով** երազից հայտնվում եմ իրականության մեջ *(Կայարան, 2022, թ. 4):*

ԿՐԱԿԱԼԵԶՎԱԿ գ. **Կրակի լեզվակ:** Դա մի գունեղ, տարաշխարհիկ շունչ էր, որ քամուց քշված **կրակալեզվակի** պես իր ճամփին լիզում-ջերմացնում էր ամեն ինչ *(ԿՄ², էջ 62):*

ԿՐԵՄԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Կրեմի գույնին տվող սպիտակ:** Հետին զույգ թևերը **կրեմասպիտակավուն** են …. *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 31):*

ԿՐԾՔԱՓԵՏՈՒՐ, գ. **Կրծքի փետուր:** ….Փշարմավի մնացած պտուղները կտցելու համար հավաքված թռչնակների **կրծքափետուրների** հանդեպ էլ էի համակրանք զգում*(ՅՄ, էջ 193):*

ԿՐԿՆՈՒՍՈՒՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկնուսուցմամբ զբաղվելը:** Համալսարանում ես **կրկնուսուցչությամբ** էի զբաղվում.... *(ԲՆ, էջ 129):*

Հ

ՀԱԿԱԱՐԵՎՄՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Արևմտականության դեմ ուղղված:** ....**Հակաարևմտականությունը** և կայսերական ինքնագիտակցությունը հասել են սահմանաչափին....*(ԲՆ, էջ 91):*

ՀԱԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ած. **Բյուջետայինին հակառակ՝ ընդդեմ**: .... **Հակաբյուջետային** քաղաքականության իրացման կարևորագույն սկզբունքներից է կանխատեսելիությունը .... *(ՀՄ, էջ 19):*

ՀԱԿԱԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Վատ կատարվող, իրական երաժշտությանը հակասող;** Նա շուռ տվեց ջութակը և սկսեց նվագել **հակաերաժշտություն** *(ՌԱ, էջ 36):*

ՀԱԿԱՁԱԳԱՏԵՆԴԱՅԻՆ, ած. (գղտնտ.): **Ձագատենդի հակառակ երևույթին բնորոշ:** Հիմնական ընտանիքի ազատված տարածությունում դնում են դատարկ մեղրահացեր կամ մոմաթերթ փակցրած շրջանակներ, որոնք **հակաձագատենդային**, կանխարգելիչ միջոցառումներ *(ԱՄ, ՍՄ, էջ 33):*

ՀԱԿԱՆԿԱՐԻՉ, գ. **Ընդունված, ճշմարիտ համարվող նկարչությանը հակադրվող՝ ժխտող:** Նկարչական ուսումնարանը դաստիարակում է **հականկարիչներ** *(ՌԱ, էջ 36):*

ՀԱԿԱՕՐԵՆՔ, գ. **Այլ՝ տվյալ օրենքին հակադիր օրենք**: **Հակաօրենքը** նույնպես օրենք է և օրինաչափություն. նայած թե ով է դա կիրառում *(ՌԱ, էջ 2):*

ՀԱՄԱԻՍՐԱՅԵԼՅԱՆ, ած. **Ամբողջ Իսրայելին վերաբերող:**

Պատերազմի ողջ ընթացքում առանձին ծրագրեր են իրականացվել՝ բացի համընդհանուր համահայկական և **համաիսրայելյան** դրամահավաքներին մասնակցելուց *(Հմմ, news.am):*

ՀԱՄԱԻՏԱԼԱԿԱՆ, ած. **Ամբողջ Իտալիային վերաբերող:** Ինչպես հայտարարում է աշխատանքի **համաիտալական** համադաշնության ղեկավարը, հրապարակները լեցուն են աշխատավորներով *(Հմմ, news.am):*

ՀԱՄԱԻՐԱՎԱԿԱՆ, ած. **Ամբողջ իրավական համակարգին վերաբերող:** Պետք է կարևորել **համաիրավական** սկզբունքների պատշաճ իրականացումը *(Հմմ, news.am):*

ՀԱՄԱԼԵՀԱԿԱՆ, ած. **Ամբողջ Լեհաստանին կամ բոլոր լեհերին վերաբերող:** Ըստ խոհարարների **համալեհական** հանրության ղեկավարի՝ գրիլը վեց առանձին հատվածներ ունի *(Հմմ, news.am):*

ՀԱՄԱԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ., ած. **Միասնական խմբավորում:** Գեղարվեստը, առանձնապես քնարերգությունը զբաղվում է միայն ևեթ մարդկային **համախմբակցությամբ** *(ՍՍ[1], էջ 320):*

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՀԵՆ, գ. **Համակարգչային ծրագրեր գողացող**: Ռուսաստանում **համակարգչահեն** անօրինական ծրագրային ապահովման հիմնական աղբյուրը համացանցն է *(Հմմ, arka.am):*

ՀԱՄԱՂԵԿԱՎԱՐ, գ. **Համատեղ ղեկավարող անձ:** Ըստ **համաղեկավարի**՝ տեխնիկական տեսակետից աշխատանքը կատարվել է շատ որակյալ *(Հմմ, news.am):*

ՀԱՄԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ, գ. **Բոլորին վերաբերող մեկուսացում:** Համավարակի ու **համամեկուսացման** այս սարսափելի սոցցանցային չարությունն ու նախանձը չնահանջեցին *(Հմմ,*

news.am):

ՀԱՄԱՍՏԵՂԾԵԼ, բ. **Միասին՝ համատեղ ստեղծել**: .... Մարդիկ դառնում են .... ստեղծող և **համաստեղծող** *(Ատ. խոսք, էջ 23):*

ՀԱՅԱՍՏԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Հայաստանում ընդունված ձևով:** Հարութն այն միամիտը չէր այլևս, փորձ ուներ, եթե ասվեց տասներկուսին, ուրեմն լավագույն դեպքում՝ տասներկուսն անց կեսին, սա շատ **հայաստանավարի** էր և այլևս չէր նյարդայնացնում *(ԳԽ, էջ 137):*

ՀԱՅԱՔՎԵ, գ. **Քաղաքացիական-օրենսդրական նախաձեռնություն-ստորագրահավաք:** «**Հայաքվե**» նախաձեռնությունը հավաքել է օրենքով անհրաժեշտ 50 հազար ստորագրություններից ավելի *(Հմգ, azatutyun.am):*

ՀԱՅԵՑԱՁԵՎ, գ. **Տեսակետ, մտածելակերպ:** Թույլ է տալիս հայ քրիստոնեական **հայեցաձևը** ինքնուրույնացնել ընդհանուր քրիստոնեական արարողակարգը *(ՍՍ[1], էջ 233):*

ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Հանրային մշակույթին բնորոշ:** Գենդերային կարծրատիպերի **հանրամշակութային** առանձնահատկությունների հետազոտության լեզվական նյութը .... անգլիական անեկդոտներն են *(ԱԿ, էջ 6):*

ՀԱՍՏԱՇՐՋԱՆԱԿ, ած. **Հաստ շրջանակ ունեցող**: Մի այցելու էլ հայտնվեց՝ .... մանր սև աչքերով, **հաստաշրջանակ** ակնոցով և ուշագրավ ռունգերով*(ՎՆ, էջ 159):*

ՀԱՅՊԱՀԱՆՋՈՒԹՅՈՒՆ, գ. **Հացի՝ ուտելիքի պահանջմունք, կարիք:** Հազարամյակների փորձություններով կոփված ազգի ինքնությունից դեռ որ ոչինչ չէր ասվել, միայն լեռնոտ տեղանքի օրակռիվ **հացպահանջության** տեղապտույտը և տեղապտույտի «կնավարի» ճարտար լեզուն (*Նորք, թիվ 1):*

ՀԵԹԱՆՈՍԱՄԵՐԺ, ած. **Հեթանոսությունը մերժող**: Անկախ որևէ նկատառումից՝ ես որևէ արտառոց բան չեմ տեսնում Տերյանի **հեթանոսամերժ** տեսակետում *(ՍՍ[1], էջ 423)*:

ՀԵՇՏԱԲԱՎ, ած. **Հեշտ՝ հեշտությամբ բավարարող:** Դոգմատիզմը հարցերի **հեշտաբավ** լուծումներ է գտնում և կանխում վերլուծության ազատ հնարավորությունը *(ՍՍ[1], էջ 368)*:

ՀԵՌԱԽՈՍԱԿԱՐԳԱՎԱՐ, գ. **Հեռախոսային կապի կարգավար:** ....Պետք է վճարել նավիգացիոն ծառայությունների, **հեռախոսակարգավարների** համար և այդպես շարունակ *(ԲՆ, էջ 27)*:

ՀԵՌՈՒՍՏԱՇՏԱՐԱԿ, գ. **Հեռուստատեսային աշտարակ**: Ես երկար եմ թիավարել դեպի մեղսունակության ջրերը, **հեռուստաաշտարակի** զգաստությամբ մի բան է կանչում ապագայի ափերից *(ԳՍ, էջ 119)*:

ՀԵՌՈՒՍՏԱՇՆՈՐՀԱՆԴԵՍ, գ. **Հեռուստատեսային շնորհանդես: Հեռուստաշնորհանդես** Արմենիայի եթերում *(Հմց, news.am)*:

ՀԵՏԸՆԹԱՑԱՅԻՆ, ած. **Հետ ընթացող.** այստեղ՝ **(փխբ.) դեպի անցյալ տանող:** Հոտը հուշեց, նույն հոտն է, հայրական տան հոտը, որ ընդունակ է բազում **հետընթացային** զուգահեռներ վերհանել գիտակցության խորքերից.... *(ԳԽ, էջ 18)*:

ՀԵՏՀԱՐՍԱՆԵԿԱՆ, ած. **Հարսանիքին հաջորդող, հարսանիքից հետո կատարված: Հետհարսանեկան** տուրուդմփոցի տհաճությունից ոչ մեկի քունը չէր տանում *(Նորք, 2021, թիվ 1)*:

ՀԵՐՈՍԱԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հերոսի ընտրություն:** Մեր քննադատը արդի հայ վեպի **հերոսաընտրությունը** բացատրում է.... *(ՍՍ[1], էջ 260)*:

ՀԻՄՆԱԹԵԼ, գ. **Հիմնական իմաստ, նյութ, պատմություն:** Հիրավի, Վարդանանց պատմության **հիմնաթելերի** վրա Դեմիրճյանը հյուսում է իր ժամանակի լավագույն մտավորականության «կեղծ ուրացության» խորհուրդները *(ԱՋ, էջ 202):*

ՀԻՄՆԱՇՐՋԱՆԱԿ, գ. (գղտնտ.): **Հիմնական շրջանակ:** Շրջանակ-բարձը, վերևից չորս կողմից կիպ նստելով **հիմնաշրջանակների** վերին ձողերին, դրանց վրա էլ սեղմվում է ....*(ԱԳ, էջ 180):*

ՀՅՈՒԹԱՔԱՂՈՒՄ, գ. Այստեղ՝ **նեկտարի հավաքում:** Կորնգանի ծաղիկը հարմար է մեղվի **հյութաքաղման** համար *(ԱԳ, էջ 256):*

ՀՅՈՒՍԻՍԻՌԼԱՆԴԱՑԻ, գ. **Հյուսիսային Իռլանդիայի բնակիչ:** ....Կուրսընկերը սերում էր **հյուսիսիռլանդացի** ասպետների ազնվազարմ տոհմից....*(ՀԱ, էջ 80):*

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՀԻ, գ. **Կին հյուրընկալ** ....Զովացուցիչ ըմպելիքներով լի երկար սեղանը դեռ դատարկ էր, եթե չհաշվենք **հյուրընկալուհուն***(ՎՆ, էջ 196):*

ՀՆԱԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Հնաբուսաբանությանը հատուկ: Հնաբուսաբանական** տվյալները վկայում են .... *(ՌՆ¹, էջ 66):*

ՀՆԱԳԻՏՈՐԵՆ, մկբ. **Հնագիտական ձևով:** .... **Հնագիտորեն** ուսումնասիրված տների մեջ հետազոտողները տեսնում են .... *(ՌՆ², էջ 59):*

ՀՆԱՎԱՃԱՌԱՆՈՑ, գ. **Հին իրերի վաճառքի վայր**: Նա մի փոքրիկ և անհյուրընկալ **հնավաճառանոց** տարավ....*(ՅՄ, էջ 171):*

ՀՆԱՐԱԽՈՍ, ած. (փխբ.): **Հնարքներով խոսող:** Քայլում ենք **հնարախոս** ծաղիկների անուշահոտությամբ....*(ԳՍ, էջ 180):*

ՀՆԱՐԱՍՏԵՂԾ, ած. **Մտացածին, հնարելով ստեղծված:**

Վաղուց արդեն ժամանակն է քննադատության բառապաշարը մաքրել **հնարաստեղծ** բանաձևերից *(ՍՍ[1], էջ 237):*

ՀՆՉԵՂԱՆԱԼ, բ. **Հնչեղ դառնալ, լինել:** Ժամանակը՝ սրահը խեղդող դասական երաժշտությամբ **հնչեղանում** գնում է *(ԳՍ, էջ 23):*

ՀՆՉՅՈՒՆԱՌԱՏ, ած. **Շատ հնչյուն ունեցող:** Դալանի մթությունն իրեն ստիպում է կենտրոնանալ մաշկի վրայով սահող **հնչյունաշատ** գոյականների ու որոշիչների, բայերի ու ձայնարկությունների վրա….*(Կայարան, 2022, թ. 4):*

ՀՈԳԵԶԳԱՑԱԿԱՆ, ած. **Հոգեկան ապրումներին բնորոշ՝ հատուկ:** Իսկ այն փիլիսոփայությունը, որ Զորին պիտի կառուցեր «քանդած օջախի» և իր **հոգեզգացական** բռնկումների միջև, իրոք իմաստավոր է և գեղարվեստորեն հմայիչ *(ՍՍ[1], էջ 115):*

ՀՈԳԵՊԱՏԿԱՆ, ած. **Հոգևոր ոլորտին պատկանող՝ վերաբերող:** Գրական մտքի հերոսը, պարզվի, առանց ոչխարի չի ձևվելու որպես ինքնություն, **հոգեպատկան** երևույթ (*Նորք, 2021, թիվ 1):*

ՀՈՂԱՀԱՏԻԿ, գ. **Հողի հատիկ:** Պատահել է՝ նստել եմ խոտերին ու ժամերով մանր, կարմիր **հողահատիկները** տեղափոխող մրջյունների աշխատանքին հետևել *(ՅՄ, էջ 167):*

ՀՈՂԱՄՐՐԻԿ, գ. **Պտուտահողմ:** Նա մի փոշեհատիկ **հողամրրիկի** դեմ, անզեն ու անպաշտպան մարմինը՝ ամբոխների մաշկաշերտերից քարացած հաստ պատի դեմ *(Կայարան, 2022, թ. 4):*

ՀՈՎՏԱՇԱՏ, ած. **Շատ հովիտներ ունեցող**: Այստեղից ձըգվող **հովտաշատ** լեռները Քոնգոին տաճարի կալվածքն են *(ՅՄ, էջ 15):*

ՀՈՐԴԱՀՈՒՅԶ, ած. **Ծփանք, ալեկոծություն առաջացնող:** Առատ, վարար, ծփանքով ….սկսեցի լոգարանը լցնել շոգարձակ ջրի **հորդահույզ** հոսքով*(ՎՆ, էջ 96):*

ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ, ած. **Հրդեհի և պայթյունի վտանգ ներկայացնող:** Դրանցով են պայմանավորված շրջակա միջավայրի վրա թափոնների կենսաբանական, թունավոր, քիմիական, քայքայիչ, **հրդեհապայթյունավտանգ** ազդեցությունները *(ԹՍ և այլք, էջ 24):*

Ձ

ՁԱԳԱԿԱԼ, գ. (գղտնտ.): **Մեղվափեթակից դուրս եկած ձագերը հավաքելու համար նախատեսված հարմարանք: Ձագակալի** օգտագործումը գալիս է հնից *(ԱԳ, էջ 141):*

ՁԱԳԱՄԵՂՈՒ, գ. (գղտնտ.): **Մեղվաձագ:** …. Դրա հոտը նման է **ձագամեղվի** առաջնորդի (մեղվամոր) հոտին …. *(ԱԳ, էջ 93):*

ՁԱԳԱՏԵՆԴ, գ. (գղտնտ.): **Մեղվաընտանիքի բնական բազմացման եղանակ: Ձագատենդից** խուսափելու համար 2-րդ կորպուսը հարկավոր է տեղադրել ժամանակին *(ԱՄ, ՍՄ, էջ 30):*

ՁԱՅՆԱՀՆՉԱՅԻՆ, ած. **Ձայնին և հնչյունին վերաբերող:** ….Ոճը պատահական երևույթ չէ, ….երաժշտության պես կապված է տվյալ ժողովրդի լուսային դիապազոնին այնպես, ինչպես երաժշտությունն է կապված **ձայնահնչային** դիապազոնին…*(ԱՉ, էջ 285):*

ՁԱՆՁՐԱՀԱՐՈՒՅՑ ած. **Ձանձրույթ հարուցող:** Գրում էր, ջնջում և այդ **ձանձրահարույց** աղյուսակների արանքում նշում վաղվա անելիքը *(ԴՄ, էջ 10):*

ՁԱՎԱՐԱԽԱՌՆ, ած. **Ձավարի հետ խառնված**: Սրան **ձավարախառն** ալյուրի փշրանք էին տալիս .... *(ՌՆ[1], էջ 201):*

ՁԵՎԱԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ, ած. **Ձևային և բովանդակային**: Պետք է հիմնականում և գլխավորապես հաշվի նստի մնայուն քերթության արվեստի **ձևաբովանդակային** հատկանիշների հետ *(ՆԱ, էջ 6):*

ՁԵՎԱՏԻՊԱՐ, գ. **Ձև, տիպ՝ կերպարանք**: ....Մտքի ծայրերով **ձևատիպար** կտրեց, հիշողության խորքերից լավագույն շորերը տվեց իրեն ձեռնտու հերոսին....*(ԳՍ, էջ 94):*

ՁԻԹԱՄԹԵՐՔ, գ. **Ձեթ ստանալու մթերք**: .... **Ձիթամթերքների** օգտագործման ամենատարբեր ասպարեզները ուշադրության են արժանացել *(ՌՆ[1], էջ 105):*

ՁՆԱԴԱՇՏ, գ. **Ձյան շերտով պատված՝ ծածկված դաշտ**: Կլիմայի փոփոխության հետևանքով **....ձնադաշտերում** «պահեստավորված» ջրի ծավալի նվազելը ուղղակի ազդեցություն է թողնում ջրային ռեսուրսների վրա *(Սեդ և Մյուլ, էջ 21):*

ՁՎԱՌԱՏ, ած. (գղտնտ.): **Շատ ձվեր ունեցող կամ տվող: ....** Լիարժեք **ձվառատ** մայրեր կարելի է ստանալ ապրիլի վերջերից մինչև օգոստոս *(ԱՄ, ՍՄ, էջ 42):*

ՁՎԱՐԿԵԼ, բ. (կենս.): **Ձու դնել՝ ձվել՝ ձվադրել:** Խոշոր մայր մեղուների ձվարանները լավ են զարգացած, որը և նպաստում է օրվա ընթացքում շատ **ձվարկելուն** *(ԱՄ, ՍՄ, էջ 8):*

Ճ

ՃԱՇԱՏՈՒՓ, գ. **Ուտելիքի տուփ**: .... Բանվորի **ճաշատուփը** շրջված էր սեղանին .... *(ԴԲ, էջ 256):*

ՃԱՐԱԶՈՒՐԿ, ած. **Միջոց, հնար չունեցող**: **Ճարազուրկ**

մարդու հավատով հավատում էին Վարշամն ու Եվան…. *(ԳՍ, էջ 148):*

ՃԱՐՊԱՀԻՄՔ, գ. **Ճարպային հիմք: ....** Եղել են երկու տեսակի՝ քսուքներ, պատրաստված խոզի **ճարպահիմքի** վրա .... *(ՌՆՀ, էջ 46):*

ՃԱՐՏԱՐԱԿԱՌՈՒՅՑ, գ. **Ճարտարապետական կառույց:** Մեր օպերայի ու բալետի **ճարտարակառույցից** Թամանյանի դեմքն է մեզ նայում *(ՆԱ, էջ 17):*

ՃԱՔԱՁԵՎ, ած. **Ճաքի տեսք ունեցող:** Նորառճ **ճաքաձև** սպասքը հիանալի նվեր է ձեր սիրելիին *(Հեռ., Երկիր Մեդիա, 07.03.2023):*

ՃՈՃԱԳԵՐԱՆ, գ. **Ճոճվող գերան:** Մենք նստեցինք կիսափտած ճոճագերանին…. *(ՅՄ, էջ 100):*

ՃՈՊԱՆԱՔԱՐՇ, ած. **Ճոպաններով շարժում, տեղափոխություն առաջացնող, կատարող:** Կտրեցինք ընդարձակ մայրուղին ու անցանք նավակների տեղափոխման **ճոպանաքարշ** երկաթուղու վրայով ձգվող փայտե կամուրջը*(ՅՄ, էջ 46):*

Մ

ՄԱՀԱԳՈՒՆԱՏ, ած. **Մահվան երկյուղից գունատված:** Երեխաների դայակը ներս մտավ՝ **մահագունատ** ու դողալով… *(Կայարան, 2022, թ. 4):*

ՄԱՀԱՊԱՏՈՒՄ, գ. **Մահվան մասին պատմություն:** Եթե Սարոյին մնար, նա այդպես էլ կշարունակեր ապրել Մանուշի հետ՝ տառապելով ու գրելով մռայլ **մահապատումներ***(Կայարան, 2022, թ. 3):*

ՄԱՅՐԱԲՈՒԾԱԿԱՆ, ած. (գրտնտ.): **Մեղվամայր բուծող:**

.... **Մայրաբուծական** ուղղություն ունեցող մեղվանոցներ, որոնք կենտրոնացված կարգով արտադրում են բեղմնավորված մայրեր *(ԱՄ, ՍՄ, էջ 68):*

ՄԱՅՐԱԲՈՒԾԱՐԱՆ, գ. (գղտնտ.): **Մեղվամայր բուծելու վայր:** .... Արհեստական ձագեր կազմակերպելը ավելի ձեռնտու է այն դեպքում, երբ նրանց համար բեղմնավորված մայրերը ձեռք են բերում մասնագիտացված մեղվանոցներից կամ **մայրաբուծարաններից** *(ԱՄ, ՍՄ, էջ 39):*

ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Մեղվամայր բուծելը:** ....Երբ մեղվաընտանիքներում ի հայտ են գալիս հասունացած բոռի հարսնյակներ, մեղվանոցում սկսում են զբաղվել **մայրաբուծությամբ** *(ԱՄ, ՍՄ, էջ 33):*

ՄԱՅՐԱԸՆՏԱՆԻՔ, գ. (գղտնտ.): **Մեղվամայր ունեցող ընտանիք**: Սեզոնի վերջում հաշվում են ամեն **մայրաընտանիքի** աղջիկների միջին մթերատվությունն առանձին-առանձին .... *(ԱՄ, ՍՄ, էջ 63):*

ՄԱՅՐԱԹԱՍԱԿ, գ. (գղտնտ.): **Փեթակի շրջանակի վրա թասանման բջիջ, որի մեջ մեղուն մայրակաթ է լցնում:** Ունելիով մեկ օրական թրթուրը վերցնում են մեջքի կողմից և տեղափոխում **մայրաթասակի** մեջ եղած կաթի վրա *(ԱՄ, ՍՄ, էջ 46):*

ՄԱՅՐԱԹՐԹՈՒՐ, գ. (կենդ.): **Մայր մեղվի թրթուրը: Մայրաթրթուր** տվող ընտանիքի բնի կենտրոնում տեղադրում են հանիմանյան ցանցից պատրաստած մեկուսարան *(ԱՄ, ՍՄ, էջ 43):*

ՄԱՅՐԱԾԱԾԿՈՑ, գ. Բացատրությունը՝ օրինակում: Սպիտակ թիթեղից պատրաստված օղագոտի է, որի մի կողմը պատած է մետաղե ցանցով, մյուս կողմը՝ բաց: **Մայրաածածկոցը**

ելուստներով ամրանում է մեղրահացին՝ մեկուսացնելով մայր մեղվին իր շքախմբով*(ԱԳ, էջ 139):*

ՄԱՅՐԱԿԱԹ, գ. (գղտնտ.): **Պարսամոր կաթը: Մայրակաթը** կարելի է պահել սառնարանում *(ԱՄ, ՍՄ, էջ 47):*

ՄԱՅՐԱՀԱՐՄՆՅԱԿ, գ. (գղտնտ.): **Որդից մայր մեղու փոխակերպվող միջատ:** Մասնատում կարելի է կազմակերպել բեղմնավորված, չբեղմնավորված, հասունացած **մայրահարսնյակների** օգնությամբ *(ԱՄ, ՍՄ, էջ 34):*

ՄԱՅՐԱՎԱՆԴԱԿ, գ. (գղտնտ.): **Մայր մեղվին ժամանակավոր մեկուսացնելու համար նախատեսված հարմարանք՝ տուփ:** Այդպիսի մայրը տեղավորվում է **մայրավանդակի** մեջ .... *(ԱՄ, ՍՄ, էջ 23):*

ՄԱՅՐԱՑԱՆՑ, գ. (գղտնտ.): **Ցանցաձև կափարիչ, որի միջոցով մեկուսացնում են մայր մեղվին:** Նախօրոք **մայրացանցով** մեկուսացնում են նուկլեուսի մայր մեղվին .... *(ԱՄ, ՍՄ, էջ 69):*

ՄԱՅՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Փեթակում մեղվամայր փոխելը:** .... Պարզել՝ ընտանիքը ինքնուրույն **մայրափոխություն** կատարել է, թե ոչ *(ԱՄ, ՍՄ, էջ 58):*

ՄԱՆԿԱԲԱՐՁԱԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Մանկաբարձական և գինեկոլոգիական: Մանկաբարձագինեկոլոգիական** բաժանմունքների փակման արդյունքում շատ բուժաշխատողներ կորցրել են աշխատանքը *(Հմգ, news.am):*

ՄԱՆՐԱՏԻԵԶԵՐՔ, գ. Մեծ Ոսկե տաճարի ներսում նույնանման փոքրիկ Ոսկե տաճարի առկայությունը հանգեցրեց մեծատիեզերքում **մանրատիեզերքի** գոյության անսահման ներդաշնակության մտքին*(ՅՄ, էջ 24):*

ՄԱՇԿԱՇԵՐՏ, գ. **Մաշկի շերտ:** Տե՛ս ՀՈՂԱՄՐՐԻԿ-ի օրի-

նակը:

ՄԱՍՆԱՀԱՆԳՈՒՄ, գ. **Մասնավոր եզրահանգում:** Թե գանք մեծատառով սկիզբ առնող միաբառ նախադասության վերծանումի հայալեզու մեծագործի կռահումներին, ինչը որպես գործողություն ընկալվի, նաև ժամանակի խնդիր և էլի մի քանի **մասնահանգում ....** (*Նորք, 2021,թիվ 1)*:

ՄԱՐԴԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Մարդու կողմից կատարվող:** Կլիմայի փոփոխությանը նպաստող **մարդահարույց** գործողություններն են՝ ...., անտառների և կանաչ տարածքների կրճատումը, տրանսպորտի, արդյունաբերության և այլնի հետևանքով մթնոլորտի աղտոտումը *(ԹՍ,ՍԼ, էջ 52)*:

ՄԱՐԴԱՀՈՍՔ, գ. **Մարդկանց ամբոխ:** Ամբոխի մեջ ծանոթ դեմք պատահեց, բայց դեռ տեղը չբերած, թե ով է, դեմքը քշվեց **մարդահոսքն** ընկած ու կորավ իմ հետևում *(ՅՄ, էջ 153)*:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Մարդասիրական դարձնելը**: Ռուսաստանի **մարդասիրականացումը** կարող է լավ ազգային գաղափար դառնալ….*(ԲՆ, էջ 247)*:

ՄԱՐԴԱՏՅԱՑՈՐԵՆ, մկբ. **Մարդատյացի նման**: …. Նա այնքան **մարդատյացորեն** էր ուտում անհամ թվացող ուտելիքը, որ ոչ ոք նրան չէր մոտենում*(ՅՄ, էջ 88)*:

ՄԱՐԶԱԺԱՄԱՆՑԱՅԻՆ, ած. **Մարզական և ժամանցային:** Զկնորսությունն ունեցել է նաև **մարզաժամանցային** իմաստ *(ՌՆ՝, էջ 191)*:

ՄԱՐԶԱՌԱԶՄԱԿԱՆ ած. **Մարզական և ռազմական: Մարզառազմական** ճամբարը պարտադիր կդառնա դպրոցականների համար *(Հեռ., Հ1, 21.06.2023)*:

ՄԱՐՄՆԱԿԵՐՏ, գ. **Ստեղծագործական աշխատանքով**

կյանքի կոչելը՝ մարմինը կերտելը: «Ինչո՞ւ ոչ Օհան նահապետի **մարմնակերտը**»….*(ԳՍ, էջ 20):*

ՄԱՔՐԱԴԱՎԱՆ, ած. **Մաքուր դավանանք ունեցող:** Այսպիսով, Թիֆլիսում ևս ասպարեզը լայնորեն մնում է երևանյան **մաքրադավան** պրոլետգրողներին *(ԱԶ, էջ 212):*

ՄԵԳԱՆՊԱՏԱԿ, գ. **Չափազանց մեծ նպատակ:** ….Իսկ բազմաթիվ բիզնեսմենների համար իրենց եկամուտն ինքնանպատակ է, **մեգանպատակ** և ամբողջ կյանքի համար *(ԲՆ, էջ 104):*

ՄԵԴԻԱԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեդիայի ունեցած ազդեցությունը**: …. **Մեդիաազդեցության** տեսությունները ավելի շատ են …. *(ԶՍ, էջ 5):*

ՄԵԴԻԱԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեդիայի ունեցած բովանդակությունը: Մեդիաբովանդակությունը** սահմանափակ ազդեցություն ունի լսարանի վրա …. *(ԶՍ, էջ 8):*

ՄԵԴԻԱԲՌՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեդիայի ունեցած ազդեցությունը որպես բռնություն:** …. **Մեդիաբռնությունը** մեծ ազդեցություն ունի …. *(ԶՍ, էջ 11):*

ՄԵԴԻԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվական կազմակերպություն**: Այս դեպքում **մեդիակազմակերպություններն** իրենք են մեծապես պատասխանատու սեփական օրակարգի համար *(ԶՍ, էջ 40):*

ՄԵԴԻԱՀԵՏԱԶՈՏՈՂ, գ. **Մեդիայի՝ լրատվության ոլորտը հետազոտող**: **Մեդիահետազոտողների** շրջանում տարածված կարծիք կա …. *(ԶՍ, էջ 39):*

ՄԵԴԻԱՄՇԱԿՈՒՅԹ, գ. **Մեդիան որպես մշակույթ**: Արդյո՞ք սա **մեդիամշակույթի** արդյունք չէ *(ԶՍ, էջ 10):*

ՄԵԴԻԱՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվական ուշադրութ-**

յուն: Գիտե՞ս ինչու չէի ուզի, որ ինձ Նոբելի արժանացնեին. **մեդիաուշադրություն** լրատվականների, ուղիղ եթեր, հարցազրույց.... *(ԳՍ, էջ 134):*

ՄԵԴԻԱՍՊԱՌՈՒՄ, գ. **Մեդիայով՝ լրատվությամբ ներկայցվող նյութերի սպառում**: Հետազոտողներն առանձնացրել են մի շարք ընդհանուր շարժառիթներ մեդիասպառման համար *(ՋՍ, էջ 32):*

ՄԵԹՈԴԱՀԵՆ, ած. (ճիշտ է՝ մեթոդահենք): **Որոշակի մեթոդով պայմանավորված կամ հիմնավորվող:** Այդ սահմանափակումներից մեկը, **մեթոդահեն** նմուշառման պլանների բացակայությամբ պայմանավորված, վերաբերում է տեղական կամ տարածաշրջանային գյուղատնտեսության ոլորտում հավաքված տվյալների ստուգմանը *(Զեռնարկ, էջ 72):*

ՄԵԾԱԿՈՓ, ած.Այստեղ՝ **մեծ չափսերով քանդակված:** Ծաղկաձորում գրողների ստեղծագործական տան երկրորդ հարկի խուլ պատին **մեծակոփ** խմբակային հարթաքանդակ կար *(ՆԱ, էջ 7):*

ՄԵԾԱՏԻԵԶԵՐՔ, գ. Տե՛ս ՄԱՆՐԱՏԻԵԶԵՐՔ-ի օրինակը:

ՄԵՂՎԱԳԱՂՈՒԹ, գ. **Մեղվաբնտանիք:** .... Փոքրաձավալ լինելու շնորհիվ դրանում ավելի շուտ ու լավ է աճում **մեղվագաղութը,** որն էլ մեղրաբերքի լավ գրավականն է*(ԱԳ, էջ 172):*

ՄԵՂՎԱԳԱՅԼ, գ. **Մեղվի մեղրապարկում հավաքված նեկտարի վրա հարձակվող և այն ծծող դեղին գույնի միջատ:** Զուն, դառնալով թրթուր, ուտում է տվյալ մեղվի դիակը, մեծանալով դառնում է մոր նման **մեղվագայլ** ու դուրս գալիս լույս աշխարհ, կրկնում մոր ավերածությունները *(ԱԳ, էջ 113):*

ՄԵՂՎԱԳՈՐԳ, գ. **Մեղվապատկերներով գորգ:** Ավելի

փոքր չափերի և մեկ հարյուրամյակ փոքր տարիք ունեցող «**մեղվագորգ**» է պահվում երևանցի մեղվապահ Ալլա Դավթյանի տանը *(ԱԳ, էջ 71)*:

ՄԵՂՎԱԴԻԱԿ, գ. **Մեղվի դիակ:** …. Փեթակները մաքրել մոմի մնացորդից, բորբոսից, **մեղվադիակներից**….*(ԱԳ, էջ 97)*:

ՄԵՂՎԱԶԱՐԴ, ած. **Մեղվապատկերներով զարդարված:** Կենաց ծառին զուգակցված **մեղվազարդ** կարպետ-գորգերն արտահայտել են նաև պտղաբերության գաղափարը*(ԱԳ, էջ 69)*:

ՄԵՂՎԱԾԱՆՐՈՑ, գ. (գղտնտ.): **Մեղվաբուծական տերմին: Մեղվածանրոցի** մեջ մեղուները տեղավորելուց հետո մնացած մեղուների, հարսնյակների համար ստեղծում են լավագույն պայմաններ …. *(ԱՄ, ՍՄ, էջ 70)*:

ՄԵՂՎԱԾՐԱՐ, գ. (գղտնտ.): **Նույն փեթակի մեջ փոքր մեղվաընտանիք, որում պահուստային մայր բուծելով կամ պահելով՝ հետագայում դրանով ձևավորում են նոր ընտանիք կամ ընդլայնում փոքրը:** Ապրիլի վերջերից և մայիսի սկզբներից պետք է զբաղվել մայրաբուծությամբ, որպեսզի **մեղվածրարների** կազմակերպման ժամկետում մեղվանոցում լինեն հասունացած մայրապտուկներ կամ բեղմնավորված մայրեր *(ԱՄ, ՍՄ, էջ 69)*:

ՄԵՂՎԱԿԾԻԿ, գ. **Կծիկ կազմող մեղվախումբ:** …. Որքան շատ ծավալված լինի **մեղվակծիկը**, այնքան շատ բջիջներում էլ մեղվամայրը կձվի, և նույնքան շուտ էլ մեղվաընտանիքը կաճի …. *(ԱԳ, էջ 177)*:

ՄԵՂՎԱԿՈՒԼ, գ. (կենս.): **Միջատներով, հատկապես մեղուներով սնվող թռչուն:** Մեղուներին մեծ վնաս են հասցնում սովորական կրետները, **մեղվակուլները** և այլն *(ԱՄ, ՍՄ, էջ 10)*:

ՄԵՂՎԱՀԱՅԱՑ, ած. **Քաղցրահայաց:** Պատմահայր Մովսես Խորենացին հայոց Տիգրան արքային ներկայացնում է …. մեղվաչ, **մեղվահայաց** *(ԱԳ, էջ 60):*

ՄԵՂՎԱՉ, ած. **Մեղվակն՝ քաղցրակն:** Տե՛ս ՄԵՂՎԱՀԱՅԱՑ-ի օրինակը *(ԱԳ, էջ 60):*

ՄԵՂՎԱՊԱՏ, ած. (գղտնտ.): **Մեղուներով պատված:** Ստուգման ժամանակ **մեղվապատ** շրջանակները հանում են զգուշորեն *(ԱՄ, ՍՄ, էջ 14):*

ՄԵՂՎԱՊԱՏԿԵՐ, ած. **Մեղվի պատկերով:** Հունաստանում դրամ են թողարկել **մեղվապատկերով** *(ԱԳ, էջ 11):*

ՄԵՂՎԱՍՈՍԻՆՁ, գ. **Ակնամոմ:** Կազմված է *ակն* և *մոմ* բառերից. հունարեն՝ պրոպոլիս, հաճախ էլ մոմասոսինձ կամ **մեղվասոսինձ***(ԱԳ, էջ 190):*

ՄԵՂՎԱՎԱՃԱՌՔ, գ. **Մեղվափեթակի առուվաճառք:** Նույն դարի վերջերին պատկանող Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» ուշագրավ հոդվածներ կան **մեղվավաճառքի** վերաբերյալ*(ԱԳ, էջ 17):*

ՄԵՂՐԱԲԵՐՔԱՀԱՎԱՔ, գ. (գղտնտ.): **Մեղրի բերքահավաք**: Առաջին տարում երիտասարդ մորը ըստ նրա ընտանիքի մթերատվության գնահատել չի կարելի, քանի որ **մեղրաբերքահավաքին** և մեղրահացերի կառուցմանը մասնակցում են երկու մայրերի սերունդ *(ԱՄ, ՍՄ, էջ 63):*

ՄԵՂՐԱԲԵՐՔԱՅԻՆ, ած. **Մեղրի բերքին հատուկ:** Մեղվափեթակի տեսակը նախընտրելիս հաշվի են առնում տեղի կլիմայական, ապա նաև **մեղրաբերքային** պայմանները*(ԱԳ, էջ 132):*

ՄԵՂՐԱԾՈՐԵԼ, բ.(փխբ.): **Մեղրի նման ծորել,** (այստեղ) **ձայն հնչել:** -Ի՞նչ տամ, Ռոզա մորքուր, լսվեց **մեղրաածորած**

ձայնը *(ԳԽ, էջ 67):*

ՄԵՂՐԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեղր հավաքելը**: .... Մեծ դեր են ունեցել .... **մեղրահավաքությունը**, ձկնորսությունը *(ՌՆ[1], էջ 173):*

ՄԵՂՐԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեղր հավաքելը:** Մեղուն և նրա արտադրանքը ինչպես **մեղրահավաքչության**, այնպես էլ մեղվապահության բազմադարյան ժամանակաշրջանում բազմազան արտացոլում են գտել մարդկանց պատկերացումների մեջ .... *(ԱԳ, էջ 8):*

ՄԵՂՐԱՇԱՔԱՐԱԽՅՈՒՍ, գ. (գղտնտ.): **Մեղրից և շաքարից պատրաստած խյուս**: Կերի բաժանմունքում դնում են 25գ **մեղրաշաքարախյուս ....** *(ԱՄ, ՍՄ, էջ 57):*

ՄԵՂՐԱՊԱՇԱՐ, գ. (գղտնտ.): **Փեթակում եղած մեղրի պաշարը:** Ստուգման ընթացքում որոշվում է .... **մեղրապաշարի** քանակը *(ԱՄ, ՍՄ, էջ 19):*

ՄԵՂՐԱՔԱՄԻՉ, գ. Բացատրությունը՝ օրինակում: **Մեղրաքամիչ** մոմեր: Օգտագործվում են մեղրը մոմից, մեռած մեղուներից, թրթուրներից և այլ նյութերից անջատելու համար *(ԱԳ, էջ 145):*

ՄԵՋՔԱՄԿԱՆ գ. **Մեջքի մկան:** Պղտոր, ժանգոտ օրերի մեջ նրա **մեջքամկանները** պնդանում էին *(ԿՄ[2], էջ12):*

ՄԵՏԱՔՍԱՄՇԱԿՈՒՄ, գ. **Մետաքս մշակելը**: .... Պետերբուրգում **մետաքսամշակման** գործարաններ են հիմնում *(ՌՆ[1], էջ 207):*

ՄԵՐՁԲՆԱՅԻՆ, ած. (գղտնտ.): **Բնին մոտ գտնվող:** Ծառերի **մերձբնային** բաժակներում ձյուն կուտակելով, ջերմամեկուսացնելով՝ մի քանի օրով հնարավոր է հետաձգել ծառերի ծաղ-

կումը *(ԹՍ,ՍԼ, էջ 34)*:

ՄԵՐՁԳՅՈՒՂՅԱՆ, ած. **Գյուղին մերձ՝ մոտ գտնվող**: .... Ձմռանը արածեցնում էին հիմնակում **մերձգյուղյան** կամ մերձ-ձմեռանոցային արոտավայրերում .... *(ՌՆ՝, էջ 151)*:

ՄԵՐՁՁՄԵՌԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Ձմեռանոցին մերձ՝ մոտ գտնվող**: Տե՛ս ՄԵՐՁԳՅՈՒՂՅԱՆ-ի օրինակը:

ՄԵՐՁՄԱՐՄՆԱՅԻՆ, ած. **Սեփական բնությանը, մարմնին մոտ:** Մինչդեռ՝ **մերձմարմնայինի** մեջ տնելու մի պատրաստակամության մեր ըմբռնումն է նախևառաջ «Ուլիսեսը» (*Նորք, 2021, թիվ 1)*:

ՄԻԿՐՈՄՆՆԴԱՏԱՐՐ, գ. **Մննդային փոքրիկ տարր:** .... Այդ միջավայրը հարստանում է մակրո- և **միկրոսննդատարրերով** .... *(ԹՍ,ՍԼ, էջ 44)*:

ՄԻԿՐՈՖԻՐՄԱ, գ. **Փոքր ձեռնարկություն:** Ներառվել են ֆերմերային տնտեսությունները, ... և **միկրոֆիրմաները** *(Ձեռնարկ, էջ 86)*:

ՄԻՋԱՏԱՊԱՇՏՊԱՆ, ած. **Միջատներից պաշտպանող:** Իրիկնամուտին Հասան աղան պատրաստում էր անկողինները և քաշում **միջատապաշտպան** շղարշները *(Կայարան, 2022, թ. 3)*:

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ, ած. **Բանկերի միջև գործող:** Իրանն ու Ռուսաստանը աշխատում են SWIFT-ի նման **միջբանկային** վճարային համակարգի ստեղծման ուղղությամբ *(Հմգ, news.am)*:

ՄԻՋԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ, ած.**Դատարանների միջև գործող:** Այս համատեքստում երկուստեք կարևորվել է հայ-լեհական **միջդատարանական** երկխոսությունը և մոտ ապագայում բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպումը *(Հմգ, news.am)*:

ՄԻՋԴԻՐՔԱՅԻՆ, ած. **Դիրքերի միջև եղած:** Նման պայմաններում կողմերի գրանցած կորուստների ու վիրավորների համեմատաբար մեծ թիվը պայմանավորված է նրանով, որ **միջդիրքային** տարածությունը փոքր է *(Հմգ, news.am):*

ՄԻՋԷԹՆԻԿ, ած. **Էթնիկական տարբեր հանրույթների միջև առկա:** Համաժողովին ելույթով հանդես կգա տարածաշրջանային և **միջէթնիկ** հակամարտությունների փորձագետը *(Հմգ, news.am):*

ՄԻՋԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ, ած. **Թաղամասերն իրար կապող:** Շինաշխատանքներ են կատարվել Վանատուր թաղամասի **միջթաղամասային** փողոցներում *(Հմգ, news.am):*

ՄԻՋԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ, ած. **Թանգարանների միջև գործող:** Կարևորվել է **միջթանգարանային** երկկողմ կապերի ամրապնդումը *(Հմգ, news.am):*

ՄԻՋԹԵՄԱԿԱՆ, ած. **Թեմերի միջև գործող:** Երկխոսության և համագործակցության կարևոր հարթակ են և **միջթեմական** ամուր կապերի հաստատման կենսունակ գործիք *(Հմգ, news.am):*

ՄԻՋԹԻՄԱՅԻՆ, ած. **Թիմերի միջև գործող:** Ապրանքանիշի փաթեթավորման վերափոխմանը նախորդել է ծավալուն, մանրակրկիտ **միջթիմային** և միջմշակութային աշխատանք *(Հմգ, news.am):*

ՄԻՋԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ած. **Մեկից ավելի ժողովուրդների առնչվող:** ՆԳՆ-ն նրա հարցազրույցի քննություն է նախաձեռնել՝ **միջժողովրդական** և կրոնական պայքարի հրահրման նկատառումով *(Հմգ, news.am):*

ՄԻՋԼԵՌՆԱՅԻՆ, ած. **Լեռների միջև ընկած:** Դա **միջլեռ-**

նային գոտիներում առաջացնում է ցուրտ օդի լճացում և մառախուղ *(Հմգ, news.am):*

ՄԻՋԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԱՅԻՆ, ած.**Լրատվամիջոցների միջև գործող:** Խոսքը **միջլրատվամիջոցային** համագործակցության մասին է, ինչը կանոնակարգված ձևով մեր երկրում հազվագյուտ է արվել *(Հմգ, news.am):*

ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ, ած. **Խորհրդարանների միջև գործող:** Գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարում է ԱՊՀ **միջխորհրդարանական** վեհաժողովը *(Հմգ, news.am):*

ՄԻՋԾՐԱԳՐԱՅԻՆ, ած. **Ծրագրերի միջև գործող:** Ընդհանուր առմամբ առաջարկվում է այս երեք ծրագրերի համար **միջծրագրային** վերաբաշխում իրականացնել *(Հմգ, news.am):*

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ած. **Կուսակցությունների միջև ծավալվող:** Հանրապետականները դա օգտագործում են **միջկուսակցական** պայքարում *(Հմգ, news.am):*

ՄԻՋՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ, ած. **Հիմնարկների միջև գործող:** Ինչպես նշվում է **միջհիմնարկային** մշտական կոմիտեի հայտարարության մեջ *(Հմգ, news.am):*

ՄԻՋՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Հիվանդանոցների միջև եղած:** Մեծապես կարևորվեց համագործակցությունը բժիշկների վերապատրաստման դասընթացների կազմակերպման, **միջհիվանդանոցային** ուղղակի կապերի հաստատման, փորձի փոխանակման ուղղությամբ *(Հմգ, news.am):*

ՄԻՋՃԱՄԲԱՐԱՅԻՆ, ած. **Ճամբարների միջև եղած:** Միջոցներ են ձեռնարկվել Հանքավանի **միջճամբարային** մեկուսարանի աշխատանքները վերսկսելու ուղղությամբ *(Հմգ, news.am):*

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Մասնագիտությունների միջև եղած:** Միջֆակուլտետային և **միջմասնագիտական** համագործակցության ակտիվացում է նկատվում *(Հմգ, news.am):*

ՄԻՋՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ, ած. **Շրջանակների միջև գտնվող:** Այդպիսի արհեստական նեղացրած **միջշրջանակային** տարածություններով մեղվափեթակներում մեղուները ստիպված պատում են ավելի մեծ թվով մեղրահացեր *(ԱՄ, ՍՄ, էջ 21):*

ՄԻՋՈՒԿԱՀԱՆ ԱՆԵԼ, բ.**Բանջարեղենի (և այլն) միջուկը զատել:**Տոլմայի համար սմբուկ, լոլիկ ու կանաչ պղպեղ էի **միջուկահան** անում *(ՆԳ, էջ 29):*

ՄԻՋՌԱՍՍԱՅԱԿԱՆ, ած.**Ռասսաների միջև եղած:** Նրան կարող են մեղադրել նաև ազգամիջյան, **միջռասսայական**, միջկրոնական ատելության հրահրման մեջ *(Հմգ, news.am):*

ՄԻՋՓՈՂՈՑԱՅԻՆ, ած. **Փողոցների միջև ընկած:** Կատարվել է փողոցների և **միջփողոցային** ճանապարհների ասֆալտապատում *(Հմգ, news.am):*

ՄԻՋՓՈՐՈՔԱՅԻՆ, ած. **Փորոքների միջև ընկած:** Վիրաբույժի խոսքով հիվանդը սրտի մի քանի արատ ուներ՝ **միջփորոքային** միջնապատի արատ, թոքային զարկերակի նեղացում, աջ փորոքի պատերի հաստացում և առրտայի առանցքի շուրջ պտույտ *(Հմգ, news.am):*

ՄԻՋՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ, ած. **Քաղաքակրթությունների միջև եղած:** Հանդիպման ժամանակ մատնանշվել է այդ երկրի ներդրումը համաշխարհային մակարդակով **միջքաղաքակրթական** և միջմշակութային երկխոսության գործընթացում *(Հմգ, news.am):*

ՄԻՋՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ, ած**. Մասնագիտորեն առնչվող**

ֆակուլտետների վերաբերյալ: Հյուրերը կայցելեն ՀՊՃՀ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» **միջֆակուլտետային** ամբիոն *(Հմg, news.am):*

ՄԻՋՖԻՐՄԱՅԻՆ, ած. **Ֆիրմաների միջև առկա:** Դրանք տնտեսության տարբեր հատվածների կազմակերպությունների կողմից ստացված օտարերկրյա ուղղակի ներդրումներն են **միջֆիրմային** վարկերի տեսքով *(Հմg, news.am):*

ՄԻՖԱՐԱՐՈՒՄ, գ. **Միֆի՝ առասպելի արարում:** Վահագն Մուղնեցյանի գրական ստեղծումներն ընդհանուր առմամբ աչքի են ընկնում միայն իրեն բնորոշ **միֆարարումներով** *(ՍՄ[1], էջ 306):*

ՄՇԱԿՈՒԹԱՅՆԱՑՎԵԼ, բ. Այստեղ՝ **մշակույթի մաս դառնալ:** Քնջութը Անդրկովկասում **մշակութայնացվել** է .... *(ՌՆ[1], էջ 103):*

ՄՈԽՐԱՓԱՅԼ ած. **Մոխրի փայլ ունեցող:** Կարծես **մոխրափայլ** «Պոբեդան» իր դռան առաջ չէր կանգնում *(ԴՄ, էջ 46):*

ՄՈՄԱԲՋԻՋ, գ. **Մոմահացի բջիջը:**Աշխատանքը մեղվին հանգեցրել է **մոմաբջիջներ** ստեղծելու.... *(ԱԳ, էջ 5):*

ՄՈՄԱԹԱՍԱԿ, գ. (գղտնտ.): **Մոմե թասակ:** Մատներով զգուշությամբ **մոմաթասակն** անջատում են ձևանմուշից *(ԱՄ, ՍՄ, էջ 46):*

ՄՈՄԱԿԵՐՈՆ, գ. **Կերոն՝ մեղրամոմից պատրաստված մոմ:** Վառվող **մոմակերոնի** ծուխը ոչնչացնում է այդ շենքում եղած մանրէներն ու մաքրում օդը *(ԱԳ, էջ 193):*

ՄՈՄԱՀԱԼ, գ. (գղտնտ.): **Մեղվափեթակի մոմահումքի վերամշակման համար նախատեսված սարք:** Մոմահումքի վերամշակում. գոլորշու **մոմահալ** – 1 հատ, արևի **մոմահալ** – 1-2

հատ *(ԱՄ, ՍՄ, էջ 88):*

ՄՈՄԱՇՐՋԱՆԱԿ, գ. **Մեղվափեթակի շրջանակ:** Աջ եռանկյունին պատկերում է կանաչ գույնի ներկած **մոմաշրջանակը** …. *(ԱԳ, էջ 68):*

ՄՈՄԱՍԵՐԵԿ, գ. **Մեղվափեթակը մոմով փակող շերտ:** Մեղվափեթակից հանված ու պահված սերեկած (կնքած) մեղրահացը կտրելիս եթե ջուր անջատվեց, կամ **մոմասերեկներն** արդեն ճաքճքել են, և կամ մեղրը շատ է բյուրեղացել (շաքարակալել), մաքուր չէ *(ԱԳ, էջ 190):*

ՄՈՄԱՍՈՍԻՆՁ, գ. **Ակնամոմ:** Տե՛ս ՄԵՂՎԱՍՈՍԻՆՁ-ի օրինակը *(ԱԳ, էջ 190):*

ՄՈՄԼԱԹԱԿԱԶՄ ած. **Մոմլաթի կազմ ունեցող:** Տիկին Մարիամը **մոմլաթակազմ** տետրակներ ուներ, բայց ամեն ինչ անգիր էր հիշում *(ԴՄ, էջ 45):*

ՄՈՒԳԱՄԱԶ, ած. **Թխագույն մազեր ունեցող:** Կարող է լինել **մուգամազ** ազգերից յուրաքանչյուրի ներկայացուցիչ…. (*Նորք, 2021, թիվ 1):*

ՄՌԹԱՏԱԿ, գ. **Քիթ-բերանի, դնչի տակի հատվածը:** Շոյեց գլուխը, **մռթատակը** քորեց, հայացքը բարձրացրեց՝ կատվին փնտրեց…. *(ԳԽ, էջ 207):*

ՄՏԱԴՐՈՒՅԹ, գ. **Ելակետային սկզբունք, հիմունք:** Նրա ուսումնասիրություններում **մտադրույթի** ավարտը մշտապես առկախ է թողնում անհայտություն հարուցող ինչ-որ հարցական *(ՍՍ[1], էջ 235):*

ՄՏԱԽԱՂ, գ. **Մտքերի խաղ**: Տե՛ս ԸՆԹԵՐՑԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՄՏԱԿԱՌՈՒՅՈՒՄ, գ. **Մտքի կառույց՝ շարադրանք:** Վիո-

լետ Գրիգորյանի, Սոնա Վանի որոնումներն ավելի տեսանելի գաղափարներ են տալիս նորագույն ոճի մասին, քան տեսական **մտակառուցումները** *(ՍՍ[1], էջ 253)*:

ՄՏԱՁԵՎՎԵԼ, բ. **Մտքով ստեղծվել, հորինվել**: Հանրությունը հազարամյակների իր հոգևոր փորձով հանդերձ, իր համաձայնությունը տվեց, որ ժողովուրդ ասվածի, գրողից **մտաձևված** այս տեսակի հետ ինքը նույնացվի (*Նորք, 2021, թիվ 1)*:

ՄՏԱՓՍԽՈՑ, գ. (դիպվ.): **Անվայելուչ մտքեր արտահայտել:** Ոչ թե այս **մտափսխոցին** պատասխանելու, այլ որևէ տարակույս չթողնելու համար պատրաստ ենք .... անդրադառնալ մեր դասականների հասարակական-քաղաքական գործունեության էջերին *(Հրապ., 14.04.2023)*:

ՄՐԳԱԲԼՐԱԿ, գ. **Իրար վրա դրված մրգերի կույտ:**Երևան տանող խճուղու ափերով միմյանց էին հաջորդում մրգավաճառները իրենց **մրգաբլրակներով** *(ԳԽ, էջ 160)*:

Յ

ՅՈԹԿԵՏԱՆԻ, ած. **Յոթ կետ ունեցող**: Գիշատիչ **յոթկետանի** զատկաբզեզի .... թրթուրները սնվում են լվիճներով *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 180)*:

Ն

ՆԱԽԱԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ած. **Առևտրին նախորդող**: «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ն կազմակերպում է **նախաառևտրային** նստաշրջան *(Հմ, news.am)*:

ՆԱԽԱԳԱՐՈՒՆ, գ. **Գարնանը նախորդող ժամանակը**: Ես քեզ ամեն գիշեր կորցնում եմ նորից .... տարեմուտից մինչև **նա-**

խազարուն ու գիժ մարտից մինչև նախատարու կեսգիշերը վերջին (*Նորք, 2020, թիվ 2):*

ՆԱԽԱԷՊՈՍ, գ. **Նախնական՝ առաջին էպոս:** Այստեղից հետևում է, որ «Սասնա ծռերը» **նախաէպոս** է բոլոր կարգի էպոսների համար *(ՍՍ[1], էջ 474):*

ՆԱԽԱԿՈՉՎԵԼ, բ. **Նախապես կոչվել՝ հռչակվել:** Եթե կյանքը արտացոլումն է մարդկային գերագույն եսի, ուրեմն արվեստագետը **նախակոչված** մարգարե է *(ՍՍ[1], էջ 407):*

ՆԱԽԱՌՐԱԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Նախնական որակավորում:** ....Ուսանողները 7-րդ կամ 8-րդ կիսամյակում պետք է մասնակցեն նաև **նախաառրակավորման** պրակտիկային *(Զեռնարկ, էջ 61):*

ՆԱԽԱՏԱՐԻ, գ. **Ամանորին նախորդող ժամանակը:** Տե՛ս ՆԱԽԱԳԱՐՈՒՆ-ի օրինակը:

ՆԱԽՃԻՐԱԿՏԱՎ գ. **Արյան պատկերով կտավ:** .... Իրականում աշխարհին ներկայացվող **նախճիրակտավ՝** «մասսայական տեռորով», անարգ արյունահեղությամբ.... *(ԱԶ, էջ 186):*

ՆԱՎԹԱՊԱՀԵՍՏԱՐԱՆ, գ. **Նավթի պահեստ:** Ներկա պահին Slovnaft-ը էներգահումք է մատակարարում լրիվ ծավալով, որն ստանում է սլովակյան **նավթապահեստարաններից** *(Հմգ, news.am):*

ՆԱՎԹԱՔԱՂԱՔ, գ. **Նավթի արդյունահանմամբ զբաղվող քաղաք**: Մնում է, ուրեմն, պատկերացնել.... հանդիսատեսին, **նավթաքաղաքի** բազմահազարանոց հայությանը…*(ԱԶ, էջ 234):*

ՆԱՐՆՋԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Նարնջագույնին տվող շագանակագույն:** Բույսերի տերևների, տերևաածոցերի վրա առաջանում են **նարնջաշագանակագույն** ուռեդոսպորներով կլորավուն կամ ձվաձև ուռեդոբարձիկներ .... *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 80):*

ՆԱՐՆՋԵ, ած. **Նարնջագույն:** Փողոցները, մայրի՛կ, **նարնջե** կարոտներ են՝ մանկության գրպանում (*Նորք, 2020, թիվ 2):*

ՆԵՐԱՂԻՔԱՅԻՆ, ած. **Աղիքի ներսում կատարվող:** Ուղիղ աղիքի ՄՌՏ հետազոտությունը հատուկ նախապատրաստական աշխատանքներ չի պահանջում, իսկ ներերակային կամ **ներաղիքային** կոնտրաստավորում հիմնականում չի կատարվում *(Հմգ, news.am):*

ՆԵՐԱՄԵՐԻԿՅԱՆ, ած. **Ամերիկայի ներքին գործերին վերաբերող:** Այս ընտրություններից հետո հարցեր առաջացան անբարեխիղճ գովազդի և **ներամերիկյան** գործերին արտասահմանյան պետությունների միջամտության մասին *(Հմգ, news.am):*

ՆԵՐԱՄՊԱՅԻՆ, ած. **Ամպի մեջ տեղի ունեցող:** Կայծակները կարող են ոչ միայն հարվածել երկրի մակերևույթին, այլև տեղի են ունենում հենց ամպերի մեջ (**ներամպային** կայծակներ) *(Հմգ, news.am):*

ՆԵՐԱՊԱՐԱՏԱՅԻՆ, ած. **Ապարատի ներսում գոյություն ունեցող:** Պարզվում է, որ վերջինս կարգավորում է **ներապարատային** հարաբերությունները կառավարական հիերարխիայում *(Հմգ, news.am):*

ՆԵՐԱՐՁԱԿ, ած. **Դեպի ներս արձակող՝ տարածող:** Տիպաբանական բարդ խնդիր է առաջադրում Եփրեմյանը, փիլիսոփայորեն **ներարձակ** և ժամանակա-տարածքային լայն տեսադաշտի ընդգրկմամբ *(ՍՍ[1], էջ 229):*

ՆԵՐԶԳԱՅԱԿԱՆ, ած. **Ներհոգեկան, հոգու մեջ կատարվող:** Ոգի է առնում փիլիսոփայական խոհը, աշխարհազգացողության **ներզգայական** պատկերն ու գարնան զարթոնքի տաղերգության հաճույքը *(ՍՍ[1], էջ 26):*

ՆԵՐԶԳԱՅԵԼ, բ. **Ներընկալել**: Լոգոսը բարդ է, անհասկանալի, մելոսը մեղեդային է, որ իրերի մեջ **ներզգայում** է գեղագիտական հաճույքը *(ՍՍ[1], էջ 233):*

ՆԵՐԹՈՒՐՔԱԿԱՆ, ած. **Թուրքիայի ներսում գտնվող:** .... Ամենաքննարկված **ներթուրքական** ուղերձը դարձավ *(Ատ. խոսք, էջ 83):*

ՆԵՐԺԱՆՐԱՅԻՆ, ած. **Ժանրի ներսին վերաբերող:** Պատմավեպի տեսությունն ու պատմությունը գրականագիտական հիմնավոր հետազոտական փորձ ունի, առանց որի յուրացման անկարելի է դատել **ներժանրային** տեղաշարժերի մասին *(ՍՍ[1], էջ 263):*

ՆԵՐԽՈՀԱԿԱՆ, ած. **Ներքին մտածողությանը՝ հուզաշխարհին վերաբերող:** Եվ սակայն կարելի է տարբերակել տաղերի հաղորդակցման ատաղձը արարողական ոճի և **ներխոհական** ասույթի միջև *(ՍՍ[1], էջ 39):*

ՆԵՐՌՈՒՍԱԿԱՆ, ած. **Ռուսաստանի ներսում գործող:** Երկրները, որոնք կախված են ռուսական էներգակիրներից, չափազանց հետաքրքրված կլինեն դրանում՝ ակնկալելով, որ կկարողանան գազ գնել **ներռուսականին** մոտ գներով *(Հմգ, news.am):*

ՆԵՐՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ, ած. **Ռուսաստանի ներսում գործող:** Դա գերազանցում է **ներռուսաստանյան** շուկայում գազի միջին գնին *(Հմգ, news.am):*

ՆԵՐՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ած. **Սոցիալականությանը՝ հասարակությանը վերաբերող, սոցիալականությունը՝ հասարակությունն ընդգրկող:** .... Գրականության պատմությունը դիտարկված է երկրի պատմության ներազգային, **ներսոցիալական**, ներքաղա-

քական տեղաշարժերի առանձնահատկությամբ *(ՍՍ[1], էջ 16):*

ՆՈՂԿԱՆՔԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Նողկանք հարուցող:** Կարդալով էդ. Էլիբեկյան կոչեցյալի «Մեծերի մասին» անվանված **նողկանքահարույց** խզբզոցը ձեր կայքում, ….զարմացա…. *(Հրապ., 14.04.2023):*

ՆՈՎԵԼԱԿԵՐՊ, ած. **Նորավեպի կերպ ունեցող: Նովելակերպի** հինգ դրվագ, բոլորն էլ դրամատիկ….*(ԱԶ, էջ 251):*

ՆՈՐԱՀԱՅՐ գ. **Նոր հայրացածը**: **Նորահայրը** երկինքներում էր, թևավորվել-ճախրում էր հին ու նոր երազանքների թևերով, բայց հաջորդ օրը առավոտյան նրա եռանդը անսպասելի մարեց *(ԿՍ[1], էջ 7):*

ՆՈՐՄԱՍՏԵՂԾ, ած. **Նորմին՝ կանոնին համապատասխան ստեղծված:** …. **Նորմաստեղծ** աշխատանքի ծավալը բավականին մեծ էր *(ՀՄ, էջ 4):*

ՆՈՒՅՆԱԴԵՄՔ ած. (փխբ.): **Միապաղաղ: Նույնադեմք** օրերի անհամ երթում, կրակ տված թաց խաշամի տարտամությամբ, անցյալը ծխում էր հուշի ծալքերում *(ԿՍ[1], էջ 10):*

ՆՍՏՎԱԾՔԱԿՈՒՏԱԿ, գ. Տե՛ս ԽԱՐԱՄԱԿՈՒՏԱԿ-ի օրինակը:

ՆՐԲԱՄՇԱԿ, ած. **Նրբորեն մշակված**: …. Քարոզչությունը հաճախ լինում է ակնհայտ՝ **նրբամշակ** չլինելու պատճառով *(ՋՍ, էջ 24):*

Շ

ՇԱԽՄԱՏԱՆԱԽՇ, ած. (դիպվ.): **Շախմատաձև նախշերով:….** Հա, մեկ էլ կոշիկ, սև լաքից սուրքիթ կոշիկ ու նասկի՝ **շախմատանախշ** կողերով *(ԳԽ, էջ 53):*

ՇԱԽՄԱՏԱՊՈՉ, ած. (դիպվ.): **Շախմատանախշ պոչ ունեցող:** Շախմատանախշ ասիմ՝ ղշիս հիշեցիմ, վախ-վախ-վախ, իմ **շախմատապոչ** ղուշը, յոթը թախլա վրա-վրա ֆռում էր օդում , գլուխկոնծի տալի, մենակ տեսնեիր *(ԳԽ, էջ 53):*

ՇԵՂԱՀՅՈՒՍ, ած. **Շեղ հյուսված**: .... Հագել էր սովորական լսարանային հանդերձանքը՝ **շեղահյուս** բամբակից տաբատը .... *(ԴԲ, էջ 20):*

ՇԻԿԱՈՒՆՔ, ած. **Շեկ հոնքերով:** Մի երկարահասակ, շիկաբեղ, **շիկաունք,** քաչալացող գլխով, պեպենոտ, անդուր դեմքով, իրենից վեց տարի մեծ, ամուսնացած-բաժանված…. (*Նորք, 2021, թիվ 1):*

ՇՂԹԱՅԱՇԱՐ, գ. **Շղթայաձև դասավորված շարք:** Խումբը …. հաջորդական և փոխկապակցված դատողությունների ու մտահանգումների **շղթայաշարից** դուրս բերված միակ պատասխանով չի գոհանում….*(ԳՍ, էջ 74):*

ՇՈՂԱԹԵԼ գ. (փխբ.): **Արևի թելանման շող:** Եվ լույսերի ճտվտուն խաղ էր դեղձենու սաղարթներում. **շողաթելերը** բռնում էին ընկնող կաթիլները….*(ՎՄ, էջ 84):*

ՇՐՋԱՆԱԿԱԱԶԱՏ, ած. (դիպվ.): **Արգելքներից՝ շրջանակներից ազատ:** Նա բոլոր իմաստներով **շրջանակաազատ** ստեղծագործող է*(ՌԱ, էջ 67):*

ՇՐՋԱՆԱԿԱԲԱՐՁ, գ. **Մեղուներին ցրտից պաշտպանելու նպատակով մեղվափեթակի կափարիչի տակ ամրացվող բարձ:** Մեղվափեթակի կափարիչի մեջ տեղավորվում է **շրջանակաբարձը ….** *(ԱԳ, էջ 175):*

ՇՐՋԱՆԱԿԱՆՈՑ, ած. (գոտնտ.): **Շրջանակ ունեցող**: Մեղվաբուծական ակտիվ սեզոնի վերջում հիմնական ընտանիքից

կազմակերպում են բեղմնավորված մայրով երեք **շրջանականոց** նուկլեուս *(ԱՄ, ՍՄ, էջ 69)*:

ՇՈՒԿԱՅԱՀԵՆՔ, ած. **Շուկայի վրա հիմնված:** .... Ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և **շուկայահենք** ագրոբիզնեսի զարգացմանը .... *(ԹՍ և այլք, էջ 5)*:

Ո

ՈՂՋՈՒՆՈՂԱԿԱՆ, ած. **Ողջունելուն միտված**: Մարսել Պրովանս. գերմանական ֆաշիզմի **ողջունողական** դիրքորոշում ունեցող .... մոդեռնիստ գրող....*(ԳՍ, էջ 120)*:

ՈՍԿԵԲՐՈՆՋ, ած. **Ոսկուց և բրոնզից ձուլած:** Մտածում էի նաև կատարին բազմած **ոսկեբրոնզ** փյունիկի մասին.... *(ՅՄ, էջ 20)*:

ՈՍԿԵԽՈՍՔ, գ. (փխբ.): **Ոսկե՝ գեղեցիկ՝ պերճ**: **Ոսկեխոսքիդ** հատերը հորդուն // Ուրիշի վրա պիտի ցանեիր (*Նորք, 2021, թիվ 1)*:

Չ

ՉԱՓԱԳԴԱԼ, գ. **Չափիչ գդալ:** Ցերեկները չափից ավելի հանգիստ երեխա էր, խաղում էր **չափագդալների** հավաքածուով.... *(ՆԳ, էջ 86)*:

ՉԱՓԱԾՈՅԱԽՈՍ, ած. **Չափածոյով խոսող՝ գրող: Չափածոյախոս** լինելը բնավ չի նշանակում բանաստեղծ լինել *(ՍՍ[1], էջ 222)*:

ՉԱՓՈՒԿԱՐԳ գ. **Չափ և կարգ:** Կարծես թե ինքն իր ավանդույթի ու **չափուկարգի** մեջ ամփոփված սովորական թաղում էր *(ՎՍ[2], էջ 41)*:

ՉՈՐԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Չորային դառնալը:** Հայաստանում

կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը դրսևորվում է տարածքի **չորայնացման** ու անապատացման .... միտումներով *(ԹՍ,ՍԼ, էջ 20)*:

Պ

ՊԱՀՈՒՍՏԱՏՈՒՆ, գ. **Պահուստարան:** Արենու գինեգործների **պահուստատները** համալրվել են գինիների նոր տեսակներով *(Հեռ., Երկիր Մեդիա, 13.03.2023)*:

ՊԱՅՈՒՍԱԿԱՍՊՈՐ (սնկեր), ած. (բսբ.): **Սպորները պայուսակներում կամ ասկերում հասունացող բարձրագույն սնկեր:** Հաջորդ տարվա գարնանը կոնիդիումներն ու **պայուսակասպորները** քամու միջոցով տարածվում են, տեր բույսերի հյուսվածքների վրա ընկնելով՝ ծլում են և վարակում *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 76)*:

ՊԱՏՃԱՌԱԿՈՒՅՏ, գ. **Պատճառների բազմություն՝ խումբ:** Չէր կարող չխմել, իսկ խմելու **պատճառակույտի** մեջ առանձնանում էր տեսքը….*(ԳՍ, էջ 74)*:

ՊԱՏՃԵՆԱՕՐԻՆԱԿ, գ. **Պատճենված օրինակ:** Ընդհանրապես սովորություն եմ ունեցել իմ գրություններն ու նամակները գրել **պատճենաօրինակով** *(ԳՅ, էջ 9)*:

ՊԱՏՄԱԱՐԿԱԾԱՅԻՆ, ած. **Պատմական և արկածային:** Չորրորդ մոդելը, որի հատկանիշները ոչ միայն նոր չեն, այլև թափառում էին միջնադարի **պատմաարկածային** սյուժեներում *(ՍՍ', էջ 262)*:

ՊԱՏՄԱԳԻՐ, գ. (իմ. նորբ.): **Հիվանդության պատմություն, անկետա, բուժագիր**: Մեր յուրաքանչյուր այցելուի համար կենտրոնում ստեղծվում է էլեկտրոնային **պատմագիր**, որում

պահպանվում է նրա առողջության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը *(Հմգ, vcim.am):*

ՊԱՏՄԱԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ, ած. **Պատմական և իմաստասիրական:** 18-րդ դարի մտավոր գրական շարժման համապատկերում **պատմաիմաստասիրական** տարրը ավելին է *(ՍՍ[1], էջ 10):*

ՊԱՏՄԱԼԵԶՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատմական և լեզվական իրողություն:** Այդպիսին է հայ արձակի պատկերը, առաջին հայացքից **պատմալեզվականության** աղետալի դեմքով, ուր առ ոչինչ է ճշգրտությունը, բառի դիրքային ճկունությունը…. *(ՍՍ[1], էջ 198):*

ՊԱՏՄԱԿԵՂԾԱՐԱՐ. գ. **Պատմական փաստերը, պատմությունը կեղծող:** …. Թուրք **պատմակեղծարարները** շարունակում են «արյունոտ սուլթանի» գործը *(Հայ. հարց, էջ 13):*

ՊԱՏՄԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ած. **Պատմական և հասարակական:** Հարցի դրվածքում Լեոն առանձնապես ընդգծում է **պատմահասարակական** կողմը….*(ՍՍ[1], էջ 12):*

ՊԱՐՈՒՍԻՆԱԾԱԾԿ, ած. **Պարուսինով ծածկված:** Ես մնացի մեքենայում՝ կայանելով քթներս **պարուսինածածկ,** բացօթյա սահաղաշտին արած….*(ՎՆ, էջ 248):*

ՊԵՏԱԿԱՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Պետականության պահպանություն:** Արցախյան կողմը մշտական ռեժիմով **պետականապահպանության** գործով է զբաղված *(Հմգ, artsakhradio.am):*

ՊԵՏԱԿԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Պետություն, պետականություն սիրելը:** Իշխանությունը պետք է ունենա բավարար **պետականասիրություն՝** իր վրա վերցնելու հարվածը…. *(ՉՒ, 19.04.2023):*

ՊԻՏԱԿԱԽԱՌՆ, ած. **Խառը պիտակավորված**: …. Մի կողմից ցուցադրվում է իսկական գրական մարդու վեհահոգի, լիարժեք վարքը, մյուսից ապաշնորհ բախտախնդիրների նկարագիրը՝ իրենց իսկ **պիտակախառն** որակում-հայհոյանքներով….*(ԱԶ, էջ 212):*

ՊՈՌՈՏԱԽԱՌՆ, ած. **Պոռոտախոսությամբ խճողված:** …. Շարժումը սա ծնեց, նա երկնեց **պոռոտախառն** բառապաշար…. *(ՉԻ, 26.02.2023):*

ՊՏՂԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, գ. **Պտղի կազմավորվելը:** Հիմնականում **պտղակազմավորման** փուլի սկզբում՝ հիվանդության առաջին նշաններն արձանագրելուց հետո, բույսերը սրսկել ….*(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 200):*

ՊՏՏԱՄՐՐԻԿ, գ. **Պտուտաձև մրրիկ**: …. **Պտտամրրիկի** մեջ էր հայտնվել *(ԴԲ, էջ 413):*

Ջ

ՋԱՀԱՁԵՎ, ած. **Ջահի ձև ունեցող:** …. Ճակատները **ջահաձև** խարանում էին …. *(ՌՆ², էջ 109):*

ՋԵՐՄԱՀԱԿ, ած. **Բարձր ջերմության նկատմամբ հակվածություն ունեցող:** Օդային կոմպոստացումն առավել արագ է ընթանում բարձր՝ 45-65ºC ջերմաստիճանում (**ջերմահակ** կոմպոստացում **ջերմահակ** բակտերիաների միջոցով) *(ԹՍ և այլք, էջ 41)*:

ՋԵՐՄԱՓՈԽԱՐԿԻՉ, գ. **Ջերմություն փոխարկող սարք:** Նրանք առաջարկում էին… **ջերմափոխարկիչների** համակարգի միջոցով այդ ջուրը ….մատակարարել Նիժնի Նովգորոդի տները *(ԲՆ, էջ 9):*

ՋՐԱԽՄՈՑ, գ. **Ջուր խմելու համար նախատեսված հարմարանք:** Ընդհանուր օգտագործման համար. .... Մեղուների համար **ջրախմոց** - 1 հատ .... *(ԱՄ, ՍՄ, էջ 88):*

ՋՐԱՉԱՓՈՒՄ, գ. **Ջրի քանակի չափելը:** Որոշ դեպքերում **ջրաչափման** համակարգերը ստեղծում են մատակարարման «փուլային հուսալիության» համակարգ….*(Մեղ և Մյուլ, էջ 38):*

ՋՐԱՊԱՐՈՒՆԱԿ, ած. **Ջուր պարունակող:** Առատ տեղումներից բարձրանում է գետերի մակարդակը կամ հավաքվելով ստորգետնյա **ջրապարունակ** շերտերում՝ հետագայում բխում աղբյուրների տեսքով*(Մեղ և Մյուլ, էջ 18):*

ՋՐԱՍԱՀՈՒՆ, ած.**Ջրի դիմադրությունը նվազեցնող կամ ջրում ընթացքն ավելի դյուրին դարձնող:** Մոմը քսել են նավի արտաքին մասին՝ **ջրասահուն** դարձնելու համար *(ԱԳ, էջ 150):*

Ռ

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱԱՇԽԱՐՀ, գ. **Ռադիոյի և հեռուսատատեսության ոլորտ: Ռադիոհեռուստաաշխարհի** լավագույն ներկայացուցիչներն այսօր Հ1-ի եթերում *(Հեռ., Հ1, 12.03.2023):*

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱԱՐՎԵՍՏ, գ. **Ռադիոհեռուստատեսությանը նվիրված արվեստ:** Մեր օրերում «ցուցադրական» սկիզբ համարվող, արդի .... ռադիոհեռուստաարվեստում լայնորեն տարածված միջոց….*(ԱՋ, էջ 186):*

ՌԱԴԻՈՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռադիոյից արված ձայնագրություն**: Ուզո՞ւմ ես ուղղակի մեջբերում լսել **ռադիոձայնագրությունից** *(ԴԲ, էջ 247):*

ՌԱԴԻՈՔԱՐՈԶԻՉ, գ. **Ռադիոյի միջոցով քարոզող:** .... Նաև **ռադիոքարոզիչ** է, երկրով մեկ ավետարանչական եկեղեցիները

հրավիրում են, որպեսզի ելույթ ունենա *(ՆԳ, էջ 164)*:

ՌԱԶՄԱԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Ռազմական և դիվանագիտական:** Հանդիպումը կայացել է ՀՀ-ում ՌԴ դեսպանության պաշտպանության հարցերով կցորդի **ռազմադիվանագիտական** առաքելության ավարտի և նոր կցորդի նշանակման կապակցությամբ *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ած. **Ռազմական և երաժշտական:** Ռազմական շքերթն ավանդաբար առաջնորդում են **ռազմաերաժշտական** ուսումնարանի թմբկահարները *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱԷԹԻԿԱԿԱՆ, ած. **Ռազմական էթիկային վերաբերող:** Դա հակասում է **ռազմաէթիկական** օրենսգրքին *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱԻՐԱՎԱՊԱՀ, ած. **Ռազմական ոլորտում իրավունքի պահպանություն իրականացնող:** Զինծառայողների կատարած հանցագործությունների փաստի առթիվ համապատասխան **ռազմաիրավապահ** մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱԼԻՑՔ, գ. **Ռազմական լիցք:** ԻՊ-ի գրոհայինները համալսարանում քիմիական **ռազմալիցքերի** արտադրություն էին հիմնել *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱԽՈՒՄԲ, գ. **Ռազմական խումբ:** Ֆրանսիայի իշխանությունները Իսլամական պետության ահաբեկիչների դեմ պայքարելու համար **ռազմախումբ** կուղարկեն *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱՀԵՆԱԿԵՏ, գ. **Ռազմական հենակետ:** Ադրբեջանական **ռազմահենակետն** անհրաժեշտ է ոչնչացնել *(Հմգ, news.am)*:

ՌԱԶՄԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ած. Դա անօդաչու սարքերի

հետ մեկտեղ էապես կավելացնի **ռազմահետախուզական** հնարավորությունները *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ած. **Ռազմական և մարդասիրական:** Փոխգործակցության առաջնահերթ ուղղությունների շրջանում են ռազմական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական և **ռազմահումանիտար** ոլորտները *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ, գ. **Ռազմական հուշահամալիր:** Նրա հուղարկավորությունը տեղի կունենա **ռազմահուշահամալիրի** գերեզմանատանը *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՄԵՏ, ած. **Ռազմական կողմնորոշում՝ միտվածություն ունեցող:** Ամերիկյան թերթի մեկնաբանը նշում է, որ Վաշինգթոնի **ռազմամետ** վերնախավի շրջանում սիրիական կարիքավոր քրիստոնյաների դրությունն ընդգծված մոռացության է տրվում *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՄԻՋՈՒԿԱՅԻՆ, ած. **Ռազմական և միջուկային:** Վաշինգթոնին է փոխանցել հետախուզական տվյալներ Իրանի **ռազմամիջուկային** ծրագրի մասին *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռազմական շինարարություն:** ՀԱՊԿ-ը դիտարկվում է որպես կարևոր ինստիտուտ **ռազմաշինարարության** ոլորտում համագործակցության ստեղծման համար *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Ռազմական և պատմագիտական:** Կայացել է **ռազմապատմագիտական** գիտելիքների ստուգման «Էրուդիտ» մրցաձևը *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՊԵՏԱԿԱՆ, ած. **Ռազմական և պետական:** Անցկացվելու է ռազմաքաղաքական փուլը՝ «**Ռազմապետական** ղեկավարման համակարգի ծավալումը պատերազմական ի-

բավիճակներում և ագրեսիայի ետմղման հիմնական միջոցառումների կազմակերպում» թեմայով *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՍԱԴՐԻՉ, ած. **Ռազմական սադրանքներ կիրառող՝ գործադրող:** Օգտագործվում են ցանկացած քաղաքական, տնտեսական և **ռազմասադրիչ** մեթոդներ *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՂ, ած. Հարավկորեական անցակետից մի քանի նախազգուշական կրակոցներ են արձակվել, երբ հյուսիսկորեական զինվորները սկսել են մոտենալ **ռազմասահմանազատող** գծին *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՍՏՎԱԾ, գ. **Ռազմի՝ պատերազմի աստված:** Մեր **ռազմաստծո՝** Վահագնի ուժն ու զորությունը մեր զինվորների բազուկին *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ, ած. **Ռազմական վերլուծություններով զբաղվող:** Այսպես են կարծում **ռազմավերլուծական** գործակալության փորձագետները *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՎԻԱՑԻԱ, գ. **Ռազմական ավիացիա:** Թշնամին քաղաքի վրա փորձել է կիրառել **ռազմավիացիա** *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՏԱԿՏԻԿԱԿԱՆ, ած. **Ռազմական-մարտավարական:** Համատեղ **ռազմատակտիկական** զորավարժություններ տեղի կունենան *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ, ած. **Ռազմական-տիեզերական:** Ռուսաստանի **ռազմատիեզերական** ուժերի հարվածային ուղղաթիռները ոչնչացրել են ռազմական տեխնիկան *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ած. **Ռազմական և ուսումնական:** Կառավարությունը հաստատեց **ռազմաուսումնական** հաստատությունների ընդունելության կարգը *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՓՈԽԱԴՐԱԿԱՆ, ած. **Ռազմական փոխադրումնե-**

ին ծառայող: Զորավարժություններին կմասնակցի ավելի քան 30 ավիամիջոց, այդ թվում նաև՝ կործանիչներ, ռմբակոծիչներ, **ռազմափոխադրական** ինքնաթիռներ *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՓՈԽԱԴՐԻՉ, ած. **Ռազմական փոխադրումներ իրականացնող:** Մենք ռուսական **ռազմափոխադրիչ** ինքնաթիռներին թույլտվություն չենք տվել *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՓՈԽԱԴՐՈՂ, ած. Նույնն է՝ **ռազմափոխադրիչ:** Ռուսական **ռազմափոխադրող** ավիացիան բազմաթիվ թռիչքներ է իրականացրել *(Հմգ, news.am):*

ՌԱԶՄԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ած. **Ռազմական ոլորտին վերաբերող ֆինանսական:** Բաքուն թուրքական արտադրության նոր ռազմական ԱԹՍ-ներ կգնի **ռազմաֆինանսական** համաձայնագրի վավերացումից հետո *(Հմգ, news.am):*

ՌԵՏԻՆԱՎՈՐ, ած. **Ռետինե:** .... Ընդհանուր օգտագործման համար. .... Գոգնոց **ռետինավոր** - 2-4 հատ .... *(ԱՄ, ՍՄ, էջ 88):*

ՌՄԲԱԼԱՐ գ. **Ռումբ պայթեցնելու լար:** Քեզ մնում է միայն շունչդ պահած հետևել վառվող **ռմբալարին** ու վայրկյանները հաշվել *(ԴՄ, էջ 110):*

Ս

ՍԱԼԻԿԱՆԱԽՇ, ած. **Սալիկներով պատված, զարդարված:** Զով էր, նստեցի փափուկ նստարանին, փակեցի աչքերս, գլուխըս հենեցի **սալիկանախշ** պատին *(ՆԳ, էջ 27):*

ՍԱԿԱՎԱԹԱՓՈՆ, ած. **Քիչ թափոն ունեցող: ....** Կայուն էկոլոգիական զարգացման կարևորագույն սկզբունքներից մեկը թափոնների կրճատումն է, անթափոն կամ **սակավաթափոն** արտադրության կազմակերպումը *(ԹՍ և այլք, էջ 18)*:

ՍԱԿԱՎԱՌԵՍՈՒՐՍ, ած. **Փոքր միջոց, հնարավորություն ունեցող:** Սա կարող է էլ ավելի բարդացնել այս **սակավառեսուրս** գյուղական համայնքներում առկա հակամարտությունները *(Սեղ և Մյուլ, էջ 10):*

ՍԱՀԱՆԿՈՒՄ, գ. **Սահելով ընկնելը:** …. Ես հիշում էի ֆուտբոլ խաղալիս մեր կռիվներն ու կոպիտ **սահանկումները**….*(ԳՍ, էջ 82):*

ՍԱՀԱՊԱԿԻ, գ. **Սահող ապակի:** Բացեցի նախասրահի փայլատ **սահապակին** ու ձայն տվեցի….*(ՅՄ, էջ 185):*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ, ած. **Սահմանադրական և իրավական:** Ցանկացած նման մեկնաբանություն ոչ լուրջ **սահմանադրաիրավական** վերլուծության արդյունք է *(Հմգ, news.am):*

ՍԱՌՆԱՄԱՇԿ, ած. **Սառը մաշկ ունեցող**: ….Հասարակ, թմբլիկ, տձև, **սառնամաշկ**, էապես մարդ, փորիկներով ու ծամիկներով աղջիկներ…. *(ՎՆ, էջ 26):*

ՍԱՌՑԱՀԱԼՈՑՔԱՅԻՆ, ած. **Սառցահալոցքին վերաբերող:** Ինդուս գետի հոսքի մինչև հիսուն տոկոսը **սառցահալոցքային** է *(Սեղ և Մյուլ, էջ 22):*

ՍԱՌՑԱՎԱԶԱՆ, գ. **Սառցե ավազան**: Մայրաքաղաք Քվիտոն ջրամատակարարման հիսուն տոկոսը ջուրը վերցնում է Անտիզանայի **սառցավազաններից** *(Սեղ և Մյուլ, էջ 22):*

ՍԱՏԱՆԱՅԱՈՐՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Սատանա որսալը:** Ամեն դեպքում **սատանայաորսության** համար….մարդուն դատապարտել են 36 տարվա ազատազրկման….*(ՀԱ, էջ 126):*

ՍԵՂՄԱՊՆԱԿ, գ. **Կրիչ**: **Սեղմապնակը** կարող է պարունակել հաստափոր բառարանի ողջ տեղեկությունը *(Հմգ, glosbe.com):*

ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ, ած. **Յուրաքանչյուր սեռին վերագրվող դերին բնորոշ**: .... Դրսևորվում են .... վարքագծերում՝ դրանով իսկ հաստատելով .... դրանցում **սեռադերային** այն կարծրատիպերի արտացոլումը .... *(ԱԿ, էջ 8):*

ՍԵՐՆԴԱՃ, գ. **Սերունդ տալը:** Բնական պայմաններում բույսի **սերնդաճը** տեղի է ունենում սերմերը մայր բույսից որոշ հեռավորությամբ ընկնելու և բազմանալու.... միջոցով *(ԱԳ, էջ 202):*

ՍԵՐՈՒՑՔԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Սերուցքի գույնին տրվող սպիտակ**: Ձվերը օվալաձև-տակառաձև են, ... **սերուցքասպիտակավունից** մինչև դեղին գույն *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 171):*

ՍԻՐԱՄԱՐՏ, գ. (իմ. նորբ.): **Սիրո համար մղած պայքար:** **Սիրամարտերում** սպանված սրտիս հիշատակը վա՛ռ (*Նորք, 2020, թիվ 2):*

ՍԿԶԲՆԱԲՋԻՋ գ. **Սկզբնական բջիջ:** Անակնկալի արգանդից չէր ծնվել ու հոգու թանձրույթում էր **սկզբնաբջիջ** գոյավորվել *(ՎՍ², էջ 119):*

ՍՆԴԻԿԱՓԱՅԼ, ած. **Սնդիկի փայլ ունեցող:** ....Չորս կողմը փոխնիփոխ ձգվում էին **սնդիկափայլ** ջրի ու թունավոր կանաչ եգիպտացորենի շերտերը....*(ՎՆ, էջ 235):*

ՍՆՆԴԱՄԻՋԱՎԱՅՐ, գ. **Սննդարար նյութերով հարուստ միջավայր:** .... Հողում, բուսական մնացորդներում, բույսերի աճման **սննդամիջավայրում** կամ բույսերի վրա *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 25):*

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Սոցիոլոգիական դարձնելը:** Գրականության **սոցիոլոգիականացումը** ինքնաբերաբար վերստուգում է հոգեբանական մեթոդի տեսական բանաձևերը *(ՍՍ¹, էջ 335):*

ՍՊԱՍՔԱՍԵՆՅԱԿ, գ. **Սենյակ, որտեղ պահվում է սպասքը:** Հաջորդ երեկո, երբ արդեն ման-չմանը լվացել էի, **սպասքասենյակի** դռան հետևից լսեցի խարդավանքների շարունակությունը *(ՆԳ, էջ 53):*

ՍՊԻՏԱԿԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Սպիտակին տվող կանաչ:** Անթև կուսածին էգերի մարմինը երկարավուն – էլիպսաձև է, մոխրականաչավուն կամ **սպիտակականաչավուն** *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 108):*

ՍՊԻՏԱԿԱՇՈՂ, ած. **Ճերմակի նման շողացող**: Մեղուն շփոթվեց ու հանգիստ առավ շապիկի **սպիտակաշող** ծաղկի վրա *(ՅՄ, էջ 8):*

ՍՊԻՏԱԿՈՍԿՐ, ած. **Սպիտակ գույն ունեցող ոսկոր: Սպիտակոսկր** շինությունը ներքևից ցողվել էր արևով ու վերածընված էր թվում *(ՅՄ, էջ 17):*

ՍՏԵՂՆԱՀԱՐԵԼ, բ. **Ստեղներին հարվածել՝ նվագել:** …. Իսկ մատները, դաշնամուրին մնացած, շարունակում էին **ստեղնահարել** *(ԳԽ, էջ 21):*

ՍՐԲԱՇՐՋԱՆ, գ. **Սրբացրած շրջան:** Այո, մենք թևակոխում ենք նոր **սրբաշրջան,** որտեղ իշխելու է երկերեսանիների արքայությունը *(ՉԻ, 22.04.2023):*

Վ

ՎԱԶԵԼԻՆԱՊԱՏ, ած. **Վազելինով պատված**: …. Փեթակի հատակին դնում են **վազելինապատ** թուղթ, ստվարաթուղթ կամ պոլիէթիլենային թաղանթ *(ԱՄ, ՍՄ, էջ 107):*

ՎԱՐԱԿԸՆԿԱԼ, ած. **Վարակվելու հատկություն ունեցող:** Հիվանդության ախտանշանները հիմնականում երևում են **վա-**

բակընկալ բույսերի ստորին տերևների վերին երեսին *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 77)*:

ՎԱՐԱԿԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Վարակվելու հատկություն ունենալը:** Մշակել դիմացկուն կամ հարուցիչի նկատմամբ համեմատաբար ցածր **վարակընկալություն** ունեցող սորտեր *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 78)*:

ՎԱՐԴԱԳՈՒՆԱՊԱՏՈՒՄ, գ. (դիպվ.): **Վարդագույնով պատելը**: ....Երևանը պետք է գեղեցկացնել ոչ թե կանաչապատմամբ, այլ **վարդագունապատմամբ***(ՉԻ, 26.03.2023)*:

ՎԱՐԴԱՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող մանուշակագույն:** Հանդիպակաց մեկ ուրիշ սարին՝ հորիզոնականով կապույտ ավազ է և ուղղահայացով՝ **վարդամանուշակագույն** երանգներ....*(ԳՍ, էջ 125)*:

ՎԱՐՉԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ած. **Վարչական և արտադրական:** Տարածքի մի մասը գտնվում է **վարչաարտադրական** շենքում *(Հմg, news.am)*:

ՎԵՐԱԱԶԱՏԱԳՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին ազատագրելը:** ...Հայոց հողերի ամբողջական **վերաազատագրման** օրը գալու է *(ՉԻ, 07.02.2023)*:

ՎԵՐԱՀԱՐԹԵԼ, բ. **Կրկին հարթեցնել:** Եթե սխալվել են, հատուկ գրչով **վերահարթել** են մոմատախտակն ու նորից գրել *(ԱԳ, էջ 33)*:

ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐԵԼ, բ. **Վերստին՝ նորից հուղարկավորել**: Ռաֆայելի մարմինը **վերահուղարկավորվել** է .... *(ԴԲ, էջ 240)*:

ՎԵՐԱՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ, գ. **Նոր մասնագիտություն ձեռք բերելը: ....** Հարութի վարորդական **վերամասնագիտացումը** սահուն էր զարգանում *(ԳԽ, էջ 107)*:

ՎԵՐԱՓԱԹԵԹԱՎՈՐԵԼ, բ. **Վերստին՝ նորից փաթեթավորել**: .... **Վերափաթեթավորված** արևապաշտությունն է *(ԴԲ, էջ 234):*

ՎԵՐՆԱՁՈՂ, գ. **Վերևի ձող:** Շրջանակի **վերնաձողի** չափերը թողել ենք նույնը .... *(ԱԳ, էջ 174):*

ՎԵՐՆԱՔԻՎ, գ. **Վերին քիվ:** Կամաց փակելիք դուռը դժվարությամբ բացվեց՝ գնդիգլոր աղմուկով, Հարութը ներս մտավ՝ գլուխը **վերնաքիվին** խփելով.... *(ԳԽ, էջ 162):*

ՎԵՐՋՆԱԿԱՅԱՐԱՆ, գ. **Վերջին կայարան**: Քսան տարի առաջ մետրոյի **վերջնակայարանի** կառուցումը մեծ աղմուկ հարուցեց .... *(ԴԲ, էջ 337):*

ՎԻՊԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Վիպական դարձնելը, վիպականի վերածելը:** Խեչոյանի ստեղծագործության խորապես գիտակներն անգամ չէին կարող կռահել, թե ինչ ձև ու բովանդակություն պետք է ունենար ազգային էպոսի **վիպականացման** ավելի քան տասներեքամյա նրա որոնումների արդյունքը *(ՍՍ[1], էջ 472):*

ՎՏԱՆԳԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Վտանգ առաջացնող:** Սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը ընդդիմության սպասված և **վտանգահարույց** հանրահավաքից առաջ «Պապլավոկում» իրականացվում է ցուցադրական ծեծ *(ՉԻ, 09.06.2023):*

ՎՐԱԱՆՑՆԵԼ, բ. **Վրայով անցնել:** Մեքենան բակ մտցրեց՝ այսօրվա մեջ այլևս չէր քշելու, կատվին **վրաանցնելով** տուն մտավ.... *(ԳԽ, էջ 161):*

ՎՐԱԽՄԵԼ, բ. **Վրայից խմել:**Մի կտոր պանիր կերավ լավաշի մեջ առած, օղու կեսը խմեց, հանքայինով **վրախմեց** *(ԳԽ, էջ 155):*

ՎՐԱՆԱԴՐԵԼ, բ. **Վրան զարկել, վրանային կացավայր ստեղծել: Բանակել:** Բայց երկարատև պատերազմի մեջ էինք,

նույն հարկի տակ ապրում էինք որպես կողք կողքի **վրանադրած** թշնամիներ*(ՆԳ, էջ 58):*

Տ

ՏԱՂՎԱՁԵՎ, մկբ. **Տավիղի ձևով՝ նմանությամբ:** Բլուրները .... փեղկվում են գերեզմանոցը **տաղվաձև** կիսող ավտոուղիներով....*(ԳՍ, էջ 15):*

ՏԱՐԱԴՐԱՄԱՓՈԽ, գ. **Տարադրամի առք ու վաճառքով զբաղվող անձ:** Նույն խնդրի մասին են խոսում տարադրամի փոխանակման կետերի ներկայացուցիչները՝ **տարադրամափոխները** *(Հմգ, news.am):*

ՏԱՐԱՅԱՎՈՐՈՒՄ, գ. **Տարայավորելը:** Մեղվածրարների այդպիսի **տարայավորումը** թույլ չի տալիս՝ լույսն ընկնի անմիջապես մեղուների վրա *(ԱՄ, ՍՄ, էջ 73):*

ՏԵԽՆՈԱԿՈՒՄԲ, գ. **Տեխնոլոգիական ակումբ:** Բեռլինի Berghain **տեխնոակումբն** աշխարհի ամենահայտնի գիշերային ակումբներից է *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԱՇՈՒՆ, գ. **Աշնանը սպասվելիք տեխնոլոգիական բնույթի իրադարձություն:** Ինեկոբանկի հետ **տեխնոաշունն** առատ է լինելու. NFC վճարումներ և ավելին *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեխնոլոգիական արդյունաբերություն:** ՀՀ բարձր **տեխնոարդյունաբերության** նախարարն ընդունել է արտակարգ և լիազոր դեսպանին *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԲԼՈԳ, գ. **Տեխնոլոգիական հարցեր լուսաբանող բլոգ:** Ըստ **տեխնոբլոգի՝** խորհրդավոր արտադրանքը կարող է նախատեսված լինել վիրտուալ ձայնային օգնականի համար

(Հմգ, news.am):

ՏԵԽՆՈԲԼՈԳԵՐ, գ. **Տեխնոլոգիական բլոգ վարող:** Նա այս մասին խոստովանել է **տեխնոբլոգերին** տված հարցազրույցում *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԳԻՏԱՓՈՐՁ, գ. **Տեխնոլոգիական գիտափորձ:** Հարավային Կորեայում անցկացրել են մահացած մարդկանց հետ վիրտուալ իրականությունում հանդիպելու **տեխնոգիտափորձ** (Հմգ, news.am)**:**

ՏԵԽՆՈԴԱՍԸՆԹԱՑ, գ. **Տեխնոլոգիական հարցերին վերաբերող դասընթաց:** Ընկերությունը նախատեսում է ամառային դպրոց բացել, որտեղ փորձառու դասավանդողները **տեխնոդասընթացներ** կանցկացնեն *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեխնոլոգիական ընկերություն:** Եվրահանձնաժողովը Facebook-ին, Twitter-ին, YouTube-ին, Microsoft-ին և ամերիկյան այլ **տեխնոընկերություններին** կոչ է արել հապշտապ միջոցներ ձեռնարկել «թշնամանքի լեզվի» դեմ *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԹԱԳԱՎՈՐ, գ. (դիպվ.)՝ **Տեխնոլոգիական ոլորտի առաջատար:** Tesla-ն Իլոն Մասկի համար **տեխնոթագավորի** (Technoking) պաշտոն է ավելացրել *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԹԵՐԱՀԱՎԱՏ, ած. (դիպվ.)՝ **Տեխնոլոգիական ոլորտի նկատմամբ թերահավատ:** Ի տարբերություն **տեխնոթերահավատների՝** մեքենաները կպայքարեն մեր դեմ Տերմինատորի նման *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեխնոլոգիական իշխանություն:** Դրանցից ամենահայտնիներն են՝ «Երկու դարաշրջանների միջև. Ամերիկայի դերը **տեխնոիշխանության** դարաշրջա-

նում» (1970) և «Շախմատային մեծ տախտակ. ամերիկյան գերակայությունը և նրա աշխարհառազմավարական հրամայականները» (1997) գրքերը *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՀԱՄԱՅՆՔ, գ. (դիպվ.): **Տեխնոլոգիական համայնք: Տեխնոհամայնքը** կարող է դրական փոփոխություններ բերել գյուղմրեցիների կյանքում *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՀՍԿԱ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական հսկա:** ԵՄ երկրները համաձայնեցրել են ամերիկյան **տեխնոհսկաների** իշխանությունը սահմանափակող կանոնների հանդեպ միասնական դիրքորոշումը *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՁԵՌՆԵՐԵՑ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական ոլորտի ձեռներեց:** Մի շարք **տեխնոձեռներեցների** հնարավորություն է տրվել մասնակցելու մրցույթների, գնալու Սիլիկոնյան հովիտ, ծանոթանալու անվանի ձեռներեցների և ինժեներների փորձին *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՃԱՄԲԱՐ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական ճամբար:** «Արմաթ» **տեխնոճամբարի** ավարտին տեղի ունեցավ գծին հետևող ռոբոտների եզրափակիչ մրցույթ *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՄԱՏԱԿԱՐԱՐ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական ոլորտի մատակարար:** Միշտ հպարտություն եմ զգացել հայկական այս **տեխնոմատակարարի** համաշխարհային հաջողությունների մասին լսելիս *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՄՇԱԿՈՒՅԹ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական մշակույթ:** Ներկայացվեցին գլոբալ հաջողության պատմություններ՝ շեշտադրելով ստեղծագործ **տեխնոմշակույթի** կարևորությունը երկրի տնտեսության զարգացման համար *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՆՇԱՆ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական նշան:** Այլմոլո-

բակային հետախուզության որոնումները ներառում են հնարավոր **տեխնոնշանների** հայտնաբերում *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՇԱԲԱԹ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական շաբաթ:** Կայացավ Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաների նախաձեռնությամբ կազմակերպած **տեխնոշաբաթը** *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՇԱՐԺ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական շարժ:** «Այբ» դպրոցի «**Տեխնոշարժ**» ակումբի աշակերտները ներկայացրին «Բարև ապագայից» նախագիծը *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՇՈՒԿԱ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական շուկա:** B2B մոդելով հայաստանյան ընկերությունները երբեք չեն կարող գրավել ԱՄՆ **տեխնոշուկան** *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՏԱՂԱՆԴ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական տաղանդ:** Հայաստանն իր չափերի ու բարձր **տեխնոտաղանդների** շնորհիվ կարող է փորձարկումների լավ պոլիգոն դառնալ *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՏՆՏԵՍԱԿԱՆ, ած. (հպվ.): **Տեխնոլոգիական և տընտեսական:** 3+ սերնդի էներգաբլոկներն ունեն բարելավված **տեխնոտնտեսական** ցուցանիշներ *(Հմգ,* news.am):

ՏԵԽՆՈՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական ցուցահանդես:** MWC 2023-ը կանցկացվի Բարսելոնայում, **տեխնոցուցահանդեսը** կմեկնարկի փետրվարին *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՔԱՂԱՔ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական քաղաք: Տեխնոքաղաքում** ռեզիդենտ լինելն ապահովելու համար պետք է բացել ռուսական ընկերություն *(Հմգ, news.am):*

ՏԵԽՆՈՖՈԲԻԱ, գ. (հպվ.): **Վախ տեխնոլոգիաներից:** Առանց **տեխնոֆոբիայի** ծայրահեղության մեջ ընկնելու՝ այսպիսի

չարամիտ ծրագրերն իսկապես սպառնալիք են ներկայացնում *(Հմգ, news.am):*

ՏԵՍԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Տեսական դարձնելը, տեսականի վերածելը:** Հոդվածի վերնագիրն ինքնին ակնարկում է վերլուծության **տեսականացումը**…*(ՍՍ[1], էջ 230):*

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, գ. **Տեսանկարահանելը**: …. Այս ամենը մասամբ տեղակայվում է իմ **տեսանկարահանումներում** *(ԳՍ, էջ 126):*

ՏԵՍԱՊՆԱԿ, գ. **Տեսասկավառակ:** Նախորդ տարիների հիմնական տեսանյութերը գրանցվեցին և ամփոփվեցին 70-ից ավելի **տեսապնակների** հավաքածուով *(Հմգ, eutyun.org):*

ՏԵՐԵՎԱՇՈՂՔ, գ. **Տերևների ստվերը, շողքը**: Քափրենիների շրշուն **տերևաշողքերը** գունազարդեցին նրա մշտապես հյուծված այտերը….*(ՅՍ, էջ 200):*

ՏՋԱՋՐԿՈՒՄ, գ. (գղտնտ.): **Տզերից մաքրելը:** Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք ապահովում են 98-100% **տզազրկման** արդյունավետություն *(ԱՍ, ՍՍ, էջ 108):*

ՏՋԱԹԱՓԵԼ, բ. (գղտնտ.): **Մաքրել տզերից: Տզաթափելու** համար, որը ժամանակին առաջարկել է մեղվաբուծական գիտահետազոտական կայանը .... *(ԱՍ, ՍՍ, էջ 107):*

ՏՋՈՐՍԻՉ, գ. (գղտնտ.): **Մեղվափեթակի տզերը որսալու թակարդ**: **Տզորսիչը** 7-10 օրը մեկ մաքրում են տզերից ու թափթփուկներից .... *(ԱՍ, ՍՍ, էջ 106):*

ՏԻԵԶԵՐԱԾԻՐ, ած. **Անծայրածիր, տիեզերածավալ:** Եվ նա կա, ով գիրը որպես **տիեզերածիր** հանրության ինքնությունը վկայելու մի բանաձևում ընկալի, ոչ ավելին *(Նորք, 2021, թիվ 1, էջ 97):*

ՏԻԵԶԵՐԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Տիեզերքը իբրև կենտրոն ունեցող**: Սառցապատումից հետո Մարդը՝ Կենաց Ծառի տեսքով դարձավ **տիեզերակենտրոն**՝ հավերժաբար վերարտադրվող և վերածնվող կենսատու աղբյուր *(ՍՍ[1], էջ 475):*

ՏԻԵԶԵՐԱՓՈՒԼ, գ. **Տիեզերքի փուլ՝ շրջան:** Փոքր Միերը ոչ միայն **տիեզերափուլը** փակող աստվածություն է, այլև նոր փուլ, նոր հարություն բերող աստվածություն *(ՍՍ[1], էջ 475):*

ՏՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Անտրամաբանություն, ոչ լիարժեք հասկացություն:** Ազգեր ու ժողովուրդները ունեն տիեզերական իրենց ժամանակը, որի հանդեպ հետ մնալ կամ ուշանալ **տհասկացություններն** ավելի քան էմպիրիկ են *(ՍՍ[1], էջ 252):*

ՏՂԱՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Տղամարդուն որպես կենտրոն ունեցող**: Աշխարհի **տղամարդակենտրոն** պատկերը հիմնված է տղամարդու տեսակետի վրա .... *(ԱԿ, էջ 95):*

ՏՂԱՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տղամարդակենտրոն լինելը**: .... Անգլիական երգիծական խոսույթում աշխարհի պատկերին հատուկ է **տղամարդակենտրոնությունը** .... *(ԱԿ, էջ 95):*

ՏՆԱՎԱՃԱՌ, ած. **Տների առք ու վաճառքով զբաղվող մարդ:** Սակայն վաղ առավոտից չստացվեց, որովհետև երեկոյան զանգեց **տնավաճառ** Խաչատուրը և խառնեց հաջորդ օրվա ծրագրերը *(ԳԽ, էջ 136):*

ՏՆՏԵՍԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Տնտեսական և մշակութային**: .... Կկարողանա ճանաչել .... ըստ պատմաազգագրական շրջանցման և **տնտեսամշակութային** տիպաբանության *(ՌՆ[1], էջ 7):*

Ց

ՑԱՅՏԱՆԿԱՐԱՅԻՆ, ած. **Ցայտուքներով արված նկար:** ….Ներկայացված էին նրա տարբեր տարիների և ոճերի գործերը. նատյուրմորտներից մինչև արդի-շինիչ և **ցայտանկարային** աշխատանքներ*(ՌԱ, էջ 63):*

Ու

ՈՒՂԵՄԱՔՐԻՉ, ած. **Ուղի մաքրելու սարք:** …. Ահռելի **ուղեմաքրիչով** շոգեքարշն իր մանուշակագույն վագոնները տանում էր փոթորկոտ տափաստանային գիշերվա միջով…. *(ՎՆ, էջ 42):*

ՈՒՌԵԴՈԲԱՐՁԻԿ, գ. (գղտնտ.): Բացատրությունը օրինակում: Ամռան ընթացքում բարենպաստ եղանակային պայմաններում վարակված բույսերի վրա առաջանում են ամառային փուլի նարնջագույն ուռուցիկ բարձիկներ՝ այսպես կոչված **ուռեդոբարձիկներ** …. *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 87):*

ՈՒՌԵԴՈՓՈՒԼ, գ. **Ուռեդոբարձիկների առաջացման ժամանակը: Ուռեդոփուլն** անչափ վտանգավոր է …. *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 87):*

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Ուսանողին որպես կենտրոն ունեցող: Ուսանողակենտրոն** քաղաքականությունը բարձրագույն կրթության օրինագծի առանցքում *(Հմգ, armedu.am):*

ՈՒՍԱՊԱՅՈՒՍԱԿ գ. **Ուսին կրելու պայուսակ**: Intel ընկերությունը կույրերի համար «խելացի» **ուսապայուսակ** է ստեղծել *(Հմգ, news.am):*

Փ

ՓԱՅՏԱԿԵՂԵՎ, գ. **Փայտի կեղև:** Անձրևը ծեծում էր փայլուն **փայտակեղևի** գույնի դագաղը, որի վրա յուղ էր լցվել *(ՅՄ, էջ 32):*

ՓԱՓԿԱՓԱԹԻԼ, ած. **Փափուկ փաթիլներով:** Արևը հալեցնում էր բյուրեղները, ձյունը թեթև ու **փափկափաթիլ** էր *(Կա յարան, 2022, թ. 4):*

ՓԵԹԱԿԱՏՈՒՆ, գ. Բացատրությունը՝ օրինակում: Յոթերորդ խրատով հանձնարարում է փեթակները **փեթակատներից** (ձմեռոցից) հանել այն ժամանակ, երբ շրջակայքի ձյունը հալվել է ….*(ԱԳ, էջ 96):*

ՓԵՂԿԱՊԱՏ ած. **Փեղկերով պատված:** Մոր խալաթն ուսերին էր գցում ու քաշվում **փեղկապատ** պատշգամբի իր անկյունը՝ կիսատ աշխատանքը շարունակելու համար *(ԴՄ, էջ 10):*

ՓՂԱՉԱՓ, ած. **Փղի չափսեր ունեցող**: Հասնելով դղյակի **փղաչափ** երկփեղկ դռանը՝ Լանգդընը ամբողջ ուժով հրեց *(ԴԲ, էջ 402):*

ՓՈԽԱՆՑՈՂԱԿԱՆ, ած. **Փոխանցումային:** …. Բանավեճերը ձևավորվում են երեք սերտորեն կապված երկճյուղավորումների հենքի վրա՝ …. **փոխանցողականն** ընդդեմ ծիսական տեսանկյան *(ՁՍ, էջ 9):*

ՓՈՂԱՏՈՒ, գ. **Փող տվող, հաճախորդ:** …. Հայացքը Հարութի վրա էր պահել, բայց նաև չէր մոռանում աջուձախ թեքել, հանկարծ պոտենցիալ **փողատու** չսպրդի *(ԳԽ, էջ 144):*

ՓՈՇԵՏՈՒ, ած.**Հարուստ ծաղկափոշի ունեցող:** Ծառերից լավ նեկտարատու և **փոշետու** են լորենին, ծիրանենին ….*(ԱԳ, էջ 26):*

ՓՈՐՁԱԸՆՏԱՆԻՔ, գ. **Ուսումնասիրության համար նախատեսված մեղվաբնտանիք:** Փորձից առաջ և հետո դիտվում էր **փորձաբնտանիքների** վիճակը*(ԱՄ, ՍՄ, էջ 127):*

ՓՈՐՁՆԱՀԱՍՏԱՏՈՒՄ, գ. **Փորձի միջոցով հաստատելը:** .... Թափոնները դասակարգվում են ըստ վտանգավորության աստիճանի, որը գնահատվում է նյութերի սանիտարահիգիենիկ ցուցանիշներով կամ **փորձնահաստատման** ճանապարհով *(ԹՍ և այլք, էջ 22)*:

Ք

ՔԱՂԱՔԱՉԱՓ, ած. **Քաղաքի չափսեր ունեցող**: Տե՛ս ԿՈԹՈՂԱԿԵՐՏ-ի օրինակը:

ՔԱՂՑՐԱԹԱԽԾՈՏ, ած. **Լուսավոր թախիծ լեցուն: ....**Վստահաբար հենց այս պահին էլ առկայծում են անցյալի այսպիսի աննշան, բայց **քաղցրաթախծոտ** դրվագներ *(Նորք, 2021, թիվ 1):*

ՔԱՅՔԱՅԱՄԱՇՎԱԾ, ած. **Քայքայվելով մաշված:** Մայր մտնող արևը լուսավորել էր լճակը և Ոսկե տաճարի շողքն ուղիղ գցել **քայքայամաշված** բրոնզե հին հայելու նմանվող մակերևույթին*(ՅՄ, էջ 25):*

ՔԱՐԱՅՐԱԿԵՐՊ, ած. **Քարայրի կերպ՝ ձև ունեցող**: Տաճարի **քարայրակերպ** շինությունը 60000 հավատացյալ էր տեղավորում .... *(ԴԲ, էջ 121):*

ՔԱՐԱՆՁԱՎԱՇՈՒՆՉ, ած. **Քարանձավին բնորոշ:** Լանգդընը սովորականի պես սառնություն զգաց՝ մտնելով **քարանձավաշունչ** սրահը .... *(ԴԲ, էջ 232):*

ՔԱՐԱՎԵՄ, գ. **Վիմաքար:** Մովսես Խորենացին Բիայնայի մայրաքաղաք Տուշպայի կառուցմանը վերաբերող ավանդազրույցում **քարավեմերի** հարթեցումը նմանեցնում է տախտակը մոմով հարդարելուն *(ԱԳ, էջ 33):*

ՔԱՐՈԶՉԱԲԱՆ, գ. **Քարոզչությամբ զբաղվող**: ….էդ **քարոզչաբաններից** մեկը Քարվաճառի ոչմիթիզական հռչակագիրը ստորագրողներից մեկն է *(ՉԻ, 16.02.2023):*

ՔԵՌԱՍՊԱՆ, ած. **Մորեղբորը սպանող:** «**Քեռասպանի** նախաճաշը»՝ ինքն իրեն հեգնեց, գնաց սենյակ, նստեց քեռու մոտ *(ԳԽ, էջ 133):*

ՔԵՐԱԳԾԵԼ, բ. **Քերելով գծեր քաշել:** Գրքանեցուկներից մեկի վրա մեջբերում էր **քերագծված** …. *(ԴԲ, էջ 52):*

ՔՆԱՐԱՓԵՏՐԱՁԵՎ, ած. **Քնարի և փետուրի ձև ունեցող:**

Ստորին տերևները խոշոր են, հյութալի, կոթունավոր, **քնարափետրաձև** կտրտված *(ԱՄ, ՍՄ, էջ 149):*

ՔՍՈՒՔԱՊԱՏՎԵԼ, բ. **Քսուքով պատվել՝ ծածկվել:** Փորը ներս քաշվեց, կարճ պիջակը երկարեց, փոշոտ կոշիկները **քսուքապատվեցին**….*(Կայարան, 2022, թ. 3):*

Օ

ՕԾԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Օծանելիքի արտադրություն**:

Ինչ՞ էր մնում **օծանագործությամբ** զբաղվող Համբերթին*(ՎՆ, էջ 64):*

ՕՂԱԶԱՐԴ, գ. **Օղակաձև զարդ**: …. Դրանք շողարձակում էին նեցկե **օղազարդի** պես*(ՅՄ, էջ 178):*

ՕՂԱՊՏՈՒՅՏ, ած. **Օղականման պտույտ:** Նախապարտեզի կանաչապատ **օղապտույտի** կենտրոնում առավոտյան արևով

էր ցողվում …. արմավենին*(ՅՄ, էջ 160):*

ՕՍԿԱՐԱՓԱՅԼ, ած. **«Օսկար»-ի փայլ ունեցող:** Փոխարենը՝ այսպիսի գեղեցկությամբ և աղոտ **օսկարափայլով** նա հանրաճանաչության մեջ մի նոր հարթություն կտեղափոխեր Սարոյին, հետո էլ՝ իրեն*(Կայարան, 2022, թ. 3):*

ՕՍՄԱՆԱԳԵՏ, գ. **Օսմանագիտության մասնագետ**: …. Հիմնադրվել է …. **օսմանագետ** Հիթ Լոուրիի գլխավորած …. ինստիտուտը …. *(Ատ. խոսք, էջ 81):*

ՕՎԿԻԱՆՈՍԱԲԱՆ, գ. **Օվկիանոսագետ:** Տեղի **օվկիանոսաբանների** հաղորդմամբ վնասվել է մոտ 4000 քմ ժայռ *(Հմգ, news.am):*

ՕՎԿԻԱՆՈՍԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Օվկիանոսագիտական:** Արկտիկական ծովերում **օվկիանոսաբանական** գործընթացների ուսումնասիրության մեջ ձեռքբերումների համար մրցանակի է արժանացել *(Հմգ, news.am):*

ՕՐԱԿՌԻՎ, ած. **Ամենօրյա կռվով ստացվող:** Տե՛ս ՀԱՅՊԱՀԱՆՋՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՕՐՈՐՈՑԱԲՈՒՆ, գ. Բացատրությունը՝ օրինակում: Այն ձմեռում է հարսնյակ փուլում՝ հողում պատսպարված խցում՝ այսպես կոչված **օրորոցաբնում** *(ԱԳ, ՊԳ, ՆԱ, էջ 33):*

Ֆ

ՖԵՅՍԲՈՒՔԵԼ, բ. (խսկց.), **Facebook սոցցանցում որոշակի գործողություն կատարել:** Հայերը սիրում են քյաբաբ ուտել, դիվանի վրա նստել և **ֆեյսբուքել**, բայց ալպինիզմ չեն սիրում *(Հմգ, news.am):*

ՖԻԼՄԱԴԻՏՈՒՄ, գ. **Ֆիլմի դիտում:** Միջոցառումների ծրագիրը ներառում է համերգներ, ցուցահանդեսներ, **ֆիլմադիտումներ՝** նվիրված մշակույթի ակնառու գործիչներին *(Հմգ, news.am):*

ՖՐԵԶՆՈՅԱԲՆԱԿ, ած. **Ֆրեզնոյում բնակվող:** Նրանց մասին չեմ հիշատակելու, բացառությամբ Սերժ Բեսոյան անունով **ֆրեզնոյաբնակ** մեկի, որն ամուսնացած էր մեծահարուստ Ավագյանի աղջկա հետ *(ԳՅ, էջ 9):*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա.ԳՐՔԵՐ

ՆԳ Նենսի Գրիգորյան, Զաբել, Երևան, ՀԳՄ հրատարակչություն, 2007:

ԳԽ Գուրգեն Խանջյան, Երևան, Անտարես, 2022:

ԱՎ- Արտակ Վարդանյան, Հոգու և կարոտի ճամփանեռով, Եր., Էդիթ Պրինտ, 2022:

Ատ. խոսք, Նաիրա Պողոսյան, Վարուժան Գեղամյան, Մարիամ Մելքոնյան, Արեն Պետունց, «Ատելության խոսքի» դասական թիրախները. հայերն ու Հայաստանը թուրքական և ադրբեջանական մեդիա դաշտում 2019-2021 թվականներին, Եր., ԵՊՀ հրատ, 2022:

Հայ. հարց Ռուբեն Մելքոնյան, Նաիրա Պողոսյան, Հայկական հարցն ու հայոց ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (19-րդ դարի վերջ-20-րդ դարի կեսեր), Եր., ԵՊՀ հրատ., 2022:

ՌՆ[1] Ռաֆիկ Նահապետյան, Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, Եր., ԵՊՀ հրատ., 2022:

ՌՆ[2] Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Եր., ԵՊՀ հրատ., 2018:

ՀՄ Հայկ Մարտիրոսյան, Իրավանորմերի որակի բարելավման հիմնախնդիրներն ու ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ԵՊՀ հրատ, 2023:

ԱԿ Աննա Կնյազյան, Լեզվական և հանրամշակութային գենդերային դրսևորումները անգլիական երգիծական խոսույ-

թում, Եր., ԵՊՀ հրատ, 2022:

ԶՍ Զարուհի Սարգսյան, Մեդիաազդեցության ժամանակակից տեսություններ, Եր., ԵՊՀ հրատ., 2022:

ԴԲ Դեն Բրաուն, Հրեշտակներ և դևեր, թարգմ.՝ Արամ Արսենյանի, Եր., «Զանգակ» հրատ., 2023:

ՍՍ[1] Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք 6-րդ, Եր., «Վաչագան Բարեպաշտ», 2015:

ՎՍ[2] Վահան Սաղաթելյան, Երեք վիպակ, Եր., Հայաստան հրատ., 2008:

ՎՍ[1] Վահան Սաղաթելյան, Տոհմի կանաչ ծառը, Եր., Սովետ. գրող, 1988:

ԴՄ Դավիթ Մուրադյան, Հրաժեշտ, ՀԲԸՄ Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամ, 1994:

ԱԶ Ալմաստ Զաքարյան, Եղիշե Չարենց, գ.3, Եր., Ֆենոմեն, 2008:

ՅՄ Յուկիո Միշիմա, Ոսկե տաճարը, ճապ. թարգմ. Լ.Խանսուլյան, Եր., Անտարես, 2023:

ՎՆ Վլադիմիր Նաբոկով, Լոլիտա, թարգմ. Զ.Բոյաջյան, Եր., Անտարես, 2017:

Սեդ և Մյուլ, Կլաուդիա Սեդոֆֆ և Մայքլ Մյուլլեր, Ջրային ռեսուրսների կառավարում…., թարգմ. Ա. Մխիթարյան, ՋԻՆԶ, 2009:

ԲՆ Բորիս Նեմցով, Խռովարարի խոստովանությունը, թարգմ. Մ.Մարտիրոսյան, Եր., Գրատուն, 2019:

ՀԱ Հովիկ Աֆյան, Քաղցր կյանք, Եր., Անտարես, 2021:

ԳՍ Գրիշ Սարդարյան, Եսավ, Եր., Անտարես, 2020:

ՆԱ Նորայր Ադալյան

ԳՅ Գուրգեն Յանիկյան, Բանտարկյալի ձայնը, Եր., Ոսկան Երևանցի, 2022:

ԱԳ, ՊԳ, ՆԱ Ավագյան Գ., Պետրոսյան Գ., Ներսիսյան Ա., Ինտեգրացված պայքար Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել տարածված ու վնասակար հիվանդությունների և վնասատուների դեմ, Եր., 2017:

ԱԳ Գասպարյան Ա. Օ., Մեղվապահությունը Հայաստանում, Եր., 1989:

ԹՍ, ՍԼ Թամոյան Ս., Սիմոնյան Լ., Կլիմայակայուն խելամիտ գյուղատնտեսություն, Եր., ԶարտՊրինտ, 2021:

ԹՍ և այլք Թամոյան Ս. և այլք, Գյուղատնտեսական թափոնների կայուն կառավարում, Եր., ԶարտՊրինտ, 2021:

ԱՄ, ՍՄ Մարկոսյան Ա. Հ., Մարկոսյան Ս. Ա., Մեղվաբուծություն, Եր., 2000:

ՁԵռնարկ Շլաուդերեր Ռ. և այլք (թարգմ.՝ Հայկ Համբարձումյան), ՁԵռնարկ ուսանողների պրակտիկայի, գյուղատնտեսական տվյալների հավաքագրման և ուսանողակենտրոն ուսուցման լավագույն փորձի վերաբերյալ, Եր., ՀԱԱՀ, 2021:

Բ. Ամսագրեր և հանդեսներ

Նորք, 2021, թիվ 1, 2
Կայարան

Գ. Լրագրեր

ԳԹ – Գրական թերթ

Իր. – Իրատես
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՉԻ - Չորրորդ Իշխանություն
Ազգ - Ազգ

Դ. Այլ աղբյուրներ

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր.,Լույս, 1973:
3. Էլոյան Ս.Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Իսպիրյան Մ. Ս., Մարզանունների բացատրական բառարան, Եր, Հայաստան, 1984:
6. Խլղաթյան Ֆ.Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան,1982:
7. Ղարիբյան Ա. Ս., Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1982:
8. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ. հրատ., հհ. 1-3, 1944, հ.4, 1945:
9. Մեյթիխանյան Փ.Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
10. Մեսրոպեան Հ., Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000:
11. Նոր բառեր. Ա պրակ (Գալստյան Ա.Ս., Հովսեփյան Գ.Կ., Սահակյան Ա.Գ., Սահինյան Լ.Ե.), Եր., 2015:
12. Նոր բառեր. Բ պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սահակյան Ա.Գ., Սահինյան Լ.Ե.), Եր., 2016:

13. Նոր բառեր. Գ պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սահակյան Ա.Գ.), Եր., 2017:
14. Նոր բառեր. Դ պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սահակյան Ա.Գ., Սահինյան Լ.Ե.), Եր., 2018:
15. Նոր բառեր. Ե պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մուշեղյան Ա. Հ., Սահակյան Ա.Գ.,), Եր., 2020:
16. Նոր բառեր. Զ պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սարգսյան Ն. Մ.), Եր., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:
17. Նոր բառեր. Է պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի. Ա., Մկրտումյան Ա. Ա., Սարգսյան Ն. Մ.), Եր., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:
18. Չիլինգարյան Դ.Ս., Երզնկյան Լ.Ե., Պաշտպանական-ան-վտանգային տերմինների բացատրական հայերեն-ռու-սերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
19. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Հացա-գործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովումյան Հ.Գ., Սրվանձտյան Գ.Հ.), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
20. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայե-րեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2000:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ……...…5

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ …….. 6

ԲԱՌԱՑԱՆԿ……. 8

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ……..133

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ…….. 137

Գալստյան Անահիտ Սերգեյի, Բաղրամյան Վանուհի Մկրտչի, Հակոբյան Ֆրիդա Արտաշեսի, Հովսեփյան Գայանե Կառլենի, Մարգարյան ԻնգաԱշոտի, Մկրտումյան Արմինե Արամայիսի, Սարգսյան Նռանե Մանվելի

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ը պրակ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Հ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի